# Ապաստանի դիմումների արդյունավետ քննությունը. Գործնական առաջարկները և գործելակերպերը



© UNHCR/A. Sakkab

ՄԱԿ ՓԳՀ, 2022թ.

Սույն փաստաթուղթը նախատեսված է ընդհանուր օգտագործման համար: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Թույլատրվում է կատարել ոչ առևտրային նպատակներով վերարտադրումներ և թարգմանություններ՝ սկզբնաղբյուրի պարտադիր նշումով:

Շապիկի նկարը՝ © ՄԱԿ ՓԳՀ/Աննի Սակկաբ

© ՄԱԿ ՓԳՀ, 2022թ.

# Ամփոփ նկարագիրը

Ապաստանի տրամադրման ազգային համակարգերը վերջին մի քանի տարիների ընթացքում գնալով ավելացող ապաստանի դիմումների և կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած մարտահրավերների պատճառով կանգնել են ծանրաբեռնվածության առջև: Եթե պետությունները ջանքեր չգործադրեն իրենց համակարգերն ուժեղացնելու ուղղությամբ, ապա լուրջ վտանգ կա, որ կուտակված բազում չքննված դիմումների թիվը կշարունակի աճել: Կուտակված բազում չքննված ապաստանի դիմումները և ապաստանի հայցերի քննության գործընթացի ձգձգումները կարող են խաթարել հանրային վստահությունն ապաստանի տրամադրման համակարգի նկատմամբ և էլ ավելի դժվարացնել միջազգային պաշտպանության կարիք չունեցող անձանց հայրենադարձումը:

Այս աշխատության հիմնական նպատակն է փաստաթղթավորել ապաստանի տրամադրման գործընթացի կառավարման առաջադեմ գործելակերպեր ունեցող երկրներում ապաստանի հարցերով զբաղվող ներպետական մարմինների կողմից ապաստանի դիմումների արդյունավետ քննությունն ապահովելու համար նախաձեռնված համապատասխան տարբերակներն ու միջոցները՝ միևնույն ժամանակ պահպանելով պաշտպանության հիմնական սկզբունքները և պատշաճ իրավական գործընթացի ստանդարտները: Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը (ՄԱԿ ՓԳՀ) խրախուսում է այդ լավագույն գործելակերպերի որդեգրումը, որոնք հետագայում կարող են տեղայնացվել տարածաշրջանային կամ ազգային մակարդակներում՝ որպես բնակչության աճող կամ մեծածավալ տեղաշարժերին պետությունների գործնական և գործառնական արձագանքման միջոցների մաս:

Այս աշխատությամբ խրախուսվում է գնալով ավելացող լավագույն գործելակերպերի կարևորությունը, որոնցով ապաստանի հարցերով զբաղվող ներպետական մարմինները կարող են ուղղորդվել՝ միջազգային պաշտպանությունը երաշխավորելու և պատասխանատվությունը կիսելու հրամայականին համապատասխան: Այս մոտեցումը համահունչ է Փախստականների վերաբերյալ գլոբալ պայմանագրին (ՓԳՊ) և դրա հատուկ նախաձեռնություններից մեկին՝ Ապաստանի համակարգի կարողությունների աջակցման խումբ (ԱՀԿԱԽ) մեխանիզմին:

Ինչպես ցույց են տալիս այս աշխատության մեջ Կանադայից, Իտալիայից, Իսպանիայից, Շվեդիայից և Շվեյցարիայից բերված օրինակները, ապաստանի դիմումները կարելի է արդյունավետորեն քննել համակարգի կառուցվածքի բարելավման, նորարարական գործիքների ու միջոցների և համակարգային բնույթի խնդիրների գործնական լուծման միջոցով: Համապատասխան դերակատարների, ինչպես օրինակ՝ սահմանային հսկողության ծառայության, ոստիկանության և ապաստանի հարցերով զբաղվող մարմինների միջև աշխատանքների սերտ համակարգումը, ինչպես նաև ապաստանի տրամադրման ընթացակարգի սկզբից իրավաբանական օգնություն տրամադրող անձանց և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունն այդ գործընթացին կարող են այն առավել արագ ու արդար դարձնել: Հաշվառման համապատասխան գործընթացների ներդնումը, տվյալների առաջնային բեռնումն ու դրանց կառավարումը, թվային տեխնոլոգիաների առավել լայն կիրառումը, ինչպես նաև փոխգործելի ու ինտեգրված համակարգերի ընդունումը համարվում են արդարության ու արդյունավետության ապահովման հավելյալ միջոցներ:

Ապաստանի դիմումների արդյունավետ կառավարման մյուս տեխնիկան ներկայացված է այս աշխատության՝ գործերի տեսակավորմանը վերաբերող օրինակներով, ինչը կարող է նվազեցնել նոր ժամանող անձանց, ինչպես նաև առկախ գործերի հետևանքով ապաստանի տրամադրման համակարգերի վրա ծանրաբեռնվածությունը: Տեսակավորման գործընթացում ապաստանի հարցերով զբաղվող մարմինները տարբեր չափանիշներով վերլուծում են գործերի հոսքերը և դիմումներն

ուղղորդում տարբեր ընթացակարգերի շրջանակներում քննության:

Ավելին, աշխատության մեջ ներկայացված են այն առանցքային սկզբունքներն ու ընթացակարգային ստանդարտները, որոնք պետք է հաշվի առնվեն ապաստանի տրամադրման համակարգերի կառուցվածքների մշակման և գործերի կառավարման գործընթացներում:

Աշխատության մեջ բերված օրինակները ցույց են տալիս, որ հնարավոր է ստեղծել ապաստանի դիմացկուն և հարմարվողական համակարգեր՝ միննույն ժամանակ պահպանելով գործերի քննության գործընթացում արդարությունն ու անաչառությունը: Ուժեղ կառույցների առկայությունը հնարավորություն կտա պետություններին արդյունավետորեն լուծել կուտակված բազում չքննված գործերի հարցը՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով ամբողջ աշխարհում լայնածավալ բռնի տեղահանման համատեքստում նոր ժամանող անձանց առնչությամբ ստեղծված իրավիճակներին:

# Բովանդակություն


Ամփոփ նկարագիրը ........ 3
Ընդհանուր տեղեկություններ և հիմնավորում ........ 5
**I.** Հաշվառումը, տվյալների առաջնային բեռնումը և տվյալների կառավարումը ........ 8
**II.** Գործերի տեսակավորումը և դրանց քննության տարբերակված մեթոդները ........ 16
**III.** Պատշաճ իրավական գործընթացի ստանդարտները ........ 29
**IV.** Արդյունավետ քննությանը վերաբերող համակարգային խնդիրները ........ 34
**Եզրակացություն** ........ 44
Հավելված 1. Գծապատկեր ........ 45
**Հավելված 2. Հապավումներ** ........ 46

# Ընդհանուր տեղեկություններ և հիմնավորում

1. Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գնահատականի համաձայն՝ 2020 թվականի վերջի դրությամբ 34,2 միլիոն մարդ բռնի տեղահանվել է իր երկրից՝ հետապնդումների, հակամարտությունների, մարդու իրավունքների խախտումների և հասարակական կարգը լրջորեն խաթարող իրադարձությունների պատճառով:[1] Ամբողջ աշխարհում ապաստանի տրամադրման ազգային համակարգերը կանգնել են մեծ թվով ապաստանի դիմումների քննության խնդրի լուծման առջև:[2] Նույնիսկ 2020 թվականին կորոնավիրուսային համավարակով պայմանավորված տեղաշարժի սահմանափակումների պատճառով ապաստանի նոր, անհատական դիմումների թվի պատմական (45 տոկոս) անկման պայմաններում կուտակված բազում չքննված գործերի թիվը շատ երկրներում շարունակում էր աճել: Եթե պետությունները հրատապ կերպով չհզորացնեն ապաստանի տրամադրման իրենց համակարգերը, ապա լուրջ վտանգ կա, որ կուտակված բազում չքննված գործերի հետ կապված իրավիճակը դուրս կգա վերահսկողության սահմաններից, եթե նոր դիմումների թիվը հասնի մինչև կորոնավիրուսային համավարակն արձանագրված թվերին: Ապաստանի հայցերի քննության գործընթացի ձգձգումները, որոնց պատճառով ապաստան հայցողները տարիներով, առանց որևէ որոշակիության սպասում են իրենց ապաստանի հայցերի վերաբերյալ վերջնական որոշման կայացմանը, կարող է անդառնալի վնաս հասցնել ապաստանի տրամադրման արդեն իսկ փխրուն համակարգերին: Ապաստանի դիմումների քննության գործընթացի ձգձգումները կարող են նաև խաթարել այս համակարգերի նկատմամբ հանրային վստահությունը և էլ ավելի դժվարացնել միջազգային պաշտպանության կարիք չունեցող անձանց հայրենադարձությունը, կամ նրանց համար այլ լուծումներ գտնելու գործընթացը:[3]

2. 2020 թվականի վերջի դրությամբ ապաստանի տրամադրման առկախ գործերի թիվը՝ մոտ 4,15 միլիոն, փաստացի մնացել է անփոփոխ՝ 2019 թվականի հետ համեմատած: Ուշադրության արժանի բացառություններից, երբ երկրներին հաջողվել է 2020 թվականին կրճատել առկախ, կուտակված բազում չքննված գործերի թիվը, եղել են Գերմանիան (66,100 կամ 21 տոկոսով պակաս), Հունաստանը (43,200 կամ 41 տոկոսով պակաս) և Կանադան (18,970 կամ 22 տոկոսով պակաս): Որոշ երկրների՝ ապաստանի հարցերով զբաղվող մարմիններին հաջողվել է 2020 թվականի ընթացքում բարձրացնել իրենց կատարողականը՝ կայացնելով փախստականի կարգավիճակի վերաբերյալ ավելի էական որոշումներ, քան 2019 թվականին: Այդ երկրներից են Բրազիլիան (21 տոկոսով ավելի՝ կայացնելով 26,800 որոշում),[4] Մեքսիկան (49 տոկոսով ավելի՝ կայացնելով 22,500 որոշում)[5] և Նիդեռլանդները (16 տոկոսից ավելի՝ կայացնելով 12,500 որոշում): Այսքան մեծ թվով որոշումների կայացումը պայմանավորված է դիմումների հեռավար քննության համար հարմարեցված միջոցների և նորարարական գործիքների կիրառմամբ և, որն ամենակարևորն է, քննության պարզեցված մեխանիզմների կիրարկմամբ:

3. Հիմնվելով կուտակված գործերի թիվը կրճատելու և դրանք արդյունավետորեն քննելու համար համակարգերի դիմացկունության և հարմարվողականության օրինակների վրա՝ այս աշխատությունը գործնական առաջարկներ է տալիս պետություններին խնդիրների, գործելակերպերի և իրենց ապաստանի համակարգերն էլ ավելի ամրապնդելու և կատարողականն էլ ավելի բարձրացնելու գործիքների վերաբերյալ՝ միևնույն ժամանակ պահպանելով գործերի քննության գործընթացում արդարությունը, որակն ու անաչառությունը: Այս աշխատության մեջ ներկայացված առաջարկները հիմնված են ապաստանի տրամադրման գործընթացի կառավարման այնպիսի գործելակերպեր ունեցող երկրների լավագույն փորձի վրա, որոնցով իրականացվել են նորարարական նախաձեռնություններ և փոփոխություններ կատարվել քաղված դասերի հիման վրա, ինչը կարող է

լինել ոգեշնչման աղբյուր և կրկնօրինակվել այլ համակարգերում:[8] Այս աշխատությունը ծառայում է որպես «զարգացող փաստաթուղթ», որում ժամանակի ընթացքում կավելացվեն ապաստանի տրամադրման այլ ազգային համակարգերի գործելակերպեր: Աշխատությունը հիմնված է նաև ՄԱԿ ՓԳՀ-ի փորձառության և ամբողջ աշխարհի բազմաթիվ ազգային համակարգերի հետ աշխատանքի արդյունքների, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի՝ իր լիազորությունների շրջանակներում կարգավիճակի որոշման ընթացակարգերի իրականացման հարցում կուտակած փորձի վրա:

1 ՄԱԿ ՓԳՀ, «Գլոբալ միտումներ» զեկույց. *Բռնի տեղահանումը 2020 թվականին*, www.unhcr.org/60b638e37/unhcr-global-trends-2020:

2 Ապաստանի տրամադրման ազգային համակարգը ներառում է բոլոր ռազմավարությունները, օրենքները, քաղաքականությունները, գործողությունների ծրագրերը, ռեսուրսները և կառույցները, որոնց արդյունքում ձևավորվում է ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ պետության արձագանքը: Այս աշխատության մեջ շեշտը դրվում է ապաստանի համակարգի այն հայեցակետերի վրա, որոնք վերաբերում են հատկապես ընդունելությանը, հաշվառմանը և կարգավիճակի որոշմանը:

3 ՄԱԿ ՓԳՀ, «Գլոբալ միտումներ» զեկույց. *Բռնի տեղահանումը 2020 թվականին*, www.unhcr.org/60b638e37/unhcr-global-trends- 2020, էջ 43:

4 Բրազիլիայի լավագույն գործելակերպերի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս *ՄԱԿ ՓԳՀ-ի ԱՀԿԱԽ-ի պորտալը. պարզեցված ընթացակարգեր*, https://acsg-portal.org/tools/55071/:

5 Մեքսիկայի լավագույն գործելակերպերի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս *ՄԱԿ ՓԳՀ-ի ԱՀԿԱԽ-ի պորտալը. պարզեցված ընթացակարգեր*, https://acsg-portal.org/tools/55487/, *պարզեցված ընթացակարգեր*, https://acsg-portal.org/tools/mexico-expedited-procedures/ և *Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների [ԾԵԿ] հարցերով ստորաբաժանման ստեղծում*, https://acsg- portal.org/tools/mexico-creation-of-the-coi-unit/:

6 ՄԱԿ ՓԳՀ-ի օպերատիվ տվյալների պորտալ, *կորոնավիրուսային համավարակի հետ կապված հարցերի հարթակ, ժամանակավոր միջոցներ և պաշտպանության վրա ազդեցություն* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://data2.unhcr.org/en/dataviz/127:

7 Հարմարվողականությունը վերաբերում է ապաստանի հարցերով զբաղվող կառույցները հարմարեցնելու նախապատրաստական աշխատանքներին՝ կանխատեսելու համար արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները: Որպեսզի հարմարվողականությունը կրի մշտական բնույթ, կառույցը պետք է ունենա այնպիսի համակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի գնահատել ցանկացած փոփոխության դրական և բացասական ազդեցությունները՝ միաժամանակ ապահովելով շարունակական բարելավումներ: Տե՛ս Հարկադիր միգրացիայի վերաբերյալ ակնարկի 65-րդ հրատարակությունը, *«Կորոնավիրուսային համավարակի ժամանակաշրջանում ինստիտուցիոնալ հարմարվողականություն» աշխատությունը* (էջ 56), 2021 թվականի նոյեմբեր, www.fmreview.org/sites/fmr/files/FMRdownloads/en/recognising-refugees.pdf:

8 Ապաստանի տրամադրման ազգային համակարգերում ներդրված լավագույն գործելակերպերի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս *ՄԱԿ ՓԳՀ-ի ԱՀԿԱԽ-ի պորտալը*, https://acsg-portal.org/tools- and-reference-material/:

UNHCR
The UN Refugee Agency

4. Աշխատության նպատակն է աջակցել պետություններին՝ իրենց տարածքներում ապաստան հայցող անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու իրենց պարտավորությունները[9] կատարելու հարցում, միաժամանակ դիտարկելով նաև միգրացիոն տեղաշարժի հետ կապված առավել լայն հարցերի լուծման համապատասխան մեխանիզմները:[10] Այս աշխատության մեջ ներկայացված մոտեցումը համահունչ է Փախստականների վերաբերյալ գլոբալ պայմանագրին (ՓԳՊ), որի նպատակն է, ի թիվս այլնի, ուժեղացնել փախստականների նկատմամբ կիրառվող ռեժիմների աշխատանքը և ընդգծել միջազգային պաշտպանության տրամադրման հայցերի վերաբերյալ արդար ու արդյունավետ որոշումների անհրաժեշտությունը՝ կիրառելի միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին համապատասխան:[11,12]




5. Աշխատությունն ունի չորս ուղղություն (տե՛ս Հավելված 1-ի գծապատկերը): (i) հաշվառում, հավաքված տվյալների առաջնային բեռնում և տվյալների կառավարում, (ii) գործերի տեսակավորում և դրանց քննության տարբերակված մեթոդներ, (iii) պատշաճ իրավական գործընթացի ստանդարտներ և (iv) գործերի արդյունավետ քննության համար համակարգային արձագանքման միջոցներ:

---

9 Ինչպես նշվում է ՄԱԿ ՓԳՀ-ի «*Միջազգային պաշտպանության էքստերնալիզացիայի*» մասին անոտացիայի մեջ, միջազգային պաշտպանության կարիքները վերհանելու և գնահատելու հիմնական պատասխանատվությունը կրում է այն պետությունը, որտեղ ապաստան հայցողը ժամանում և պաշտպանություն է հայցում: Էքստերնալիզացիայի հետ կապված հարցերը չեն հանդիսանում այս աշխատության ուսումնասիրության առարկա: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «*Միջազգային պաշտպանության էքստերնալիզացիայի*» մասին անոտացիան, 2021 թվականի մայիսի 28, www.refworld.org/docid/60b115604.html:

10 Միգրացիոն տեղաշարժերի հետ կապված լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Փախստականների պաշտպանություն և խառը միգրացիա. *տասը հայեցակետով գործողությունների պլան*» հրապարակումը, 2016 թվականի խմբագրություն, www.refworld.org/docid/5b1a38374.html:

11 Ապաստանի տրամադրման արդար և արդյունավետ ընթացակարգերի կարևորությունը ճանաչվել է ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտեի կողմից, այդ թվում՝ իր Եզրակացություններում, որոնցով առաջարկվում է, որ պետությունների՝ ապաստանի տրամադրման ընթացակարգերը պետք է բավարարեն մի շարք հիմնական պահանջներ. EXCOM եզրակացություն թիվ 71 (XLIV), 1993թ., պարբերություն (i), EXCOM եզրակացություն թիվ 74 (XLV), 1994թ., պարբերություն (i), EXCOM եզրակացություն թիվ 81 (XLVII), 1997թ., պարբերություն (h), EXCOM եզրակացություն թիվ 82 (XLVIII), 1997թ., պարբերություն (d)(iii), EXCOM եզրակացություն թիվ 85 (XLIX), 1998թ., պարբերություն (q) EXCOM եզրակացություն թիվ 103 (LVI), 2005թ., պարբերություն (r):

12 *Ապաստանի համակարգի կարողությունների աջակցման խումբ (ԱՀԿԱԽ) մեխանիզմը*, որն ստեղծվել է Փախստականների վերաբերյալ գլոբալ պայմանագրի շրջանակներում որպես հատուկ նախաձեռնություն, աջակցություն է տրամադրում առանձին երկրներին՝ իրենց ապաստանի տրամադրման համակարգի կարողությունների կարիքները բավարարելու համար: ԱՀԿԱԽ-ի շրջանակներում օժանդակություն ցուցաբերելու պետության երաշխավորումները կամ դիմումները համընկնում են օժանդակության համապատասխան երաշխավորումներին կամ առաջարկներին: Այն երկրները, ինչպիսիք են Կանադան և Շվեյցարիան, որոնց լավագույն գործելակերպերը ներկայացված են այս աշխատության մեջ, երկկողմ կամ այլ բազմակողմ նախաձեռնությունների միջոցով այլ պետությունների առաջարկում են նաև կարողությունների հարցում աջակցություն, տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://acsg-portal.org/:

# I. Հաշվառումը, տվյալների առաջնային բեռնումը և տվյալների կառավարումը

| | Առաջնային բեռնում/Հաշվառում | | | Սքրինինգ | Ծառայությունների մատուցում սկզբնական փուլում | |
|---|---|---|---|---|---|---|
| Նույնականացում | • Ինքնության հաստատում<br>• Անհատական տվյալներ<br>• Ընտանեկան հարաբերություններ<br>• Փախուստի պատճառներ | • Ուղևորության երթուղի<br>• Մեկ այլ երկրում ապաստանի համար դիմումի ներկայացում | • Կենսաչափական տվյալներ<br>• Լուսանկարներ<br>• Լրացուցիչ փաստաթղթեր | • Ինքնության հաստատում<br>• Անվտանգության խնդիրներ<br>• Խարդախություն | • Խորհրդատվություն<br>• Իրավաբանական օգնություն/ներկայացուցչություն<br>• Բժշկական/սոցիալական ծառայություններին ուղղորդում | Թվային համակարգերի միջոցով տվյալների անվտանգ փոխանցում համապատասխան գերատեսչություններին |

6. Հաշվառումը չափազանց կարևոր է գործերի կառավարման պարզեցված գործընթացների արդյունավետ իրականացման համար: Կարևոր է, որ ապաստան հայցողի ինքնության վերաբերյալ տեղեկությունները (հիմնական կենսաչափական տվյալները, ընտանիքի կազմը և այլն), ինչպես նաև հատուկ կարիքները և պաշտպանության հետ կապված մտահոգությունները հավաքագրվեն այդ գործընթացի հնարավորինս վաղ փուլում: Ապաստանի տրամադրման արդար և արդյունավետ համակարգը հիմնված է հաշվառման կայուն գործընթացի և տվյալների պատշաճ կառավարման վրա: Հաշվառման թույլ համակարգը խոչընդոտներ է ստեղծում ապաստանի տրամադրման շատ ազգային համակարգերի համար: Սկզբնական փուլում նմանատիպ խոչընդոտների առկայությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ ապաստանի գործընթացի մյուս փուլերի վրա: Համակարգի պատշաճ կառուցվածքը և ռեսուրսների հատկացումը, այդ թվում՝ անձնակազմով համալրման, վերապատրաստման, տեխնոլոգիաներով զինման և ծրագրային ապահովման համար, էական նշանակություն ունեն որակյալ հաշվառման և տվյալների առաջնային բեռման համար:

7. Ապաստանի դիմում ներկայացրած անձին հասկանալի լեզվով ապաստանի տրամադրման ընթացակարգի հետ կապված տեղեկությունները, խորհրդատվությունը և իրավաբանական օգնությունը/իրավաբանական ներկայացուցչությունը նույնպես պետք է տրամադրվեն հնարավորինս սեղմ ժամկետներում՝ ապահովելու համար, որ ապաստան հայցողները լավ պատկերացնեն ապաստանի գործընթացը և հասանելի ծառայությունները, ինչը հանգեցնում է հաշվառման գործընթացի որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը (տե՛ս ստորև, պարբերություն 29):

**Առանցքային հասկացություն**

«**Տվյալների առաջնային բեռնում**» նշանակում է ապաստանի տրամադրման համակարգի հետ անձի փոխգործելիության վաղ փուլում ապաստանի դիմում նեկայացրած անձի և փախուստի պատճառների մասին մանրամասն տեղեկությունների, ինչպես նաև կենսաչափական տվյալների հավաքագրում և ապաստանի հայցի հիմնավորման համար փաստաթղթերի ձեռքբերում: Այս մոտեցումը թույլ է տալիս առավել արդյունավետորեն տեսակավորել գործերը, կիրառել գործերի քննության տարբերակված մեթոդներ և ուղղորդել դրանք այլ ծառայություններ՝ ապաստանի գործընթացի հենց սկզբից:[13] Հաշվի առնելով այդ առավելությունները՝ հաշվառման փուլում տվյալների հավաքագրման որոշ հայեցակետերի և ծառայությունների մատուցման առնչությամբ տվյալների առաջնային բեռնումը գնալով դառնում է ընդունված գործելակերպ:

8. Որպեսզի **տվյալների առաջնային բեռնումն** արդյունավետ լինի, կարևոր է որոշել, թե տվյալների ինչ հավաքածուներ պետք է հավաքագրվեն գործընթացի հնավորինս վաղ փուլում՝ ապահովելու համար գործերի կառավարման համակարգի մանրամասն վերլուծությունը և մշակումը: Համապատասխան տեղեկությունների հավաքագրման մեթոդաբանությունը պետք է հուսալի լինի և իրականացվի տվյալների պաշտպանության կիրառելի ստանդարտներին համահունչ: Լավագույն տարբերակը կլինի, որ տվյալների հավաքածուների որոշումն իրականացվի ապաստանի տրամադրման համակարգի համապատասխան օգտատերերի, այդ թվում՝ սահմանային հսկողության, սքրինինգի, հաշվառման և պահանջներին համապատասխանության ստուգում իրականացնող ծառայության կոնտակտային կենտրոնների/անձնակազմի հետ խորհրդակցությամբ:

9. Հաշվառման ժամանակ մուտքագրման ենթակա տվյալների հավաքածուների որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն ծագման երկրի վերաբերյալ ժամանակին, տեղին և վստահելի տեղեկությունները (ԾԵՏ) (տե՛ս ստորև, պարբերություն 19)՝ հիմնվելով ծագման երկրում ստեղծված իրավիճակի և փախուստի պատճառների, ինչպես նաև ապաստանի երկրի իրավական շրջանակի վրա: Գործընթացի սկզբնական փուլում հստակ տվյալների հավաքածուի առկայությունը կարևոր է գործերի տեսակավորման և պահանջներին համապատասխանությունը որոշելու համար: Ընդհանուր տվյալները կարող են ներառել ծննդյան ամսաթիվը, ընտանիքը, սեռը, սեռական կողմնորոշումը, էթնիկ պատկանելությունը, կրոնը, մասնագիտությունը/զբաղվածությունը և քաղաքական պատկանելությունը: Կարևոր է տեղեկություններ հավաքագրել նաև համապատասխան ռիսկային խմբերի (օրինակ՝ քաղաքական գործիչների, իրավապաշտպանների, լրագրողների, զինվորականների, զորակոչից խուսափողների և այլոց) վերաբերյալ՝ կախված ծագման երկրում տիրող իրավիճակից, ինչպես նաև հատուկ կարիքներն ու խոցելի կողմերը բացահայտելու նպատակով: Անհրաժեշտ է իրականացնել բոլոր առկա տվյալների աղբյուրների վերլուծություն՝ գործընթացի հաջորդ քայլերի ձեռնարկման, այն է՝ գործերի տեսակավորման համար (տե՛ս ստորև, պարբերություն 15): Այդ տեղեկությունները սովորաբար հավաքագրվում են հաշվառման, պաշտպանության տրամադրման համար իրականացվող սքրինինգի/անձանց հետ հարցազրույցների և համայնքին/գործընկերներին դիմելու միջոցով:

10. Ապաստանի տրամադրման շատ ազգային համակարգերում հաշվառումը և հատուկ կարիքների նախնական վերհանումն իրականացվում են ոստիկանության կամ սահմանային հսկողության ծառայողների կողմից: Առավել նպատակահարմար գործելակերպ է համարվում մասնագիտացված, պաշտպանություն տրամադրելուն ուղղված ստորաբաժանումների ստեղծումը՝ ապաստան հայցողներին և ռիսկային խմբի մեջ մտնող այլ անձանց հաշվառելու, հայտնաբերելու և օգնելու համար: Ապաստան հայցել ցանկացող անձանց որակյալ հաշվառում և նրանց նկատմամբ արդար վերաբերմունք ապահովելու համար չափազանց կարևոր է զարգացնել այդ ծառայողների կարողություններն ապաստանի տրամադրման գործընթացի հիմնական պատշաճ ընթացակարգային ստանդարտների և միջազգային պաշտպանության սկզբունքների վերաբերյալ: Նմանատիպ ուսուցողական միջոցառումները կարող են իրականացվել քաղաքացիական հասարակության և փորձառություն ունեցող այլ շահագրգիռ կողմերի աջակցությամբ:


© UNHCR/C. Salinas

11. Ապաստանի գործերի կառավարման այնպիսի համակարգը, որի շնորհիվ հնարավոր է հավաքագրել մանրամասն մտածված տվյալների հավաքածու, թույլ կտա իրականացնել առավել լավ և նպատակային տվյալների հավաքագրում, ինչպես նաև պաշտպանության հարցում առավել հիմնավորված միջամտություններ, խոցելի անձանց օգնության ցուցաբերում և ընտանեկան հարաբերություններ հաստատում՝ ընտանիքի անդամներին փնտրելու և (կամ) ընտանիքի վերամիավորման նպատակով: ՄԱԿ ՓԳՀ-ն ընդգծում է **հատուկ կարիքներ և խոցելի կողմեր ունեցող անձանց վաղ հայտնաբերման, խորհրդատվության տրամադրման և տեղեկությունների հավաքագրման** ընթացակարգեր ունենալու կարևորությունը, որոնք հնարավորություն կտան իրականացնել արագ և համապատասխան միջամտություններ, այդ թվում՝ հարկ եղած դեպքում սահմանելով այդ հայցերի քննությունը որպես առաջնահերթություն:[14]

### Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեդիա

**Շվեդիայում** ապաստանի դիմումի հաշվառումը և ապաստան հայցողի լուսանկարումն ու կենսաչափական տվյալների (մատնահետքերի) ներմուծումն իրականացվում է Շվեդիայի միգրացիոն գործակալության (ՇՄԳ) ապաստանի տրամադրման հարցերով տարածաշրջանային կենտրոնների Դիմումների բաժնի՝ գործի քննությամբ զբաղվող աշխատակցի[15] կողմից: Ապաստանի դիմումը ՇՄԳ-ի կողմից հաշվառվելուց հետո գործի քննությամբ զբաղվող աշխատակցի և ապաստան հայցողի միջև խոսակցության ձևով հարցազրույց է անցկացվում, որի ընթացքում գործի քննությամբ զբաղվող աշխատակիցը սկզբնական տեղեկություններ է հավաքագրում ապաստան հայցողի ինքնության, փախստականի/պաշտպանության հայցի, ճամփորդության երթուղու և ընտանեկան հարաբերությունների մասին:

Այս նախնական խոսակցությունը հնարավորություն է տալիս գնահատելու, թե արդյոք ապաստան հայցողն ունի հատուկ կարիքներ և հատուկ աջակցության խնդրանքներ, թե ինչ լեզվով է ապաստան հայցողը ցանկանում խոսել ապաստանի առնչությամբ անցկացվող հարցազրույցի ժամանակ, և արդյոք նա ունի հատուկ խնդրանքներ՝ կապված տղամարդ/կին աշխատակցի ծառայություններից օգտվելու հետ: Այս փուլում տրամադրվում են նաև ապաստանի գործընթացի և բուժօգնության հասանելիության վերաբերյալ խորհրդատվություն և տեղեկություններ, և ապաստան հայցողին հնարավորություն է տրվում հարցեր ուղղել ապաստանի գործընթացի վերաբերյալ:

Դիմումի առնչությամբ անցկացվող հարցազրույցի նպատակն է նախնական պատկերացում կազմել փախստականի/պաշտպանության տրամադրման պահանջի մասին, որպեսզի հնարավոր լինի պատրաստվել ապաստանի տրամադրման համար անցկացվող հարցազրույցին և պարզել, թե արդյոք ապաստան հայցողն ունի հանրային պաշտպանի իրավունք, թե ոչ, և գործն ուղղորդել ճիշտ «հետագծի» շրջանակներում քննության (տե՛ս ստորև, պարբերություն 15): Այն նաև թույլ է տալիս վաղաժամ վերհանել հատուկ կարիքները և հայտնաբերել ընտանիքի անդամներին, որոնք կարող են Շվեդիայում կամ Եվրոպայի տարբեր երկրներում ընտանիքի վերամիավորման պատճառ հանդիսանալ:

[13] Տվյալների առաջնային բեռնման հիմքում պետք է լինի միջամտությունների իրականացումը, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական ներառությունը և ապրուստի հնարավորությունները, ինչպես նաև իրավունքների և կարիքների վրա հիմնված մոտեցման միջոցով խնդիրների լուծման ուղիները: Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի *Հաշվառման և ինքնության գործընթացի կառավարման վերաբերյալ ուղեցույցի* 7.3 բաժինը, www.unhcr.org/registration-guidance/chapter7/registration-data-for-protection-programming/:

[14] Առաջնահերթությունների սահմանումն ապաստանի տրամադրման բազմաթիվ ազգային համակարգերի կողմից հաճախ անվանվում է «առաջնահերթության կարգով գործերի քննություն»:

[15] Գործի քննությամբ զբաղվող աշխատակիցը որպես կանոն ունի բարձրագույն կրթություն՝ իրավունքի, քաղաքագիտության կամ հարակից ոլորտներում: Գործի քննությամբ զբաղվող աշխատակիցը կարող է հետագայում դառնալ որոշում կայացնող աշխատակից:

Այս փուլում ապաստանի հայցի հետ կապված ոչ մի մանրամասն տեղեկություն չի հավաքագրվում, թեև տրվող հարցերի տեսակը կախված է իրավիճակից:

ՇՄԳ-ն իրականացնում է դիմումի առնչությամբ անցկացվող հարցազրույցների որակի կանոնավոր ստուգում, որպեսզի գնահատի, թե որքան ժամանակ է այն տևում, ինչ թեմաներ են արծարծվում խոսակցության ընթացքում և ապահովի, որ գործի քննությամբ զբաղվող աշխատակիցը չանցնի սահմանները և չտա ապաստանի տրամադրման հիմքերի հետ կապված հարցեր, որոնք հետագայում ուսումնասիրվելու են ապաստանի տրամադրման համար անցկացվող հարցազրույցի ժամանակ:

12. **Ապաստանի գործերի կառավարման այնպիսի համակարգերի թվայնացումը և ներդնումը, որոնք փոխգործելի են կամ հնարավորություն են տալիս պետական այլ համակարգերի հետ** տեղեկությունների ժամանակին փոխանակում, մյուս միջոցներն են, որոնք կարող են բարձրացնել ապաստանի համակարգերի անաչառությունը, որակը և արդյունավետությունը: Այդ մոտեցումները թույլ են տալիս համապատասխան պետական մարմիններին ապահով կերպով իրական ժամանակում փոխանակել տեղեկություններ ու տվյալներ, ինչը կարող է բարելավել տվյալների ճշգրտությունն ու հասանելիությունը՝ միաժամանակ զգալիորեն նվազեցնելով տվյալների հավաքագրման և պահպանման գործընթացների կրկնօրինակումը և համընկնումը:

### Առանցքային հասկացություններ

**«Թվային լուծումներ»** հասկացությունը վերաբերում է մի շարք ավտոմատացված ընթացակարգերին, ինչպիսիք են թվային առցանց լուծումները, որոնք հնարավորություն են տալիս ապաստանի դիմում ներկայացրած անձանց գրանցվել ընդունելության համար, ներկայացնել իրենց ապաստանի դիմումը և (կամ) համապատասխան փաստաթղթերը, ստուգել իրենց դիմումների կարգավիճակը և (կամ) առցանց տեղեկանալ առաջին ատյանի կողմից կայացված որոշման մասին:

**«Փոխգործելիություն»** հասկացությունը վերաբերում է համակարգչային համակարգերի՝ միմյանց հետ հեշտությամբ միանալու և փոխգործակցելու հիմնական կարողությանը, նույնիսկ եթե դրանք մշակվել են տարբեր ոլորտներում միանգամայն տարբեր արտադրողների կողմից: Այդպիսի **փոխգործելի** համակարգերի օրինակներից պետք է լինեն սահմանապահ ոստիկանության ու ապաստանի տրամադրման համակարգերը: Ինտեգրացիայի նպատակներով կարող է նաև օգտակար լինել ստեղծել ապաստանի տրամադրման համակարգերի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման կամ ի թիվս այլնի զբաղվածության գործակալությունների/սոցիալական ծառայությունների միջև փոխգործելի համակարգեր:

13. Տարբեր համակարգերի թվայնացումը և ինտեգրման բարելավումը պահանջում են մանրամասն պլանավորում և միջինստիտուցիոնալ համակարգում: Այդ մոտեցումների կիրառումը ենթադրում է տեխնոլոգիաների ու համակարգերի նախագծման մեջ ռեսուրսների հատկացում և ներդրումների կատարում՝ ապահովելու համար տվյալների պաշտպանությունն ու անվտանգությունը, ինչպես նաև տվյալների կառավարման ավելի լայն համակարգի առկայությունը: Սա, իր հերթին, կպահանջի ներդրումների կատարում բոլոր մակարդակներում անձնակազմի համալրման և վերապատրաստման համար, որպեսզի այդ համակարգերը ճիշտ կիրառվեն, և տվյալների մուտքագրումը համակարգեր ճիշտ իրականացվի: Չնայած այս սկզբնական փուլում պահանջվող ներդրմանը, այս մոտեցումն ապահովում է ծախսերի խնայողություն երկարաժամկետ հատվածում: Այդ պատճառով, ապաստանի տրամադրման մի շարք ազգային համակարգեր այժմ դիտարկում են, թե ինչպես ավելի պարզեցնել և ընդլայնել թվային տեխնոլոգիաների կիրառումը և փոխգործելի համակարգերը:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Կանադա

**Կանադայի** ներգաղթի և փախստականների հարցերով խորհրդի (ՆՓԽ) հիմնական նպատակն իր թվային ռազմավարության արագ իրականացումն է։[16] ՆՓԽ-ի՝ թվայնացման[17] վրա շեշտադրման օրինակ է հանդիսանում Կանադայի փոստի ապահով «ePost Connect» ծառայության[18] և ՆՓԽ-ի «Իմ գործը պորտալի» (պորտալ) միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացված տեղեկությունների փոխանակման գործընթացը բարելավելու շարունակական ջանքերը։ Պորտալն անվտանգ, առցանց հավելված է, որը հնարավորություն է տալիս խորհրդատուին դիտելու ՆՓԽ-ի կողմից քննվող գործերի կարգավիճակը կամ դրանց հետ կապված տեղեկությունները։[19] Ավելին, խորհրդատուն կարող է ՆՓԽ-ի հետ պորտալի միջոցով անվտանգ կերպով փաստաթղթեր փոխանակել։ Այն գործարկվել է 2019 թվականին բազային ֆունկցիոնալությամբ, և հետագայում աստիճանաբար ավելացվել են լրացուցիչ ֆունկցիաներ։ Նախագծի այս փուլում այն հնարավորություն է տալիս պաշտպանին իրենց հաշիվներին ավելացնել իրենց ներկայացուցիչներին (օրինակ՝ պաշտպանի անձնակազմին)։ ՆՓԽ-ն ներկայումս նախատեսում է ընդլայնել ծառայությունների շրջանակը, որպեսզի հայցվորներն ու բողոքարկողները կարողանան անմիջականորեն գրանցվել։ Հարթակից օգտվելու մասնագրերը կարելի է գտնել «My Case User Guide» բաժնում։[20]

ՆՓԽ-ն հիմնականում աշխատում է թվային ֆայլերով, ինչին հնարավոր է եղել հասնել բոլոր բաժիններում առկա գործերի ֆայլերը սկանավորելու և ֆայլերը թվայնացնելու ուղղությամբ ձեռնարկված լրացուցիչ միջոցառումների շնորհիվ։ ՆՓԽ-ն նաև ստեղծել է Թվայնացման հարցերով խորհրդատվական կոմիտե՝ իր թվայնացման նախաձեռնություններում շահագրգիռ կողմերի հետ աշխատելու համար։[21]

2019 թվականին ՆՓԽ-ն ստացել է 3,8 միլիոն ԱՄՆ դոլարի բյուջե՝ Ապաստանի տրամադրման համակարգերի փոխգործելիության նախագծին (ԱՏՀՓՆ) աջակցելու համար,[22] որը նախատեսվում է ամբողջությամբ իրականացնել մինչև 2022 թվականի հունիսը։ ՆՓԽ-ի՝ նախագծի հիմնական նպատակներից են՝

- Կանադայի ներգաղթի, փախստականների և քաղաքացիության հարցերով ծառայության (ԿՆՓՔԾ), Կանադայի սահմանապահ ծառայությունների գործակալության (ԿՍԾԳ) և ՆՓԽ-ի միջև տեղեկությունների փոխանակման առկա գործընթացների բարելավում՝ տվյալների առավել լավ և արդյունավետ էլեկտրոնային փոխանակման նպատակով.
- արտաքսումների մասին հաշվետվությունների ներկայացման համակարգի կատարելագործում, ինչը թույլ է տալիս, որ արտաքսման որոշման վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կերպով փոխանակվեն ՆՓԽ-ի և ԿՆՓՔԾ-ի միջև՝ ԱՏՀՓՆ-ի միջոցով դյուրացնելու տվյալների փոխանակումը.[23]
- գործող համակարգի ֆունկցիոնալության բարելավում (ավտոմատացման և թվայնացման միջոցով՝ թղթային տարբերակով քննության փոխարեն).
- առցանց հավելվածների ստեղծում, որոնք հնարավորություն կտան խորհրդատուին և վստահորդներին ներկայացնել դիմումներ, թարմացնել տեղեկությունները և ուղարկել փաստաթղթեր։

Վերջապես, կիրառվում է տեղեկությունների արդյունավետ փոխանակման միջոցով ինտեգրված քննության մեթոդը՝ կիրառելով NOVA-GCMS միջերեսը (NGI)։ NGI-ն ավտոմատացված հավելված է, որը հնարավորություն է տալիս ՆՓԽ-ի և ԿՆՓՔԾ-ի գործերի կառավարման առանձին համակարգերին փոխգործակցել միմյանց հետ։ NGI համակարգը ներառում է՝

- Փախստականների պաշտպանության հարցերով զբաղվող բաժնում (ՓՊԲ) կամ Փախստականների հարցերով բողոքարկման բաժնում (ՓԲԲ) քննվող դեպքերի վերաբերյալ ԿՆՓՔԾ-ի գործերի կառավարման համակարգից տվյալների առբերում և ուղարկում.
- ՆՓԽ-ի գործերի կառավարման համակարգում գործերի ստեղծում և թարմացում (այդ թվում՝ ՓՊԲ ցանկացած նոր գործի ուղղորդում).
- ՆՓԽ-ի կողմից ՓՊԲ-ի և ՓԲԲ-ի կողմից կայացված որոշումների առբերում և ուղարկում ԿՆՓՔԾ-ին և ԿՍԾԳ-ին՝ յուրաքանչյուր բաժնի գործերի կառավարման համակարգերի միջև ավտոմատ վերբեռնումների միջոցով։[24]

Հեռանկարում նպատակն է ընդլայնել համակարգի հասանելիությունը՝ չսահմանափակվելով ՓՊԲ-ով և ՓԲԲ-ով և զրեթե «իրական ժամանակում» տվյալները/փաստաթղթերը փոխանցել բոլոր երեք գերատեսչությունների (այսինքն՝ ՆՓԽ-ի, ԿՆՓՔԾ-ի և ԿՍԾԳ-ի) միջև։

[16] ՆՓԽ, *ՆՓԽ-ի 2021-22 թվականների գործունեության ծրագիր* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/3g4FUCd:

[17] ՆՓԽ, *Փախստականների կարգավիճակի արդյունավետ որոշման գործողությունների ծրագիր* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/3Hpb2IR:

[18] ՆՓԽ, *Կանադայի փոստի ապահով «ePost Connect» ծառայություն* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 20-ին հետևյալ հղմամբ), https://irb.gc.ca/en/contact/Pages/epost.aspx:

[19] ՆՓԽ, *Իմ գործի պորտալ* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 20-ին հետևյալ հղմամբ), https://my-case-mon-dossier.irb-cisr.gc.ca/en/Pages/login-connexion.aspx:

[20] ՆՓԽ, «*My Case User Guide» բաժին*, (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 20-ին հետևյալ հղմամբ), https://my-case-mon-dossier.irb-cisr.gc.ca/en/Pages/faq.aspx:

[21] ՆՓԽ, *Թվայնացման հարցերով խորհրդատվական կոմիտե (ԿՆՓԽԽԿ-ի ենթակոմիտե)* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 20-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/33ZbG0T:

[22] ՆՓԽ, *Ապաստանի տրամադրման համակարգերի փոխգործելիության նախագիծ (ԱՏՀՓՆ) (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ)*, https://bit.ly/3IK31y9:

[23] ԿՆՓՔԾ, *ՊՀՄՀ՝ լրացուցիչ նախահաշիվներ (A), 2020-2021, Տեղեկատվական տեխնոլոգիաներ,* 2020 թվականի նոյեմբերի 24, (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 20-ին հետևյալ հղմամբ),https://bit.ly/3IK31y9:

[24] ՆՓԽ, *Տեղեկությունների փոխանակում և համակարգի միջերեսներ* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 22-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/3AG7bV5:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեյցարիա

Ապաստանի տրամադրման ընթացակարգերի շրջանակներում արդյունավետ հաղորդակցման և գործերի վարման գործընթացը բարելավելու համար **Շվեյցարիայի** Միգրացիայի հարցերով պետական քարտուղարությունը (ՄՊՔ) ներդրել է ապաստանի նոր դիմումների ընդունման էլեկտրոնային ընթացակարգեր՝ օգտագործելով SS (տեղեկատվական տեխնոլոգիաների) հավելվածներ՝ ZEMIS eGov - eAsyl և eRetour: Դրանք կիրառվում են գործերի վարման, բիզնեսի վերահսկման և փաստաթղթերի կառավարման համար: eAsyl մոդուլի միջոցով[25] ընթացակարգերը կառավարվում են ընդհուպ մինչև ապաստանի դիմումի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, այդ թվում՝ վերաքննիչ ատյանում դրա բողոքարկումը: eRetour մոդուլը կիրառվում է արտաքսման որոշումը կատարելու հետ կապված ընթացակարգերի համար:

Բովանդակություն և ֆունկցիոնալություն. ZEMIS eGov - eAsyl և eRetour հավելվածները հասանելի են Արդարադատության և ոստիկանության դաշնային դեպարտամենտի (ԱՈԴԴ) այսպես կոչված SSO պորտալի միջոցով: Հավելվածը դիմումատուի անձնական տվյալները և համապատասխան ընթացակարգային տվյալները ստանում է ZEMIS տվյալների շտեմարանից: eAsyl հավելվածում ապաստանի յուրաքանչյուր դիմումի կամ ընթացակարգի համար բացվում է այսպես կոչված «նախագիծ»: Նախագիծը կարող է ներառել մեկ կամ մի քանի անձանց (ընտանիքների): Յուրաքանչյուր նախագծում կարող է լինել մի քանի աշխատանք, որոնք կարող են մշակվել հաջորդաբար կամ զուգահեռաբար: eGov մոդուլների միջոցով ՄՊՔ-ի աշխատակիցները կարող են իրենց պատասխանատվության ոլորտում շարունակաբար կատարել անհրաժեշտ ընթացակարգային քայլերը և անմիջապես փաստաթղթավորել դրանք: Նրանք կարող են հետագայում հեշտությամբ աշխատանքներ (առաջադրանքներ/հանձնարարություններ) հանձնարարել այլ անձանց՝ սահմանված վերջնաժամկետում ավարտելու համար: Սկզբնական էկրանին հայտնված աշխատանքների ցանկը ցույց է տալիս օգտատերերին իրենց պատասխանատվության ոլորտում գտնվող բոլոր աշխատանքները, որոնք դեռ ավարտված չեն:

Աշխատակիցները կարող են աշխատանքի ցանկում անհատականացնել որոնման հարցումներն ու էկրանի դիտումները և օգտագործել դրանք ըստ իրենց կարիքների (օրինակ՝ զտիչներ, սյունակների ընտրություն և կարգ, դիտումների պահպանում): Բոլոր ընթացակարգային գործերը՝ որպես PDF ֆայլեր (դյուրակիր փաստաթղթի ձևաչափով), վերբեռնվում են eDossier հարթակում ZEMIS eGov - eAsyl հավելվածի միջոցով, հետևաբար, ցանկացած պահի հասանելի են բոլոր լիազորված օգտատերերին, քանի որ գոյություն ունեն արտահանման բազմաթիվ տարբերակներ: Ֆայլի ինդեքսն ավտոմատ ստեղծվում և էջադրվում է անմիջապես ZEMIS eGov – eAsyl հավելվածում: Որոշ ֆայլեր, ինչպիսիք են անձը հաստատող փաստաթղթերը, ճամփորդական փաստաթղթերը և այլ փաստաթղթեր, նույնպես ֆիզիկապես պահվում են «N-Box» կոչվող համակարգում:

14. Ընդունման/հաշվառման պահին **տարբեր փուլերում մի շարք ծառայություններ մատուցողների հետ միասնական համակարգերի ստեղծումը (այսպես կոչված «մեկ պատուհան» կամ «մեկ տանիքի ներքո» մոտեցում)** տեղեկությունների փոխանակման և տարբեր կառույցների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման ևս մեկ մեթոդ է: «Մեկ տանիքի ներքո» մոտեցումը կարող է ներառել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են (i) անհատական կարգով հաշվառումը, (ii) ինքնության վերաբերյալ տեղեկությունների, կենսաչափական տվյալների և լուսանկարների հավաքումը, (iii) հատուկ կարիքների վերհանումը և համապատասխան ծառայությունների ուղղորդումը, (iv) փաստաթղթերի տրամադրումը, (v) գործի առաջին ատյանում քննության և բողոքարկման ենթակա լինելու որոշումը, (vi) իրավաբանական օգնության/աջակցության և իրավական ներկայացուցչության տրամադրումը, և (vii) տարբեր շահագրգիռ կողմերի՝ ի թիվս այլնի ՄԱԿ ՓԳՀ-ի, Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) և հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ)/քաղաքացիական հասարակության կողմից տրամադրվող խորհրդատվությունը:

25 ՄՊՔ, SR 142.513 - Verordnung vom 12. April 2006 über das *Zentrale Migrationsinformationssystem (ZEMIS-Verordnung)* (admin.ch) (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 23-ին հետևյալ հղմամբ), www.fedlex.admin.ch/eli/cc/2006/303/de, և ՄՊՔ, *Änderung der Ausführungsverordnungen zu den Verfahrensregelungen und Informationssystemen, Erläuterungen zu den einzelnen Bestimmungen*, 28.03.2019, Anhang 1 Ziffer IV (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 23-ին հետևյալ հղմամբ), www.fedlex.admin.ch/eli/cc/2006/303/de

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեյցարիա

Ապաստանի տրամադրման համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքում և մի քանի տարի տևած երկու փորձնական փուլից հետո **Շվեյցարիան** 2019 թվականի մարտին ներդրեց ապաստանի տրամադրման նոր ընթացակարգ: Նոր ընթացակարգով փորձ է արվում կրճատել ապաստանի տրամադրման ընթացակարգերի տևողությունը՝ ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև կազմակերպական փոփոխություններ կատարելու միջոցով: Այդ ընթացակարգով բոլոր հիմնական դերակատարները և ընթացակարգային գործառույթները միավորվում են ապաստանի դաշնային կենտրոնում՝ «մեկ տանիքի ներքո»:[26]

Բոլոր վեց տարածաշրջաններում ներդաշնակեցված և ստանդարտացված ընթացակարգ ունենալու համար մշակվել և ՄՊՔ ինտրանետում անձնակազմի համար հասանելի են դարձվել Դուբլինի և ապաստանի տրամադրման հիմնական գործընթացները: Փոփոխությունների հարցումներին ընթացք տալու և դրանք իրականացնելու համար ներդրվել է գործընթացների կենտրոնացված կառավարում: Նոր ընթացակարգերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝

1) Ապաստանի դիմում ներկայացնելուց հետո դիմումատուն նախ տեղավորվում է ընթացակարգային գործառույթներ ունեցող ապաստանի դաշնային կենտրոնում: Նախնական նախապատրաստական փուլում ՄՊՔ-ն հաշվառում է դիմումատուին, գրանցում նրա անձնական տվյալները և վերցնում նրա մատնահետքերը, որոնք համեմատվում են Eurodac համակարգում առկա մատնահետքերի հետ: ՄՊՔ-ն նաև փաստաթղթավորում և խաչաձև ստուգում է այդ տեղեկությունները:[27] Բացի այդ, իրականացվում է բուժզննում:

Այս նախապատրաստական փուլում, որը տևում է առավելագույնը 21 օր (10 օր Դուբլինի ընթացակարգերի համար), դիմումատուն անվճար իրավաբանական օգնություն տրամադրող անձից (հասարակական կազմակերպությունից) ստանում է ապաստանի տրամադրման ընթացակարգի և իր իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տեղեկություններ ու խորհրդատվություն, ինչպես նաև մասնակցում է ՄՊՔ-ի հետ նախնական հարցազրույցի՝ որոշելու, թե արդյոք մեկ այլ պետություն կարող է, Դուբլինի համակարգի համաձայն, պատասխանատվություն կրել ինքնության, ճամփորդության երթուղու և հակիրճ կերպով՝ փախուստի պատճառների մասին տեղեկություններ հավաքագրելու համար:

2) Նախապատրաստական փուլից հետո ՄՊՔ-ն պատասխանատու է յուրաքանչյուր հայցն առանձին քննելու համար: ՄՊՔ-ն ունի ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելու ընթացակարգերի երեք ուղղություն՝ քննության համար սահմանված ժամկետներով, մասնավորապես՝

(i) Դուբլինի ընթացակարգը 10-օրյա ժամկետով՝ որոշում կայացնելու համար.

(ii) պակաս բարդ գործերի համար արագացված ընթացակարգ և ութ աշխատանքային օր՝ որոշում կայացնելու համար, և

(iii) ընդլայնված ընթացակարգն ավելի բարդ գործերի համար, երբ գործի վերաբերյալ որոշումը պետք է կայացվի նախապատրաստական փուլի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում և ամենաուշը մեկ տարվա ընթացքում (այս ընթացակարգն ունի պակաս խիստ ժամկետներ՝ հաշվի առնելու համար հավելյալ հարցազրույցների, տեղեկությունների ստուգման և այլնի անհրաժեշտությունը):

3) Եթե չի նախաձեռնվում Դուբլինի ընթացակարգը, ապա արագացված ընթացակարգն սկսվում է նախապատրաստական փուլի ավարտից հետո՝ ՄՊՔ-ի ապաստանի տրամադրման հարցերով մասնագետի կողմից ապաստանի տրամադրման համար անցկացվող հարցազրույցով, որոշումները մշակվում են, և որոշումների մասին ծանուցումներն ուղարկվում են ընթացակարգային գործառույթներ ունեցող՝ ապաստանի դաշնային կենտրոններ:

ՄՊՔ-ն կարող է լրացուցիչ հարցազրույց անցկացնել և լրացուցիչ պարզաբանումներ ստանալ, օրինակ՝ անձի ինքնության և ծագման, ենթադրյալ բժշկական խնդիրների և ներկայացված փաստաթղթերի կամ արժանահավատության գնահատման առնչությամբ: Ապաստան հայցողները կարող են անվճար կապ հաստատել կանտոնների՝ իրավաբանական օգնություն տրամադրող անձի կամ արագացված ընթացակարգի շրջանակներում նշանակված օրինական ներկայացուցչի հետ, որպեսզի աջակցություն ստանան առաջին ատյանում ձեռնարկվող ընթացակարգային քայլերի հարցում, հատկապես, եթե անցկացվում է ապաստանի տրամադրման համար լրացուցիչ հարցազրույց:[28]

Ընդունելով բարելավումներ կատարելու անհրաժեշտությունը՝ Շվեյցարիայի իշխանությունների կողմից նախաձեռնված անկախ հետազոտական ուսումնասիրությունների[29] և գնահատումների արդյունքները[30] ցույց են տվել, որ Շվեյցարիայում «մեկ տանիքի ներքո» մոտեցումն ունի մի շարք առավելություններ, որի արդյունքում բարձրացել է արդյունավետությունը և արդյունավետ կերպով կիրառվում են պատշաճ իրավական ընթացակարգի ստանդարտները: Իրականացված ուսումնասիրությունների համաձայն՝

- «Մեկ տանիքի ներքո» մոտեցումն ապահովում է ապաստանի տրամադրման ընթացակարգերի մասին տեղեկությունների ժամանակին տրամադրումը դիմումատուներին՝ սկզբնական փուլից կանոնավոր կերպով տեղեկացնելով նրանց ընթացակարգերի, իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, ինչը թույլ է տալիս

նրանց ավելի խորը պատկերացում կազմել գործընթացի և ակնկալիքների մասին: Տեղեկությունների տրամադրումը դիմումատուներին տալիս է նաև առավել իրատեսական պատկերացում՝ ապաստանի տրամադրման գործընթացում իրենց հնարավորությունների մասին: Բացի այդ, այն փաստը, որ այդ տեղեկությունները տրամադրվում են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, մեծացնում է դրանց ընդունումը.[31]

- Գործերի քննության համար անձնական գործերի էլեկտրոնային և թվային ձևաչափի ներդնումը (տե՛ս վերևում ներկայացված թվայնացման լավագույն գործելակերպը, պարբերություն 12) հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով փոխանցել և փոխանակել ֆայլեր և տեղեկություններ.
- Ապաստանի հարցերով շատ դաշնային կենտրոններում նոր մոտեցումը հնարավորություն է տալիս նաև տարբեր սուբյեկտների, այդ թվում՝ թարգմանիչների, օրինական ներկայացուցիչների, ՄՊՔ-ի ապաստանի հարցերով զբաղվող աշխատակիցների, ինչպես նաև կեցության հարցերով զբաղվող աշխատակիցների, այդ թվում՝ սոցիալական/բժշկական ծառայությունների և այլոց միջև ապահովել աշխատանքների առավել լավ համակարգում և տեղեկությունների փոխանակում: Այնուամենայնիվ, նշվել է, որ անհրաժեշտ է բոլոր ապաստան տրամադրող շրջանների ՄՊՔ-ի շրջանակներում աշխատանքների համակարգումը, ապաստանի հարցերով կենտրոնների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը կանտոնի իշխանությունների հետ բարելավել: Անհրաժեշտ է բարելավել նաև աշխատանքների համակարգումը ՄՊՔ-ի և իրավաբանական օգնություն տրամադրող անձանց միջև, ինչպես նաև հենց իրավաբանական օգնություն տրամադրող անձանց միջև:
- Թեև համակարգը որոշ չափով ճկուն է, այնուամենայնիվ, ապաստանի հարցերով դաշնային կենտրոնները կարող են քննել սահմանափակ թվով ապաստանի նոր հայցեր:[32] Ապաստան հայցողների տեղավորման հնարավորությունների առավելագույն սահմանները գերազանցելու դեպքում պետք է գործի դրվեն տարբեր միջոցներ, օրինակ՝ ազգային ընթացակարգի շրջանակներում ապաստան հայցողների տեղափոխումը կանտոններ՝ առանց լսումների կամ որոշում կայացնելու:[33] Ապաստանի դիմումների թվի տատանումների հարցը պատշաճ կերպով լուծելու համար անհրաժեշտ է դիմել իրավաբանական օգնություն տրամադրող անձանց՝ հատկապես ֆինանսական հարցերի հետ կապված: Բացի այդ, ընթացակարգային գործողությունների հերթականությունը պետք է սերտորեն համաձայնեցվի իրավաբանական օգնություն տրամադրող անձանց հետ, հատկապես, երբ արձանագրվում են ապաստանի դիմումների թվի անկանխատեսելի տատանումներ:[34]

---

26 Տե՛ս «Ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգեր» խորագրով անիմացիոն տեսահոլովակը, որտեղ բացատրվում են ապաստանի տրամադրման նոր ընթացակարգերը՝ ինտերակտիվ քարտեզների և տեսանյութերի միջոցով, www.sem.admin.ch/sem/en/home/asyl/asylverfahren.html.

27 Եթե նախնական ուսումնասիրությամբ պարզվում է, որ ապաստանի դիմումի քննության համար պատասխանատու է ԵՄ մեկ այլ անդամ պետություն՝ համաձայն Դուբլինի III կանոնակարգի, ապա պատասխանատվությունը ստանձնելու/հետ ընդունելու մասին դիմումն ուղարկվում է համապատասխան պետություն: Ընթացակարգային գործառույթներ չունեցող ապաստանի դաշնային կենտրոններում հիմնականում տեղավորվում են այն ապաստան հայցողները, որոնք սահմանված կարգով պետք է հանձնվեն Դուբլինի համաձայնագրի մեկ այլ անդամ պետության՝ համաձայն Դուբլինի կանոնակարգի, կամ նրանք, ում ապաստանի դիմումները մերժվել են առաջին ատյանում, և նրանցից որոշներն սպասում են որոշման բողոքարկման արդյունքներին: Նրանք մնում են դաշնային կենտրոններում, եթե չեն արտաքսվում Շվեյցարիայից սահմանված 140 օրվա ընթացքում: 140 օր հետո նրանք տեղափոխվում են կանտոններից մեկը: Կանտոնների կառույցները չեն կիրառում «մեկ տանիքի ներքո» մոտեցումը:[28] Տե՛ս Ապաստանի վերաբերյալ տեղեկությունների շտեմարանը (ԱՏՇ), *Երկրի վերաբերյալ զեկույց, Շվեյցարիա, 2020թ.*: https://bit.ly/3Gd14sq:

29 Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ՄՔՄՄԿ*), Ապաստանի տրամադրման որոշումը բողոքարկելու ընթացակարգը՝ Եվրոպայում ապաստանի տրամադրման համակարգերի և քաղաքականության նպատակների համաձայն, 2020* թվականի հունվար, https://bit.ly/3G9moik:

30 Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս «Evaluation PERU», *Protection juridique et qualite des decisions, Rapport final,* հրապարակումը, 2021 թվականի օգոստոս, https://bit.ly/3KUsaYP, ինչպես նաև «Evaluation PERU», *Sous Project Qualite des processus. Rapport final հրապարակումը*, 2021 թվականի օգոստոս, https://bit.ly/3IJZcsL:

31 Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ՄՔՄՄԿ*), Ապաստանի տրամադրման որոշումը բողոքարկելու ընթացակարգը՝ Եվրոպայում ապաստանի տրամադրման համակարգերի և քաղաքականության նպատակների համաձայն*, 2020 թվականի հունվար, էջ 38, https://bit.ly/3G9moik:

32 2014 թվականի պլանի և սահմանված հենանիշերի համաձայն՝ ՄՊՔ-ն կարող է սովորական ընթացակարգերի շրջանակներում քննել 15,000-ից մինչև 29,000 ապաստանի դիմումներ՝ 5,000 կացարանների հաշվարկով: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս *Themen- und Kantonsfaktenblätter* (admin.ch) (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղումով), https://bit.ly/3o6JoIF:

33 *«Evaluation PERU»*, Sous Project Qualite des processus. Rapport final, Aout 2021, էջ 59, https://bit.ly/3IJZcsL:

34 *«Evaluation PERU», Rechsshutz und Entscheidqualitat Schlussbericht,* 2021 թվականի օգոստոս, https://bit.ly/3HbBa9E:

## II. Գործերի տեսակավորումը և դրանց քննության տարբերակված մեթոդները

| Գործերի հոսքերի վերլուծություն | Դասակարգում՝ ըստ խմբերի, օր.՝ | Ուղղորդում արագացված, պարզեցված կամ սովորական ընթացակարգերի շրջանակներում քննության | Առաջնահերթություններ ի սահմանում՝ ըստ անհրաժեշտության |
|---|---|---|---|
| • Ծագման երկրի և հատուկ գործերի հաշվի առնելը<br>• Որոշված խմբերը պետք է միատեսակ լինեն ընդհանուր բնութագրերով և պաշտպանության տրամադրման ցուցանիշներով<br>• Պաշտպանության տրամադրման բարձր/ցածր ցուցանիշներ | • Ակնհայտորեն հիմնավորված / անհիմն<br>• Ազգային պատկանելիության<br>• Բարդություններ | | |

15. **Տեսակավորումը** գործերի հոսքերի կառավարման կարևոր գործիք է, որը կարող է ուժեղացնել համակարգերի արձագանքման կարողությունը և նվազեցնել դրանց վրա նոր ժամանող անձանց, ինչպես նաև առկախ դիմումների հետևանքով առաջացած ծանրաբեռնվածությունը: Գործերի տեսակավորումը՝ ըստ գործերի քննության տարբեր հոսքերի (որոնք ապաստանի տրամադրման ազգային համակարգերում կոչվում են նաև հետագծեր), սովորաբար սկսվում է հաշվառման փուլից և կախված է հաշվառման/նույնականացման բարձրորակ տվյալների առկայությունից: Տեսակավորումը ենթադրում է ապաստան հայցող բնակչության քարտեզագրում և գործերի հոսքերի վերլուծություն՝ ըստ ծագման երկրի և անձանց կոնկրետ կատեգորիաների՝ մանրամասն հաշվի առնելով տրամադրված պաշտպանության ընդհանուր ցուցանիշները (պաշտպանության տրամադրումը) և այդ անձանց կատեգորիայի համար ծագման երկրի վերաբերյալ ժամանակին, հուսալի և համապատասխան տեղեկությունները: Թե՛ գործերի ծավալների, թե՛ բարձր կամ ցածր մակարդակի պաշտպանություն ստացած անձանց կատեգորիաների դեպքում կարող են կիրառվել գործերի տեսակավորում և դրանց տարբերակված քննության մեթոդներ, այդ թվում՝ փախստականի կարգավիճակի որոշման պարզեցված և արագացված (ՓԿՈ) ընթացակարգեր:

16. Գործերը կարող են տեսակավորվել ըստ տարբեր հոսքերի՝ ելնելով պաշտպանության տրամադրման բարձր և ցածր ցուցանիշներից, ինչպես նաև գործերի քննության այլ հասկացություններից (սահմանված են ստորև), ինչպիսիք են **ակնհայտորեն հիմնավորված, ակնհայտորեն անհիմն** և **միջազգային պաշտպանության ոլորտում ներառման կանխավարկածով** գործերը, ինչպես նաև լուծվել **ՓԿՈ պարզեցված** և (կամ) **ՓԿՈ արագացված ընթացակարգերի** շրջանակներում քննության միջոցով: Պաշտպանության տրամադրման փոփոխական ցուցանիշներ ունեցող կամ ավելի բարդ գործերը սովորաբար քննվում են **ՓԿՈ սովորական ընթացակարգերի** շրջանակներում: Որոշ տեսակի գործերի դեպքում կարող են նաև առաջնահերթություններ սահմանվել (կամ քննվել արտահերթ կարգով)՝ ելնելով անհատական հատուկ կարիքներից և պաշտպանության բարձր ռիսկերից:

## Հիմնական հասկացություններ

**Ներառության կանխավարկածը** (կամ համապատասխանության կանխավարկածը) կարող է գործել այն դեպքում, երբ ծագման երկրում ստեղծված իրավիճակի մասին վկայող օբյեկտիվ ապացույցները ցույց են տալիս, որ կոնկրետ կատեգորիայի դիմումատուներ, ամենայն հավանականությամբ, համապատասխանում են 1951 թվականի կոնվենցիայի 1Ա (2) հոդվածով սահմանված չափանիշներին և (կամ) փախստականի սահմանման ավելի լայն չափանիշներին և (կամ) միջազգային պաշտպանության լրացուցիչ ձևերի չափանիշներին: **Ներառության կանխավարկածը** հերքելի է, հետևաբար դա չի նշանակում, որ կոնկրետ կատեգորիայի կամ որոշակի խմբի պատկանող յուրաքանչյուր դիմումատու ինքնաբերաբար ճանաչվում է փախստական կամ այլ կերպ ունի միջազգային պաշտպանության կարիք: Այնուամենայնիվ, գործերի այն ծավալը կամ դիմումատուների կոնկրետ կատեգորիաները, որոնց նկատմամբ տարածվում է ներառության կանխավարկածը, սովորաբար ունեն պաշտպանության տրամադրման շատ բարձր ցուցանիշներ և հաճախ քննվում են *prima facie* սկզբունքով,[35] պարզեցված և (կամ) արագացված ընթացակարգերի շրջանակներում:

**Ակնհայտորեն հիմնավորված հայցը** վերաբերում է ապաստանի հայցին, որն առաջին հայացքից հստակ ցույց է տալիս, որ անձը համապատասխանում է փախստականի կարգավիճակի կամ միջազգային պաշտպանության լրացուցիչ ձևի չափանիշներին: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ անձը պատկանում է այն մարդկանց կատեգորիային, որոնց նկատմամբ կիրառվում է ներառության կանխավարկածը կամ միջազգային պաշտպանության տրամադրման դիմումի մեջ նշված որոշակի փաստերի պատճառով: Այսպիսի գործերը սովորաբար կունենան պաշտպանության տրամադրման շատ բարձր ցուցանիշներ և կարող են քննվել պարզեցված և (կամ) արագացված ընթացակարգերի շրջանակներում:

**Ակնհայտորեն անհիմն** հայցերը վերաբերում են փախստականի կարգավիճակ կամ միջազգային լրացուցիչ պաշտպանություն ստանալու մասին դիմումներին, որոնք «ակնհայտորեն չեն առնչվում փախստականի կարգավիճակի չափանիշների» կամ միջազգային պաշտպանության մեկ այլ կարգավիճակի հետ, կամ որոնք «ակնհայտ կեղծ են կամ ներկայացվել են չարաշահումով»: Հարկ է նշել, որ հայցը կարող է համարվել «ակնհայտորեն կեղծ» միայն այն դեպքում, երբ դիմումատուն ներկայացնում է իր կարգավիճակի որոշման համար կարևոր նշանակություն ունեցող նյութական կամ էական բնույթի կեղծ հայտարարություններ, և հայցն ակնհայտորեն չի պարունակում լրացուցիչ քննություն պահանջող այլ տարրեր:[36] Այդպիսի գործերը կունենան պաշտպանության տրամադրման շատ ցածր ցուցանիշներ և կարող են ուղղորդվել արագացված ընթացակարգերի, իսկ եթե կան միատեսակ հայցեր, ապա պարզեցված ընթացակարգերի շրջանակներում քննության:

**Գործերի առաջնահերթությունների սահմանում** (կամ արտահերթ քննություն) նշանակում է որոշ տեսակի գործերից նախապատվություն տալ այլ տեսակի գործերի քննությանը, օրինակ՝ ելնելով հատուկ կարիքներից կամ ակնհայտ պաշտպանության կարիք ունեցող անձանց կատեգորիայից (օրինակ՝ ֆիզիկական/իրավական պաշտպանության ավելի մեծ կարիք ունեցող անձինք, այդ թվում՝ ընդունող երկրում անհապաղ *վերադարձելիության* կամ կամայական ձերբակալման կամ կալանքի ռիսկի ենթակա անձ):

**Բարդ գործեր** սովորաբար համարվում այն հայցերը, որոնք առաջացնում են ներառության, արժանահավատության և (կամ) բացառության մտավախություններ, և որոնք պահանջում են առավել խորացված հարցազրույցների անցկացում և իրավական վերլուծություն: Այդպիսի գործերը սովորաբար պետք է քննվեն ՓԿՈ սովորական ընթացակարգերի շրջանակներում (տե՛ս ստորև, պարբերություն 17):

---

[35] **Առերևույթ [prima facie] մոտեցումը** ներառում է փախստականի կարգավիճակի ճանաչում՝ ծագման երկրում (կամ քաղաքացիություն չունեցող ապաստան հայցողների դեպքում՝ նրանց նախկին սովորական բնակության երկրում) ակնհայտ, օբյեկտիվ հանգամանքների հիման վրա, որոնք ցույց են տալիս, որ այդ հանգամանքներից փախչող անձինք վտանգի ենթարկվելու ռիսկի տակ են, ուստի այդ պատճառով է, որ նրանք ընկնում են փախստականի գործող սահմանման տակ, այլ ոչ թե անհատական գնահատման պատճառով: Prima facie մոտեցումը խմբային հատկանիշների միջոցով գործում է միայն փախստականի կարգավիճակը ճանաչելու համար. մերժման որոշում կայացնելու համար անհրաժեշտ է անցկացնել անհատական գնահատում: Prima facie մոտեցումը կիրառվում է փախստականների լայնածավալ ժամանումների իրավիճակներում, սակայն կարող է տեղին լինել նաև նմանատիպ իրավիճակում հայտնված անձանց խմբերի դեպքում, որոնց ժամանումը զանգվածային բնույթ չի կրում, սակայն նրանց առնչությամբ առկա է վտանգի ենթարկվելու ակնհայտ ընդհանուր ռիսկ: Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի *Միջազգային պաշտպանության վերաբերյալ թիվ 11 ուղեցույցը». Փախստականի կարգավիճակի prima facie ընդունումը*, 2015 թվականի հունիսի 24, HCR/GIP/15/11, www.refworld.org/docid/555c335a4.html:

[36] Փախստականի կարգավիճակի կամ ապաստանի ակնհայտորեն անհիմն կամ չարաշահումով ներկայացված դիմումների հիմնախնդրի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի *Գործադիր կոմիտեի* թիվ 30 եզրակացությամբ (XXXIV), ի թիվս այլնի, նշվում է, որ դ) «...փախստականի կարգավիճակի որոշման ազգային ընթացակարգերում կարող է արդյունավետ կերպով ներառվել հատուկ դրույթ՝ այնպիսի ակնհայտորեն անհիմն դիմումներն արագացված կարգով քննելու համար, որոնք արժանի չեն այդ ընթացակարգի յուրաքանչյուր փուլում համակողմանի քննության. և (ե...) «ընդունել է որոշման նյութական բնույթն առ այն, որը փախստականի կարգավիճակի տրամադրման դիմումն ակնհայտորեն անհիմն է կամ ներկայացվել է չարաշահումով, սխալ որոշման ծանր հետևանքներն ապաստանի դիմում ներկայացրած անձի համար և դրանից բխող անհրաժեշտությունն առ այն, որ այդ որոշումը պետք է ուղեկցվի համապատասխան ընթացակարգային երաշխիքներով», և որ դրանք ներառում են անհատական հարցազրույցը և փախստականի կարգավիճակը որոշելու իրավասություն ունեցող մարմնի լիարժեք որակավորում ունեցող պաշտոնատար անձի կողմից կայացված որոշումը, և մինչև սահմանին մերժումը կամ հարկադիր արտաքսումը որոշման վերանայումը, թեև վերջինս կարող է իրականացվել պարզեցված ընթացակարգի շրջանակներում»:

17. Հրապարակելով *«ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակներում ՓԿՈ ընթացակարգերի նկատմամբ կիրառելի՝ գործերի քննության մեթոդների, եզրույթների և հասկացությունների հուշաթերթ և բառարան» ձեռնարկը*[37] ՄԱԿ ՓԳՀ-ն փորձել է ապահովել եզրաբանության և հասկացությունների կիրառման հարցում հետևողականություն և ընդհանուր ընկալում, որոնք **գործերի տեսակավորման և դրանց քննության տարբերակված մեթոդների կիրառման** դեպքում նպատակահարմար է հաշվի առնել՝ գործերը կառավարելու համար: Բառարանում ներկայացված են համապատասխան սահմանումներ, ինչպիսիք են ՓԿՈ պարզեցված ընթացակարգը, ՓԿՈ արագացված ընթացակարգը, միաձուլված գործընթացները, ինչպես նաև ՓԿՈ սովորական ընթացակարգը:

### Հիմնական հասկացություններ

**ՓԿՈ պարզեցված ընթացակարգը** կարող է կիրառվել բազմաթիվ համատեքստերում՝ գործերի այն ծավալի կամ կոնկրետ կատեգորիայի անձանց դեպքում, որտեղ առկա է հայցերի միատարրություն, և որտեղ առկա են պաշտպանության տրամադրման շատ բարձր ցուցանիշներ (այդ թվում, երբ առկա են ներառության կանխավարկածը կամ ակնհայտորեն հիմնավորված հայցեր), ինչպես նաև այնպիսի իրավիճակներում, երբ առկա է պաշտպանության շատ ցածր ցուցանիշներով գործերի ծավալ (այդ թվում՝ ակնհայտորեն անհիմն գործեր): ՓԿՈ պարզեցված ընթացակարգը կարող է, ի թիվս այլնի, ներառել ՓԿՈ գնահատման ձևաթղթերի մշակումը՝ նախապես լրացված իրավական վերլուծությամբ և (կամ) նախապես լրացված ԾԵՏ-ով, կամ հարցազրույցների միջոցով, որոնց դեպքում շեշտը դրվում է միայն հայցի հիմնական հայեցակետերի վրա, ինչպիսիք են ծագման տարածքը, էթնիկ պատկանելությունը կամ կրոնը:

**ՓԿՈ սովորական գործընթացը** վերաբերում է այնպիսի ՓԿՈ ընթացակարգին, որի շրջանակներում համակողմանիորեն, անհատական հիմունքներով ուսումնասիրվում է դիմումատուի հայցը: Այս ընթացակարգը ցանկալի է կիրառել զգայուն կամ բարդ գործերի, ինչպես նաև մյուս այն գործերի դեպքում, երբ առաջանում են ներառության, արժանահավատության կամ բացառության խնդիրներ կամ մտավախություններ, կամ որտեղ նպատակահարմար չէ կիրառել արագացված կամ պարզեցված ընթացակարգ: Թեև անհնար է տալ նմանատիպ գործերի սպառիչ ցանկ, այնուամենայնիվ, որոշ տեսակի կատեգորիայի անձանց շարքին են դասվում երկարատև զինվորական ծառայություն անցած, կառավարություններում քաղաքական կամ բարձրաստիճան պաշտոններ զբաղեցրած կամ որպես ոստիկանության ծառայող կամ նմանատիպ այլ պաշտոններ զբաղեցրած անձինք:

**ՓԿՈ արագացված ընթացակարգը** վերաբերում է այն ընթացակարգին, որը ներառում է հայցի քննությունը/գնահատումն ըստ էության և անհատական ընթացակարգով, սակայն ՓԿՈ գործընթացի բոլոր կամ որոշ փուլերի արագացմամբ կամ կրճատմամբ: Այն հաճախ կիրառվում է նույն համատեքստերում, ինչ ՓԿՈ պարզեցված ընթացակարգը, սակայն կարող է կիրառվել ՓԿՈ այլ շատ ընթացակարգերի հետ միասին: Այն հաճախ կիրառվում է նաև հատուկ կարիքներ կամ ֆիզիկական կամ իրավական պաշտպանության մեծ կարիքներ ունեցող դիմումատուների հայցերի առնչությամբ: Հարկ է նշել, որ գործը կարող է միաժամանակ քննվել առաջնահերթության կարգով և արագացված ընթացակարգի շրջանակներում:

[37] ՄԱԿ ՓԳՀ, *ՄԱԿ* ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակներում ՓԿՈ ընթացակարգերի նկատմամբ կիրառելի՝ գործերի քննության մեթոդների, եզրույթների և հասկացությունների հուշաթերթ և բառարան (Բառարան), 2020թ., www.refworld.org/docid/5a2657e44.html

18. Թեև որոշ ազգությունների և կատեգորիաների դեպքում կարող է անհրաժեշտ լինել հստակեցնել միայն մեկ կամ երկու էական տարր՝ գործի քննության մեթոդների առումով արդյունավետ տեսակավորում ապահովելու համար, այլ կատեգորիաների դեպքում կարող է անհրաժեշտ լինել հստակեցնել լրացուցիչ տարրեր: Կարևոր է սահմանել հստակ և թափանցիկ, սակայն բավականաչափ ճկուն չափանիշներ՝ կառավարելու և, հարկ եղած դեպքում, հարմարեցնելու տեսակավորման գործընթացը: Դա կնպաստի գործընթացի թափանցիկությանն ու անաչառությանը և թույլ կտա խուսափել բարդ գործերով պարզեցված քննությունը ծանրաբեռնելը, ինչը գործընթացը կդարձնի անարդյունավետ: Անհրաժեշտ է նախատեսել գործերը սովորական ՓԿՈ ուղղելու ընթացակարգեր, եթե պարզվի, որ գործը ենթակա չէ ՓԿՈ պարզեցված և (կամ) արագացված ընթացակարգի շրջանակներում քննության:

19. **Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունները** և առկայության դեպքում երկրների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույցը համարվում են գործընթացի հիմնական բաղադրիչները և նպաստում են գործերի տեսակավորմանը և դրանց քննության մեթոդների կիրառմանը: Առկայության դեպքում երկրների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույցները, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի Միջազգային պաշտպանության կարիքի գնահատման ուղեցույցները, Միջազգային պաշտպանության առնչությամբ առաջարկները և Վերադարձի վերաբերյալ դիրքորոշումները պետք է օգտագործվեն՝ տեսակավորման վերաբերյալ որոշումները հիմնավորելու համար: Բոլոր դեպքերում տեսակավորման նպատակով ապաստան հայցողների կատեգորիաներ սահմանելիս և գործիքներ ու ձևանմուշներ մշակելիս, ինչպես նաև պարզեցված և (կամ) արագացված ընթացակարգերի դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ծագման երկրի վերաբերյալ ժամանակին, տեղին և հուսալի տեղեկությունները: ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից հավանության արժանացած ԾԵՏ-ի շտեմարանը ecoi.net-ն է,[38] որը կառավարվում է Ավստրիայի՝ Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների և ապաստանի հարցերով հետազոտությունների ու փաստաթղթերի կենտրոնի (ACCORD) կողմից: Այն պարունակում է ԾԵՏ՝ սկզբնաղբյուրներից, ինչպես նաև իր գործընկեր կազմակերպություններին՝ ACCORD-ին և Ապաստանի հարցերով հետազոտական կենտրոնին (ԱՀԿ)[39] ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ԾԵՏ ժողովածուներ, ինչպես նաև այլ կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ Ապաստանի հարցերով Եվրոպական միության գործակալության (ԱԵՄԳ)[40] և ապաստանի առանձին երկրների՝ ԾԵՏ-ի հարցերով ստորաբաժանումների (օրինակ՝ Բելգիայի՝ Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի (CEDOCA)[41], ՆՓԽ-ի[42] և Նորվեգիայի Landinfo-ի[43] և այլ կազմակերպությունների) կողմից կազմված ժողովածուները:



© UNHCR/ D. Telemans

---

38 Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների եվրոպական ցանց, www.ecoi.net/:

39 Ապաստանի հարցերով հետազոտական կենտրոն (ԱՀԿ), https://asylumresearchcentre.org/:

40 Ապաստանի հարցերով եվրոպական միության գործակալություն (ԱԵՄԳ), https://euaa.europa.eu/:

41 Բելգիա, Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (CEDOCA), https://bit.ly/3IK5V69:

42 ՆՓԽ, Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություններ, https://irb.gc.ca/en/country-information/Pages/index.aspx:

43 Landinfo, https://landinfo.no/en/:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Կանադա

**Կանադայում** ՆՓԽ-ն 2017 թվականից ընդլայնել է փախստականների հայցերի տեսակավորման և արտահերթ կարգով քննության համակարգը՝ կիրառելով կա՛մ գործի քննության գրավոր ընթացակարգ կա՛մ կարճ լսումներ:[45] Անվտանգության սքրինինգից հետո կիրառվում է գործերի արտահերթ կարգով քննության երկու մեթոդ՝ (i) հայցերի վերաբերյալ որոշումներ կայացվում են առանց լսումների (գործի նյութերի ուսումնասիրման գործընթաց) կամ (ii) կարճ լսումների գործընթաց:[46] Որպեսզի հայցի վերաբերյալ որոշում կայացվի առանց լսումների, այն պետք է համապատասխանի *«Պակաս բարդություն ներկայացնող հայցերի հոսքը կարգավորող հրահանգներով»* (Հրահանգներ) սահմանված չափանիշներին:[47] Հրահանգներով նախատեսվում է, որ ՆՓԽ-ի Փախստականների պաշտպանության հարցերով բաժինը (ՓՊԲ) պետք է հաշվի առնի երկրում առկա պայմանները՝ որոշելու, թե որ հայցերի դեպքում է նպատակահարմար կիրառել արտահերթ կարգով գործերի քննությունը: Որոշ երկրներից ներկայացվող դիմումները կամ հայցերի տեսակները սովորաբար կարող են քննվել առանց լսումների, եթե՝

- ինքնությունը հաստատվում է հավաստի փաստաթղթերով.
- ապացույցները երկիմաստ բնույթ չեն կրում այն ռիսկի առնչությամբ, որին ենթարկված են հայցվորները.
- լսումների ժամանակ բարդ իրավական կամ փաստական խնդիրներ հաճախ չեն ծագում, և
- երկիրը կամ հայցի տեսակն ունի 80 տոկոս կամ ավելի ընդունման ցուցանիշ:[48]

Բանավոր լսումների անցկացման ընթացակարգային արդարությունը պահպանելու նկատառումներից ելնելով՝ երբ առկա է արժանահավատության խնդիր, բացասական որոշում չի կարող կայացվել առանց լսումների: Արդյունքում, միայն դրական հայցերի վերաբերյալ որոշումներն են կայացվում գործի նյութերի ուսումնասիրության գործընթացի միջոցով: ՓՊԲ-ն գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա որոշում չի կայացնի հետևյալ դեպքերում՝

- չի ստացվել անվտանգության նախնական սքրինինքի հաստատում.
- Նախարարը միջամտելու ծանուցում է ներկայացրել՝ գործընթացում անձամբ միջամտելու համար.
- ծանուցում է ուղարկվել ՓՊԲ-ի կանոնների համաձայն՝ ծանուցելով Նախարարին հնարավոր բացառման, հայցի անընդունելիության կամ անաչառության հետ կապված խնդրի մասին.
- առկա են հայցվորի ինքնության հաստատման հետ կապված խնդիրներ, որոնք պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություն.
- առկա են արժանահավատության հետ կապված լուրջ խնդիրներ, որոնք առաջանում են գործի փաստաթղթերից.
- հայցը չի համապատասխանում երկրի վերաբերյալ տեղեկություններին, կամ
- առկա են բարդ իրավական կամ փաստական խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է անցկացնել լսումներ:

Կարճ լսումները սովորաբար ավարտվում են երկու ժամվա ընթացքում: Բոլոր հայցերը, որոնք հնարավոր է քննել գործի նյութերի ուսումնասիրման գործընթացի շրջանակներում, կարող են քննվել նաև կարճ լսումների շրջանակներում:[49] Հայցն ընդհանուր առմամբ կարող է քննվել կարճ լսումների գործընթացի շրջանակներում, եթե երկիրը կամ հայցի տեսակը՝

- ունի 80 տոկոս կամ ավելի ընդունման ցուցանիշ կամ 20 տոկոս կամ պակաս ընդունման ցուցանիշ.
- սովորաբար պահանջում է ընդամենը մեկ կամ երկու վճռորոշ խնդիրների լուծում, և
- լսումների ժամանակ բարդ իրավական կամ փաստական խնդիրներ հաճախ չեն ծագում:[50]

Գործերի տեսակավորման գործընթացին աջակցելու և գործի նյութերը լսումների համար նախապատրաստելու նպատակով աշխատանքի են ընդունվել Հայցերի քննության հարցերով աշխատակիցներ (ՀՔԱ), որպեսզի աջակցեն ՆՓԽ-ի անդամներին՝ բացելու գործեր և նախապատրաստելու գործի նյութերը՝ կիրառելով տվյալների վրա հիմնված՝ բանալի բառերով որոնումներ կատարելու հնարավորությունը՝ տեսակավորման համար:

[44] ՆՓԽ, *«Փախստականների պաշտպանության հարցերով բաժնում պակաս բարդություն ներկայացնող հայցերի հոսքը կարգավորող հրահանգներ»* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/3ABvrHX:

[45] ՆՓԽ, *Գերատեսչության գործունեության արդյունքների վերաբերյալ 2019-2020 թվականների զեկույց* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 22-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/3IIhNWe:

[46] ՆՓԽ, *Պակաս բարդություն ներկայացնող հայցեր. լսումների արագացված գործընթաց և գործի նյութերի ուսումնասիրման գործընթաց* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ),https://bit.ly/3r9YH5C:

[47] ՆՓԽ, *«Փախստականների պաշտպանության հարցերով բաժնում պակաս բարդություն ներկայացնող հայցերի հոսքը կարգավորող հրահանգներ»* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://irb-cisr.gc.ca/en/legal-policy/policies/Pages/instructions-less-complex-claims.aspx:

[48] ՆՓԽ, *Երկրի և հայցի տեսակի առնչությամբ չափանիշներ. «Պակաս բարդություն ներկայացնող հայցերի հոսքը կարգավորող հրահանգներ»* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://irb-cisr.gc.ca/en/legal-policy/procedures/Pages/countries-claim-types-criteria.aspx:

[49] Նույն տեղում:

[50] Նույն տեղում:

Սահմանված չափանիշների և գործում առկա տեղեկությունների հիման վրա ՀՔԱ-ն կարող է ՆՓԽ-ի անդամներին այնուհետև առաջարկել հայցի վերաբերյալ որոշում կայացնել առանց լսումների, կարճ լսումների կամ ամբողջական լսումների շրջանակներում: ՀՔԱ-ներն իրականացնում են վարչական գործառույթ և չունեն առանձին գործով որոշում կայացնելու իրավասություն: Փորձնական նախագծի իրականացման ընթացքը ցույց է տվել, որ մինչ այժմ գործերի տեսակավորման և գործերի նախապատրաստման նկատմամբ նման աջակցություն վայելող մոտեցումը հանգեցրել է խորհրդի անդամների աշխատանքի և որոշումների կայացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, ՆՓԽ-ն ստեղծել է նվիրյալ մասնագետների հատուկ թիմից բաղկացած *Գենդերային հարցերով հանձնախումբ*, որը կարող է առավել արդյունավետորեն լսել և որոշում կայացնել փախստականների գենդերային հարցերի հետ կապված հայցերի առնչությամբ:[51] Հանձնախմբում ընդգրկված ՆՓԽ-ի անդամները վերապատրաստում են անցել նմանօրինակ հայցերը կառավարելու թեմայով՝ ավելի հարգալից և տրավմաների հաշվառմամբ մոտեցում ապահովելու նպատակով:

Իրավական օգնություն տրամադրողներն ա, ինչպես օրինակ՝ «Legal Aid Ontario» կազմակերպությունը[52] և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես օրինակ՝ Կանադայի փախստականների գործերով զբաղվող իրավաբանների ասոցիացիան (ԿՓԳԻԱ)[53], դրականորեն են արձագանքել քաղաքացիական հասարակության հետ հետադարձ կապի հիմնականում խորհրդատվական բնույթն ու կառուցվածքը՝ մինչև նոր փորձնական ծրագրեր կամ հնարավորության դեպքում գործիքներ ներդնելը: ԿՓԳԻԱ-ն նշել է, որ ՆՓԽ-ի անդամների՝ հարցազրույցներ անցկացնելու և հայցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու թեմաներով վերապատրաստման դասընթացների վրա դրված մեծ շեշտադրումը հանգեցրել է արդյունավետության բարձրացման և առավել նպատակաուղղված ու կարճ լսումների:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Իտալիա

**Իտալիայում** հայցերի առաջնահերթությունների սահմանումը կիրառվում է հիմնավորված դիմումների և հատուկ կարիքներ ունեցող անձանց կողմից ներկայացված հայցերի նկատմամբ: Այնուամենայնիվ, ակնհայտորեն անհիմն դիմումները, այդ թվում՝ այն դիմումները, որոնք՝ (i) ներկայացվել են սահմանի անցակետերում կիրառվող ընթացակարգերի շրջանակներում, (ii) ներկայացվել են անվտանգ ծագման երկրներից ժամանած կամ արտաքսման կենտրոններում պահվող անձանց կողմից կամ (iii) ներկայացվել են միայն վտարման որոշումից խուսափելու կամ այն հետաձգելու նպատակով, ուղարկվում են քննության արագացված ընթացակարգերի շրջանակներում՝ քննության համար նախատեսված բավականաչափ խիստ ժամկետներով: Այս գործերով որոշումները պետք է կայացվեն իննօրյա ժամկետում (յոթ օր հարցազրույցի համար և երկու օր որոշում կայացնելու համար), որն օրենքով նախատեսված կարգով կարող է երկարաձգվել, եթե դա անհրաժեշտ է հայցի համակողմանի քննությունն ապահովելու համար:

Համաձայն օրենքի հստակ դրույթի՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց նկատմամբ արագացված ընթացակարգերը, ինչպես նաև ակնհայտորեն անհիմն որոշումներ չեն կիրառվում:[54, 55] Թեև գործերի տեսակավորումն իրականացվում է հաշվառման փուլում դրա համար պատասխանատու ոստիկանության ծառայողների կողմից, այնուամենայնիվ, ՓԿՈ-ի համար պատասխանատու տարածքային հանձնաժողովները կարող են վերահասցեագրել ի սկզբանե արագացված ընթացակարգի շրջանակներում քննության ենթակա հայցերը սովորական ընթացակարգի շրջանակներում քննության: Սա որպես կանոն տեղի է ունենում, երբ ՓԿՈ-ի հարցազրույցի ժամանակ ի հայտ են գալիս հատուկ կարիքներ և (կամ) գործի բարդության պատճառով: Տարածքային հանձնաժողովները յուրաքանչյուր առանձին դիմում համակողմանիորեն քննում են՝ համակարգի աշխատանքի որակն ու արդյունավետությունը խթանելու և բողոքարկումների թիվը հնարավորինս նվազեցնելու համար:

51 ՆՓԽ, *Գենդերային հարցերով հանձնախումբ* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://irb.gc.ca/en/refugee-claims/Pages/gender-related-task-force-rpd.aspx: Հարկ է նշել, որ կայքում առկա տեղեկությունները 2020 թվականի տեղեկություններ են, և այդ ժամանակվանից ի վեր նմանօրինակ հայցերը քննելու կարողություններն ավելացել են: Օրինակ՝ ներկայումս կան 26 անդամներ, որոնք լսում և որոշում են կայացնում միայն գենդերային հարցերի հետ կապված հայցերի առնչությամբ, ինչպես նաև հիբրիդային ձևաչափով աշխատող 11 լրացուցիչ անդամներ, որոնք լսում և որոշում են կայացնում ինչպես սովորական, այնպես էլ գենդերային հարցերի հետ կապված հայցերը:

52 «Legal Aid Ontario», www.legalaid.on.ca/:

53 Կանադայի փախստականների հարցերով զբաղվող իրավաբանների ասոցիացիա, https://carl-acaadr.ca/:

54 Ապաստանի դիմում ներկայացրած հատուկ կարիքներ ունեցող անձանց շարքին են դասվում երեխաները, առանց ուղեկցության երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները, հղի կանայք, մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող միայնակ ծնողները, մարդկանց թրաֆիքինգի զոհերը, լուրջ առողջական կամ հոգեկան խնդիրներ ունեցող անձինք, խոշտանգումներ, բռնաբարություն վերապրածները կամ հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնության այլ լուրջ ձևերի կամ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության առնչությամբ բռնության ենթարկված անձինք և կանանց սեռական օրգանների խեղման զոհերը:

55 142/2015 օրենսդրական ակտի 17-րդ հոդվածը, որը չեղյալ է հայտարարվել 28bis հոդվածով և 25/2008 օրենսդրական ակտի 28-րդ հոդվածով:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեդիա

2018 թվականին **Շվեդիայի** ՇՄԳ-ն գործարկել է Ապաստան 360 պիլոտային նախագիծը, որի նպատակն էր ներդնել հենանիշերի և այսպես կոչված կատարման ժամանակի [lead time] վրա հիմնված՝ ժամանակով սահմանափակված գործընթաց, որը պահանջում է գործընթացի հոսքի պրոակտիվ պլանավորում: Ապաստան 360 նախագծի իրականացման ընթացքում դիմումատուն 30 օր բնակվում է իր գործի քննության վայրի հարևանությամբ գտնվող կացարանում, ինչն էլ ավելի է բարձրացնում գործընթացի արդյունավետությունն ու նվազեցնում ծախսատարությունը, այդ թվում՝ կրճատում չհաղարկված հարցազրույցների թիվն ու տրանսպորտային ծախսերը: Ժամանակով սահմանափակված գործընթացի գերակա նպատակն այն է, որ գործի քննության ընդհանուր ժամանակը պետք է հնարավորինս կարճ լինի, և արդյունքում դիմումատուն հնարավորինս շուտ տեղեկացվի կայացված որոշման մասին:

Այդ մոտեցման առանցքային բաղադրիչներից մեկը գործընթացի տարբեր փուլերի միջև անհարկի պարապուրդի (կամ անգործության ժամանակահատվածի) վերացումն է: Դա պահանջում է, որ որոշում կայացնող աշխատակիցը, որը պատասխանատու է հարցազրույցների անցկացման և հայցի վերաբերյալ որոշում կայացնելու համար, պատասխանատվություն է ստանձնում գործի քննության ընթացքի նկատմամբ, այսինքն (i) մշակում է գործի քննության պլան, որի համաձայն իրականացվում է գործողությունների հաջորդականությունը, (ii) ապահովում է սերտ երկխոսություն համապատասխան գործընկերների և շահագրգիռ կողմերի (այդ թվում՝ իրավաբանական օգնություն տրամադրող անձանց) միջև, (iii) ապահովում է գործի քննությունը սահմանված ընթացակարգի շրջանակներում և որոշում է կայացնում, հնարավորության դեպքում, սահմանված կատարման ժամկետում: Նշվել է, որ գործի քննության առավել կարճ ժամանակահատվածը նվազեցնում է դրա վերաբերյալ որոշում կայացնողների միջև հայցի անհարկի փոխանցման անհրաժեշտությունը՝ այդկերպ բարձրացնելով հայցի քննության արդյունավետությունը:

Համաձայն ՇՄԳ-ի ներքին ուղեցույցի՝ համարվում է, որ կատարման ժամանակն իրենից ներկայացնում է ժամկետների առնչությամբ առաջարկվող ուղեցույց, և եթե իրավական և անվտանգության նկատառումներից ելնելով կոնկրետ գործունեություն առավել երկար ժամանակահատված է պահանջում, ապա դա պետք է հաշվի առնվի, և գործը վերահասցեագրվի Հետագիծ 3-ի շրջանակներում քննության:

ՇՄԳ-ն սահմանել է ժամանակով սահմանափակված գործընթաց՝ համաձայն հետևյալ փուլերի՝

| Ապաստանի դիմում | Լուսանկար և մատնահետքեր | Դիմումի առնչությամբ նախնական հարցազրույց | Հետագծի որոշում | Ապաստանի տրամադրման համար հարցազրույց | Որոշման կայացում | Ծանուցում |
|---|---|---|---|---|---|---|

2016 թվականից ՇՄԳ-ն ներդրել է հետագծերի համակարգ, որի համաձայն՝ ապաստանի դիմումներն ուղղորդվում են կոնկրետ ընթացակարգերի (հետագծերի) շրջանակներում քննության՝ ըստ նախնական գործընթացում դիմումների բնութագրիչ հատկանիշների:

Գործընթացին նպաստելու նպատակով ՇՄԳ-ն մշակել է ուղեցույցներ՝ հենանիշերով, որոնք վերաբերում են գործընթացի հիմնական գործողությունների միջև ընկած կատարման ժամանակներին: Նպատակը պարզ, արագ, ծախսարդյունավետ և, առաջին հերթին, գործերի քննության իրավաբանորեն անվտանգ համակարգ ստեղծելն է:

Այդ նպատակով հետագծերի համակարգն ապահովում է կանխատեսելիություն և առավել լավ պլանավորման հնարավորություն է տալիս՝ նշելով, թե ինչ միջոցներ են անհրաժեշտ տարբեր տեսակի գործեր քննելու համար: Այն նաև թույլ է տալիս պլանավորել վերապատրաստում, կարողությունների զարգացում, ինչպես նաև առաջարկում է անձնակազմի շրջանում մասնագիտացման հնարավորություններ:

Համակարգի կառուցվածքը հետևյալն է. որպես կանոն, բոլոր գործերը պետք է դասակարգվեն մեկ հետագծի ներքո՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք ձեռք են բերվել (i) ապաստանի դիմումից (ii) գործը քննող աշխատակցի կողմից անցկացվող նախնական հարցազրույցից (iii) անձը հաստատող փաստաթղթերից և (iiii) գործով այլ տեղեկություններից: Գործի ուղղորդումն ըստ կոնկրետ հետագծերի ի սկզբանե կատարվում է Դիմումների բաժնում գործը քննող աշխատակցի կողմից, որն զբաղվում է գործով և տիրապետում է դրա մանրամասներին՝ օգտագործելով հատուկ մշակված համակարգչային ծրագիր: Գործընթացի ավելի ուշ փուլում, նոր հանգամանքների ի հայտ գալուն զուգընթաց, որոշում կայացնող աշխատակիցը, որն Ապաստանի հարցերով բաժնում հատուկ համակարգչային ծրագրով մշակում է գործի նյութերը, կարող է կատարվել գործի վերադասակարգում: Օրինակ, եթե գործն այլևս չի համարվում որպես ենթադրաբար բավարարվող (Հետագիծ 1), ապա այն կարող է ուղղվել մեկ այլ՝ առավել հարմար հետագիծ:

Հետագծերի համակարգը սերտորեն փոխկապված է ժամանակով սահմանափակված գործընթացի հետ, քանի որ գոյություն ունեն տարբեր հենանիշեր (ժամանակացույցեր)՝ կախված այն հանգամանքից, թե գործը որ հետագծի ներքո է դասակարգվում:

Հարկ է նշել, որ գործի առանձնահատկություններից է կախված, թե որ հետագծի ներքո այն կդասակարգվի և, այս առումով, նույն հետագծերը գործում են թե՛ մեծահասակների և երեխաների, թե՛ առանց ուղեկցության անչափահասների կամ հատուկ կարիքներ ունեցող անձանց դեպքում: Այնուամենայնիվ, ընտանիքի միասնության նպատակով ընտանիքի անդամների դիմումները քննվում են միասին՝ անկախ նրանց առանձնահատկություններից: Համապատասխան հետագծերի շրջանակներում կարող են միջոցներ ձեռնարկվել՝ անձի կոնկրետ կարիքները հաշվի առնելու նպատակով:

Հետագծերի համակարգի ամփոփ նկարագիրը.

Հետագիծ 1-ը վերաբերում է այն գործերին, երբ (i) կա կանխավարկած, որ հայցը կբավարարվի, և կտրամադրվի կացության թույլտվություն, (ii) չկա հանրային պաշտպան նշանակելու անհրաժեշտություն և (iii) բանավոր հարցազրույցից բացի չկա գործի քննության այլ կարևոր փուլերի անհրաժեշտություն:

Հետագիծ 2-ը վերաբերում է այն գործերին, որոնց դեպքում հաստատվելու կանխավարկած չկա, մինչդեռ Հետագիծ 3-ը վերաբերում է բարդ գործերին, որոնց դեպքում հնարավոր է, որ գործի քննության ժամկետը տևի 6 ամսից ավելի: Հարկ է նշել, որ որպես կանոն գործերը նախնական սքրինինգի ժամանակ Հետագիծ 3 չեն ուղղորդվում:

Այլ կատեգորիաների համար քաղաքականությամբ նախատեսվում են հատուկ հետագծեր, այդ թվում՝

- արագացված ընթացակարգեր՝ Հետագիծ 4-ում. Հետագիծ 4Ա-ի ներքո գործերը դասակարգվում են՝ հիմնվելով այն կանխավարկածի վրա, որ դիմումը կմերժվի, և վտարումը կիրագործվի անմիջապես, կամ երբ դիմումատուն ԵՄ (Եվրոպական միության) քաղաքացի է (այս կատեգորիան ներառում է նաև ակնհայտորեն անհիմն գործերը): Հետագիծ 4Բ-ի ներքո դասակարգվում են այն գործերը, որոնք վերաբերում են ապաստանի տրամադրման ցածր ցուցանիշներ ունեցող երկրներին, ինչպես նաև այն գործերը, երբ հնարավոր է կիրառել արագ գնահատման ընթացակարգ և ապահովել արագ հարկադիր վերադարձ: Այս գործերում պետք է կիրառել համապարփակ մոտեցում, քանի որ անիմաստ է կիրառել արտահերթ կարգով գործերի քննության ընթացակարգը մինչև որոշման կայացման պահը, եթե վերադարձը հնարավոր չէ ապահովել.
- Հետագիծ 5Ա-ի շրջանակներում քննվում են Դուբլինի կանոնակարգի համաձայն քննվող գործերը.
- Հետագծեր 5Բ-ի և 5Գ-ի ներքո դասակարգվում են այն գործերը, որոնք վերաբերում են ընդունելիության ընթացակարգերին, ընդ որում նշվում է, որ դիմումը կարող է մերժվել անընդունելի լինելու հիմքով, եթե դիմումատուն (i) ձեռք է բերել միջազգային պաշտպանություն մեկ այլ ԵՄ անդամ պետությունից, (ii) մուտք է գործել ապաստանի առաջին երկրից կամ (iii) մուտք է գործել անվտանգ երրորդ երկրից:

Տարբեր հետագծերի համար սահմանված են հստակ հենանիշեր և ժամանակացույցեր, այդ թվում՝

- Սովորական ընթացակարգերի շրջանակներում (Հետագծեր 1 և 2) փախստականի կարգավիճակը որոշող մարմինը պետք է առաջին ատյանում ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնի 9-50 օրվա ընթացքում՝ Հետագիծ 1-ի ներքո դասակարգվող գործերի համար, և 23-110 օրվա ընթացքում՝ Հետագիծ 2-ի ներքո դասակարգվող գործերի համար.
- Հետագիծ 3-ի ներքո դասակարգված գործերի դեպքում կա ենթադրություն, որ գործի քննությունը կհետաձգվի, և կատարման ժամանակը, որպես կանոն, կգերազանցի վեց ամիսը: Այս գործերը չեն քննվում հոսքի մեջ.
- Արագացված ընթացակարգերի շրջանակներում քննության ենթակա գործերի դեպքում (Հետագիծ 4) որոշումը պետք է կայացվի 8-54 օրվա ընթացքում՝ Հետագիծ 4ա-ի ներքո դասակարգվող գործերի համար, և 23-75 օրվա ընթացքում՝ Հետագիծ 4բ-ի ներքո դասակարգվող գործերի համար.
- Այն դիմումների վերաբերյալ որոշումը, որոնց առնչությամբ առկա է ընդունելիության հարց, կկայացվի 3 ամսվա ընթացքում (Հետագծեր 5Բ և 5Գ):
- Որպես կանոն, Միգրացիոն դատարանի կողմից ապաստանի տրամադրման վերաբերյալ կայացված որոշումը դիմումատուին հանձնելուց հետո դիմումատուն ունի 3 շաբաթ ժամանակ, լինի դա ընդհանուր, թե արագացված ընթացակարգերի շրջանակներում, որպեսզի վերաքննիչ բողոք ներկայացնի Միգրացիոն վերաքննիչ դատարան: Միգրացիոն վերաքննիչ դատարանի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեյցարիա

**Շվեյցարիայում** 2019 թվականի մարտին ապաստանի նոր ընթացակարգի շրջանակներում ներդրվել են գործերի տեսակավորման և դրանց քննության տարբերակված մեթոդները՝ կախված գործերի բնույթից, այդ թվում՝ (i) Դուբլինի ընթացակարգեր, (ii) արագացված ընթացակարգեր և (iii) ընդլայնված ընթացակարգեր (այսինքն՝ ՓԿՈ սովորական ընթացակարգ)։ Ըստ գնահատման՝ ի վերջո, բոլոր գործերի մոտ մեկ երրորդի վերաբերյալ որոշումները կայացվում են արագացված ընթացակարգի շրջանակներում՝ նպատակ ունենալով գործի վերաբերյալ որոշումը կայացնել ութ օրվա ընթացքում։[57] Որպես երաշխիք՝ գործընթացի սկզբից դիմումատուներին տրամադրվում է անվճար խորհրդատվություն և իրավաբանական ներկայացուցչություն (տե՛ս ստորև, պարբերություն 29)։[58]

Ապաստանի տրամադրման նոր ընթացակարգի ներդրմամբ ապաստանի տրամադրման գործընթացի միջին տևողությունը՝ ընդհուպ մինչև առաջին ատյանում որոշման կայացումը, նախապատրաստական փուլը ներառյալ, զգալիորեն կրճատվել է։ ՄՊՔ-ն կարողանում էր արագացված ընթացակարգերի շրջանակներում տեսակավորված գործերն ավարտել միջինը 55 օրվա ընթացքում։[59] ՄՊՔ-ի կողմից կատարված ներքին վերլուծությունը ցույց է տվել, որ 2019 թվականի մարտից մինչև 2021 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում ապաստանի նոր ընթացակարգերի, այդ թվում՝ առաջին ատյանի (արագացված և ընդլայնված ընթացակարգերի) և բողոքարկման ընթացակարգերի շրջանակներում գործերի քննությունը տևել է միջինը 93 օր։ Սա ավելի քան հինգ անգամ ավելի արագ է, քան նախկին օրենքի համաձայն քննվող գործերի տևողությունը (500 օր)։ Կարևոր է նշել, որ արագացված ընթացակարգերի շրջանակներում կենտրոնանում են ոչ միայն ակնհայտորեն անհիմն հայցերի վրա, և հատկանշական է, որ կայացված դրական որոշումների թիվը կազմում է բոլոր որոշումների մոտ քառորդը, հետևաբար՝ այն համարվում է համեմատաբար բարձր ցուցանիշ։

Գործով որոշման նախապատրաստական և արագացված փուլում կատարված ներդրումների շնորհիվ աճել են պաշտպանության տրամադրման և անհատական որոշումների որակի արդյունավետությունը և ընդհանուր առմամբ դրական արդյունքները։ ՄՊՔ-ի կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ 2020 թվականին ապաստանի վերաբերյալ բոլոր բացասական որոշումների շուրջ 96 տոկոսը, որոնք կարող էին բողոքարկվել, հաստատվել է։ Այսպիսով, 100 գործից 96-ում ապաստան հայցողները կա՛մ ձեռնպահ են մնացել ՄՊՔ-ի որոշումների դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելուց, կա՛մ ներկայացված վերաքննիչ բողոքները հաստատվել Դաշնային վարչական դատարանի կողմից։ Ապաստանի տրամադրման 100 մերժված դիմումներից միայն 4-ի դեպքում է Դաշնային վարչական դատարանը (ԴՎԴ) փոփոխել ՄՊՔ-ի որոշումները, կամ ստիպված է եղել գնահատել դրանք այլ կերպ։[60]

Արտաքին գնահատումը նույնպես ցույց է տվել, որ ընդհանուր առմամբ արագացված ընթացակարգի շրջանակներում քննված գործերի վերաբերյալ որոշումների կայացման որակը բավարար էր, թեև որոշ մտահոգություններ կային։[61] 2019 թվականին, որն ապաստանի նոր ընթացակարգի ներդրման առաջին տարին էր, կար մտահոգություն այն մասին, որ չափազանց շատ դիմումներ էին քննվում արագացված ընթացակարգի շրջանակներում։ ԴՎԴ-ի կողմից մի շարք գործեր (վճռաբեկության կարգով) բեկանվել էին, և 2020 թվականի հունիսին ԴՎԴ-ի կողմից կայացված նախադեպային որոշմամբ (2020 թվականի հունիսի 9-ի E-6713/2019 վճիռը) ընդունվել է, որ գործը պետք է ուղարկվեր ընդլայնված ընթացակարգի շրջանակներում քննության։ Արդյունքում, 2020 թվականի գարնանը ՄՊՔ-ն փոփոխություններ կատարեց գործերի տեսակավորման և դրանց քննության համար համապատասխան ընթացակարգերի ընտրության վերաբերյալ իր ուղեցույցներում ու ստուգաթերթերում։[62] Բացի այդ, առանձնահատուկ շեշտադրվեց մինչև գործերի տեսակավորումը բավարար ռեսուրսների հատկացմանը՝ ինչպես անձնակազմի համալրման, այնպես էլ նախապատրաստական հարցազրույցների և փաստաթղթերի ստուգման նպատակով, ինչի արդյունքում առավել բարդ գործերն այժմ տեսակավորվում են ընդլայնված ընթացակարգի շրջանակներում քննության։ Սա հանգեցրել է թե՛ արագացված և թե՛ ընդլայնված ընթացակարգերի շրջանակներում քննվող գործերի վերաբերյալ կայացվող որոշումների որակի բարելավմանը, և գործերը սխալմամբ ու հապշտապ չեն ուղղորդվում արագացված ընթացակարգերի շրջանակներում քննության։ Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2020 թվականի ընթացքում ընդլայնված ընթացակարգի շրջանակներում քննվող գործերի թիվն աճել է՝ արագացված ընթացակարգերի շրջանակներում քննվող գործերի թվի համամասնության համեմատ։ Գործերի տեսակավորման գործընթացի ճշգրտումներից հետո 2020 թվականին ԴՎԴ-ի կողմից վճռաբեկ բեկանումների ցուցանիշը գրեթե կրկնակի նվազել է։[63]

56 Ապաստանի վերաբերյալ տեղեկությունների շտեմարան (ԱՏՇ), *թարմացվել է 2020 թվականին, Շվեդիա*, https://bit.ly/3rY6HFR։

57 Տե՛ս ՄՊՔ-ի տեղեկատվական թերթիկ թիվ 1 և 2, www.sem.admin.ch/sem/de/home/asyl/asylverfahren/asylregionen-baz/faktenblaetter.html.

58 Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ՄՔՄՄԿ), *Ապաստանի տրամադրման որոշումը բողոքարկելու ընթացակարգը՝ Եվրոպայում ապաստանի տրամադրման համակարգերի և քաղաքականության նպատակների համաձայն*, 2020 թվականի հունվար, https://bit.ly/3o6VJga։

59 ՄՊՔ, Asile: les procédures accélérées fonctionnent globalement bien; des améliorations ont été réalisées ou sont en cours deréalisation (admin.ch) (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/3AE8X96։

60 ՄՊՔ, Asile: les procédures accélérées fonctionnent globalement bien ; des améliorations ont été réalisées ou sont en cours de réalisation (admin.ch) (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), https://www.sem.admin.ch/sem/fr/home/sem/medien/mm.msg-id-84791.html։

61 Évaluation PERU: Protection juridique et qualité des décisions (skmr.ch), *Rapport final (version courte*), p. 4., https://bit.ly/3ABupvy։

62 Evaluation PERU: *Rechsshutz und Entscheidqualitat Schlussbericht, 2021 թվականի օգոստոս*, էջ 40-41, https://bit.ly/3HbBa9E։

63 Évaluation PERU : Protection juridique et qualité des décisions (skmr.ch), Rapport final (version courte), p. 3, https://bit.ly/3ABupvy։

20. Երբ ապաստանի տրամադրման ազգային համակարգ մուտքագրվում է սահմաններին ներկայացված ապաստանի դիմում, միջազգային իրավունքի համաձայն պահանջվում է ապահովել մուտքի թույլտվություն, առնվազն ժամանակավորապես՝ հայցը քննելու համար: Դիմումատուին չընդունելն իմաստազրկում է ապաստան հայցելու իրավունքը և *չվերադարձելիության* սկզբունքը: *«Եվրոպական միությունում սահմանի անցակետերում արդար ու արագ ընթացակարգեր կիրառելու և համերաշխություն ապահովելու վերաբերյալ գործնական առաջարկներ»* աշխատության մեջ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է սահմանի անցակետերում երկքայլ ընթացակարգ, որը հանգեցնում է տեղափոխման կամ վերադարձի, որոնց շրջանակներում շեշտը դրվում է ընդունելիության ընթացակարգերի փոխարեն ըստ էության ընթացակարգերի վրա: Սահմանային անցակետերում կիրառվող ընթացակարգերի այս մոդելն առաջարկվում է՝ հիմնվելով այն գիտակցության վրա, որ ապաստանի համակարգն ամբողջությամբ, այսինքն՝ մուտքի և ելքի կետերում, պետք է լինի պրակտիկ, արդար ու արդյունավետ և ապահովի արագ ու հստակ արդյունքներ:[64]

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Իսպանիա

**Իսպանիայում** սահմանին կիրառվող ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգը[65] պաշտոնական սահմանակետերում (օդանավակայաններում, նավահանգիստներում և արտաքին ցամաքային սահմաններում և տարածվում է միգրանտների կալանքի կենտրոններում ներկայացված դիմումների վրա) իրականացվող կարճ ընթացակարգ է (առավելագույնը 10 օր), որի շրջանակներում դիմումատուն ընթացակարգի իրականացման ընթացքում պահվում է կալանքի նման պայմաններում: Այս ընթացակարգը կիրառվում է այն օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, որոնք չեն համապատասխանում Իսպանիայի տարածք մուտք գործելու պահանջներին, և որոնք միջազգային պաշտպանություն ստանալու դիմում են ներկայացնում սահմանային անցակետում: Հարկ է նշել, որ տարածք մուտք գործելը թույլատրվում է միայն եթե կայացվում է ընդունելիության վերաբերյալ որոշում: Այնուամենայնիվ, Իսպանիայի օրենսդրությունը և ստանդարտները լրովին կիրառելի են այն պահից, երբ անձինք ժամանում են սահմանային անցակետ:

Սահմանային անցակետերում կիրառվող այս ընթացակարգը հիբրիդային համակարգ է, որն իր մեջ ներառում է ընդունելիության և ըստ էության տարրեր: Հաշվառումը և հարցազրույցը վարում են ոստիկանության ծառայողները: Գնահատումն իրականացվում է Ապաստանի հարցերով գրասենյակի (ԱԳ) կողմից, որի շեշտը հիմնականում դրվում է ակնհայտորեն անհիմն հայցերը բացահայտելու և զտելու վրա, մինչդեռ ակնհայտորեն հիմնավորված և բարդ գործերն ուղղորդվում են ԱԳ-ի կողմից վարվող՝ ապաստանի սովորական ընթացակարգի շրջանակներում քննության: Այն նաև ներառում է անվտանգ երրորդ երկրի և Դուբլինի կանոնակարգով ստանձնված պարտավորությունների վերաբերյալ վերլուծություն, ինչը կարող է արդյունքում պատճառ դառնալ այլ երկիր փոխանցման, որպես կանոն՝ ծագման վայր:

Պատշաճ իրավական ընթացակարգի հատուկ երաշխիքները. քանի որ ընթացակարգն իրականացվում է սահմանին՝ նախապես որոշված ժամկետներում, դրա շրջանակներում հաշվի է առնվում դիմումատուի *վերադարձելիության* ռիսկը՝ սխալ որոշում կայացվելու դեպքում, ուստի տրամադրվում են սովորական ներքին ընթացակարգի հետ համեմատած՝ պատշաճ իրավական ընթացակարգի լրացուցիչ երաշխիքներ, այդ թվում՝

- Պարտադիր իրավաբանական օգնություն ընթացակարգի իրականացման հենց սկզբից՝ (i) տեղական փաստաբանների ասոցիացիայի կողմից տրամադրվող փաստաբանի (որը մասնագիտացած է միգրացիայի և ապաստանի գործերում), (ii) մասնագիտացված ՀԿ-ի (պետության կողմից ֆինանսավորվող ՀԿ-ի) իրավաբանի կամ (iii) մասնավոր իրավաբանի կողմից: Իրավաբանական օգնություն չտրամադրվելու դեպքում գործընթացն անվավեր է ճանաչվում, և անձին տրվում է երկիր մուտք գործելու հնարավորություն.
- ՄԱԿ ՓԳՀ-ի վերահսկման լիազորություն. «Ապաստանի մասին» Իսպանիայի օրենքի համաձայն՝ ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն ունի կապ հաստատել և խոսել սահմանին տեղակայված տարածքներում գտնվող ապաստան հայցողի հետ և իշխանություններին ներկայացնել (պարտավորեցնող, սակայն իրավաբանորեն ոչ պարտադիր) գնահատականներ ոչ միայն հայցերի ընդունելիության, այլ նաև պաշտպանության կամ ընթացակարգի հետ կապված ցանկացած այլ խնդրի վերաբերյալ, որոնց վրա իշխանությունները ցանկալի կլիներ, որ ուշադրություն դարձնեին (օրինակ՝ գործընթացի իրականացման որակը, բանավոր թարգմանությունը, հատուկ կարիքները, մարդասիրական պատճառները) և այլն.[66]

64 ՄԱԿ ՓԳՀ, «Եվրոպական միությունում սահմանի անցակետերում արդար ու արագ ընթացակարգեր կիրառելու և համերաշխության վերաբերյալ գործնական հանձնարարականներ», 2020 թվականի հոկտեմբերի 15, www.refworld.org/docid/5f8838974.html:

65 Ապաստանի և լրացուցիչ պաշտպանության իրավունքը կարգավորող՝ «Ապաստանի մասին» հոկտեմբերի 30-ի 12/2009 Իսպանիայի օրենք, հոդվածներ 21 և 22:

66 «Ապաստանի մասին» Իսպանիայի օրենք, հոդված 35(2) և հոդված 21:

- «Դրական վարչական լռության» կիրառում. Ինչպես նախատեսված է օրենքով, եթե իշխանությունները չեն կարողանում պահպանել սահմանված ժամկետները, ապա հայցն ավտոմատ կերպով ուղղորդվում է սովորական ընթացակարգի շրջանակներում քննության, իսկ անձն ընդունվում է երկրի տարածք.

- Ժամկետը երկարաձգելու հնարավորություն, երբ սահմանային անցակետում հայտնաբերվում է այնպիսի գործ, որի շրջանակներում առկա է միջազգային պաշտպանությունից դուրս մնալու վտանգ:

«Ապաստանի մասին» Իսպանիայի օրենքում չնախատեսված այլ դրական տարրեր, որոնք սակայն գործնականում կիրառվում են՝ որոշման որակը բարձրացնելու համար՝

- Ոստիկանություն դիմումատուին տեղեկացնում է իր հայցի կրկնակի քննության հնարավորության մասին: Եթե դիմումատուն հրաժարվում է իր հայցի կրկնակի քննության իրավունքից, ապա դա կատարվում է գրավոր՝ փաստաբանի ներկայությամբ.

- Գործում են հատուկ ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր (ՍԱԸ-ներ)՝ թրաֆիքինգի հնարավոր զոհերին հայտնաբերելու և մասնագիտացված ՀԿ-ներ ուղղորդելու համար (սրանք համարվում են բարդ գործեր).

- Կարմիր Խաչի ներկայությունը՝ սոցիալական աջակցություն ցուցաբերելու այն տարածքներում, որտեղ ապաստան հայցողները պահվում են ընթացակարգի իրականացման ընթացքում: Հարկ եղած դեպքում օդանավակայանում/միգրանտների կալանքի կենտրոններում գործող բուժկետերի կամ ընդհանուր բժշկական ծառայությունների/հիվանդանոցների կողմից տրամադրվում է բուժօգնություն.

- Անձնական հարցազրույցներն անցկացվում են քաղաքացիական հագուստով ոստիկանների կողմից, որոնք հարկ եղած դեպքում օգտվում են փաստաբանի և թարգմանչի ծառայություններից.

- Իշխանությունները պետք է օդանավակայանում ապաստան հայցողներին տրամադրեն հատուկ տարածքներ, որտեղ նրանք կմնան հայցի քննության ընթացքում (հիմնականում Մադրիդի և Բարսելոնայի օդանավակայաններում).

- ՄԱԿ ՓԳՀ-ն հասանելիություն ունի ապաստանի հայց ներկայացրած անձին և կապի մեջ է դիմումի վերաբերյալ որոշում կայացնող մարմնի հետ՝ փաստերի հաստատման և իրավական վերլուծության հետ կապված հարցերի առնչությամբ իրականացվող ընթացակարգի ընթացքում, ինչպես նաև նրա ուշադրությանն է հրավիրում կիրառելի ԾԵՏ-ի, համապատասխան խնդիրների կամ ընթացակարգի թերությունների վրա, որոնք կարող են շտկվել կամ ազդել վերջնական որոշման արդյունքի վրա.

- Որոշման կայացման վերջնաժամկետները պատշաճ կերպով պահպանելու համար ԱԳ-ն ստեղծել է հերթափոխով աշխատանքի համակարգ, որի շրջանակներում աշխատակիցները զբաղվում են այն հայցերի կրկնակի քննություններով, որոնք պետք է լուծվեն հանգստյան կամ տոն օրերին:

Ընթացակարգի մանրամասն նկարագրությունը.

- Ընթացակարգը բաղկացած է երեք փուլից. նախնական հայցի վերաբերյալ որոշումը կայացվում է իշխանությունների կողմից 96 ժամվա ընթացքում (4 օրացուցային օր[67])՝ սկսած այն պահից, երբ անձն ապաստան հայցելու իր մտադրության մասին հայտնում է սահմանապահ ոստիկաններին (կամ բերման է ենթարկվում սահմանային հսկողության կետից), և դիմումը հաշվառվում է: Եթե հայցը մերժվում է, ապա անձը կարող է իր հայցի կրկնակի գնահատման (կրկնակի քննության/բողոքարկման) նպատակով դիմել այն նույն մարմիններին, որոնք որոշում էին կայացրել նախնական հայցի վերաբերյալ, և եթե նրանք կարող են տրամադրել լրացուցիչ տեղեկություններ կամ վիճարկել բացասական որոշումը: Կրկնակի քննության/բողոքարկման մասին դիմումն ունի ավտոմատ կերպով կասեցնող ազդեցություն և պետք է ներկայացվի դիմումատուին աջակցող փաստաբանի կողմից Ներքին գործերի նախարարին՝ որոշման ծանուցումից հետո 48 ժամվա (երկու օրացուցային օրվա) ընթացքում:[68] Իշխանությունները պետք է պատասխանը տրամադրեն 48 ժամվա ընթացքում: Եթե նրանք սահմանված ժամկետում չեն տրամադրում պատասխանը, ապա հայցն ավտոմատ կերպով ընդունվում է, և անձին թույլ է տրվում մուտք գործել տարածք.[69]
- ՄԱԿ ՓԳՀ-ն իրական ժամանակում ստանում է առաջին դիմումի և հայցի կրկնակի քննության դիմումի օրինակը և ապաստանի տրամադրման հարցերով մարմնի կողմից տեղեկացվում է, թե երբ է մերժվելու հայցը, ինչը հնարավորություն է տալիս Գործակալությանը հիմնավորված զեկույց ներկայացնելու իշխանություններին, եթե այն համարում է, որ հայցը պետք է ընդունվի: Զեկույցը իրավաբանորեն պարտադիր չէ:[70] Ապաստանի դիմում ներկայացրած անձին աջակցող փաստաբանները նույնպես ունեն դրանց օրինակը.
- Դիմումատուն կարող է հետագայում բողոքարկել մերժումն Ազգային բարձրագույն դատարան՝ առանց անմիջականորեն կասեցնող ազդեցության և պահանջել միջանկյալ միջոց կիրառումը, որպեսզի դատավորը գնահատի, թե արդյոք պետք է կիրառել կասեցնող ազդեցություն՝ «Ապաստանի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն (ՄԻԵԴ-ի՝ *ԱՍ-ն և այլք ընդդեմ Իսպանիայի* գործի [AC and others vs Spain] (թիվ 6528/11) որոշման համաձայն[71], նման դեպքերում պետք է դիտարկվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը և կասեցնող ազդեցությունը).

- ընթացակարգը թույլ է տալիս նաև ավելի վաղ փուլում բացահայտել հատուկ կարիքներ ունեցող անձանց և հիմնավոր հայցերը, որոնք կարող են քննվել արտահերթության կարգով:

Թեև սահմանային անցակետերում իրականացվող արագացված ընթացակարգի շրջանակներում հասանելի են հիմնավոր և ամուր ընթացակարգային երաշխիքներ, այնուամենայնիվ, նկատվել է, որ այն ժամանակ, երբ նոր ժամանող անձանց թիվը հատկապես մեծ է, ընթացակարգի և դրա երաշխիքների իրականացումը կարող է մարտահրավեր դառնալ՝ հասանելի մարդկային և նյութական ռեսուրսների, սահմանված ստանդարտներին համապատասխան տարածքների և ծառայությունների, հատուկ կարիքները վերհանելու պակասի և սահմանված կարճ ժամկետները պահպանելու դժվարությունների պատճառով, որոնք հանգեցնում են հայցի ավտոմատ ընդունելիության:

Այնուհետև որպես մարտահրավեր նշվել է, որ ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող մարմինը հարցազրույց անցկացնող մարմինը չէ, և որ դիմումատուն անձամբ չի կարող մասնակցել լսումներին մինչև մերժման ստացումը,[72] թեև իշխանությունները հաճախ լրացուցիչ գործողություններ են ձեռնարկում հայցի՝ տարրերը պարզաբանելու համար գրավոր հարցեր ուղարկելու միջոցով:[73]

21. Թեև լինելով շատ պրակտիկ գործիք, այնուամենայնիվ, գործերի տեսակավորումն ինքնին չի կարող լուծել ավելի հիմնարար համակարգային խնդիրները, որոնք կապված են նոր ժամանող անձանց/դիմումների կամ ՓԿՌ-ի ծանրաբեռնվածության հետ: Փոխարենը, գործերի տեսակավորումը պետք է լինի համակարգի նախագծի համալիր միջոցառումների մաս, այդ թվում՝ վերապատրաստումը, ստանդարտացված ձևանմուշները/ձևաթղթերը և փոխգործելի տվյալների շտեմարանները և այլն: Թեմատիկ վերապատրաստում անցած և ապաստանի դիմում ներկայացրած որոշ կատեգորիաների անձանց կամ օրինակ՝ ազգության հիման վրա ներկայացված հայցերի տեսակների վերաբերյալ որոշում կայացնելու փորձառություն ունեցող մասնագիտացված թիմերը, այսինքն՝ անձնակազմը, կարող է նույնպես բարձրացնել արդյունավետությունը: Վերջապես, գործընթացի արդյունավետ մոնիթորինգի համար էական նշանակություն ունի գործերի քննության նպատակների և ժամկետների առումով հստակ չափանիշների սահմանումը: Եթե իրականացվեն բոլոր համապատասխան միջոցները, այդ թվում՝ ապահովվեն համապատասխան մարդկային և այլ ռեսուրսները, ապա ապաստանի գործընթացը կարող է զգալիորեն ավելի արագ իրականացվել՝ պահպանելով պատշաճ իրավական ընթացակարգի ստանդարտները:

---

67 Միգրանտների կալանքի կենտրոններում ներկայացված դիմումների քննության ժամկետները տարբեր կերպ են մեկնաբանվում, քանի որ դրանք հաշվարկվում են օրացուցային օրերով, այլ ոչ ժամերով, տե՛ս Sentencia del Tribunal Supremo, STS4071/2019 de 17/12/2019 [STS 4071/2019 - ECLI:ES:TS:2019:4071](STS 4071/2019 - ECLI:ES:TS:2019:4071):

68 «Ապաստանի մասին» Իսպանիայի օրենք, հոդված 21(4):

69 ԱՏՇ, *Երկրի վերաբերյալ զեկույց, Իսպանիա, 2020թ.*, https://asylumineurope.org/wp-content/uploads/2021/03/AIDA-ES_2020update.pdf:

70 «Ապաստանի մասին» Իսպանիայի օրենք, հոդվածներ 34 և 35.2:

71 Տե՛ս *ՄԻԵԴ-ի ԱՍ-ն և այլք ընդդեմ Իսպանիայի գործը* [AC and others vs Spain], հասանելի է հետևյալ հղմամբ՝ A.C. ET AUTRES c. ESPAGNE (coe.int):

72 Իսպանիայի օմբուդսմեն, *Ապաստանն Իսպանիայում. Միջազգային պաշտպանության և ընդունման համակարգերի ռեսուրսները (defensordelpueblo.es)*, 2016 թվականի հունիս, https://www.defensordelpueblo.es/wp-content/uploads/2016/07/Asylum_in-_Spain.pdf:

73 Այս կապակցությամբ նշվում է, որ սովորական ընթացակարգի շրջանակներում Ներքին գործերի նախարարության, Արտաքին գործերի նախարարության, Արդարադատության նախարարության, Ներառության, սոցիալական ապահովության և միգրացիայի հարցերով նախարարության, Հավասարության հարցերով նախարարության, ինչպես նաև դիտորդի կարգավիճակով ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցիչներից բաղկացած միջգերատեսչական հանձնաժողովը հավանություն է տալիս ԱԳ-ի առաջարկներին:

22. Մինչև այս գործընթացն իրականացնելը, խորհուրդ է տրվում մշակել հատուկ վերապատրաստման ծրագրեր, այդ թվում՝ գործերի հոսքերի կամ ապաստանի դիմում ներկայացրած անձանց համապատասխան կատեգորիաների հետ աշխատանքի թեմաներով նպատակաուղղված թեմատիկ վերապատրաստման դասընթացներ, և անձնակազմին տրամադրել համապատասխան ու թարմ ԾԵՏ և երկրի վերաբերյալ ուղեցույցներ: Անհրաժեշտ է նաև մշակել, պարբերաբար թարմացնել և վերանայել ՍԱԸ-ները, որոնք նպատակաուղղված ուղեցույց են հանդիսանում համապատասխան գործերի ծավալների համար:

23. **Գործերի տեսակավորման գործընթացի ներդնման և դրանց քննության տարբերակված մեթոդների կիրառման** ժամանակ անհրաժեշտ է հանգամանալից կերպով դիտարկել **վերահսկողության և վերանայման մեխանիզմների** ներդրման հարցը՝ երաշխավորելու համար գործընթացի որակն ու արդարությունը: Կարևոր կլինի ապահովել այնպիսի միջոցների առկայությունը, որոնց կիրառման արդյունքում կվերհանվեն և կնվազեցվեն գործերի տեսակավորման արդյունքում առաջացող ռիսկերը: Համակարգը պետք է լինի նաև **ճկուն և հարմարվող**, որպեսզի հաշվի առնի ինչպես նոր ժամանող անձանց թվի աճի կամ նվազման տեսանկյունից առաջացող փոփոխությունները, մոդելների և տարբեր երկրներից ժամանող անձանց թվի փոփոխությունները, այնպես էլ, ի թիվս այլ գործոնների, ծագման երկրում տիրող իրավիճակի (հանկարծակի) փոփոխությունները:

UNHCR
The UN Refugee Agency

# III. Պատշաճ իրավական գործընթացի ստանդարտները

| Անձնական հարցազրույցի ժամանակ կամ այլ կերպ լսված լինելու իրավունք | Ապաստանի տրամադրման ընթացակարգի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունք | Դիմումատուին հասկանալի լեզվով ընթացակարգին մասնակցելու իրավունք | ՄԱԿ ФԳՀ-ի կամ գործընկերոջ (գործընկերների) հետ կապ հաստատելու և ՄԱԿ ФԳՀ-ի կողմից դիմումատուի հետ կապ հաստատելու իրավունք | Բացասական որոշումների դեպքում ծանուցում և հիմնավորված որոշում ստանալու իրավունք | Իրավաբանական օգնություն և իրավաբանական ներկայացուցչություն ստանալու իրավունք | Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի/բողոքարկման իրավունք | Մինչև վերջնական որոշման կայացումը երկրում մնալու իրավունք |
|---|---|---|---|---|---|---|---|

24. Արդար անհատական որոշումների կայացմանը հանգեցնող՝ ՓԿՈ արժանահավատ ընթացակարգերի կիրառումը պահպանելու համար գործերի կառավարման ռազմավարությունները պետք է ներառեն **առանցքային սկզբունքներ և հիմնական ընթացակարգային ստանդարտներ**:[74] Այդպիսի ստանդարտներ ներառող ընթացակարգերը, որոնք նպաստում են որոշումների կայացման գործընթացում հետևողականությանը, չափազանց կարևոր են օրենքի գերակայության վրա հիմնված՝ ապաստանի տրամադրման ազգային համակարգերի անաչառության համար:[75] Ինչպես ցույց են տալիս այս աշխատության մեջ ներկայացված տարբեր պետությունների լավագույն գործելակերպերը, գործերի արդյունավետ և ծախսարդյունավետ քննության կարելի է հասնել՝ պահպանելով առանցքային ընթացակարգային ստանդարտները: Անհրաժեշտ է ներմուծել նաև լրացուցիչ ընթացակարգային երաշխիքներ՝ **հատուկ կարիքներ և խոցելի կողմեր ունեցող անձանց** համար:[76]

**Պատշաճ իրավական գործընթացի հիմնական ստանդարտները**

- Անձնական հարցազրույցի ժամանակ կամ այլ կերպ լսված լինելու իրավունք
- Ապաստանի տրամադրման ընթացակարգի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունք
- Դիմումատուին հասկանալի լեզվով ընթացակարգին մասնակցելու իրավունք
- ՄԱԿ ФԳՀ-ի կամ վերջինիս աշխատանքային գործընկերոջ (գործընկերների) հետ կապ հաստատելու և ՄԱԿ ФԳՀ-ի կողմից դիմումատուի հետ կապ հաստատելու իրավունք
- Բացասական որոշումների դեպքում ծանուցում և հիմնավորված որոշում ստանալու իրավունք
- Իրավաբանական օգնություն և իրավաբանական ներկայացուցչություն ստանալու իրավունք
- Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի/բողոքարկման իրավունք
- Մինչև վերջնական որոշման կայացումը երկրում մնալու իրավունք

Թեև սույն բաժնում թվարկված՝ պատշաճ իրավական գործընթացի առանցքային ստանդարտների ցանկը սպառիչ չէ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է դրանք հաշվի առնել ապաստանի համակարգի նախագծման գործընթացում, որպեսզի այն համահունչ լինի միջազգային ստանդարտներին: Այս ստանդարտները հիմնարար նշանակություն ունեն գործընթացի արդարության, արդյունավետության և անաչառության պահպանման համար:

25. Անձնական հարցազրույցում կամ այլ կերպ՝ **պատշաճ իրավական գործընթացի երաշխիքների պահպանմամբ և ողջամիտ ժամկետում** լսված լինելու իրավունքն առանցքային ընթացակարգային ստանդարտ է:[77] Որպես կանոն, լսված լինելու իրավունքը պահանջում է, որ դիմումատուն հնարավորություն ունենա անձամբ ներկայացնելու իր հայցը, և փախստականի կարգավիճակի հայցի վերաբերյալ որոշումը չպետք է կայացվի առաջին ատյանում՝ միայն փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա: Այս կանոնից ընդհանուր բացառությունները վերաբերում են փախստականների այն հայցերին, որոնց առնչությամբ առկա է միջազգային պաշտպանության ոլորտում ներառման մեծ

կանխավարկած, և դիմումատուն կարող է ճանաչվել փախստականի հաշվառման ժամանակ կամ այլ հասանելի աղբյուրներից ձեռք բերված տեղեկությունների հիման վրա։ Լավ օրինակ է **Կանադայի**՝ երկրի գործելակերպի օրինակը, որտեղ դրական որոշում կայացվում է՝ հիմնվելով գործի նյութերի ուսումնասիրության վրա՝ պայմանով, որ մի շարք պայմաններ կատարված են (տե՛ս վերևում, պարբերություն 19)։ Մյուս բացառությունները պետք է գնահատվեն՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար՝ ընթացակարգային երաշխիքների պատշաճ հաշվառմամբ։

26. **Դիմումատուի՝ ապաստանի տրամադրման գործընթացի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը, այդ թվում՝ նրան հասկանալի լեզվով**, պատշաճ իրավական գործընթացի մեկ այլ առանցքային ստանդարտ է։ Դիմումատուներն ունեն տեղեկացված լինելու իրավունք, որպեսզի հասկանան գործընթացի տարբեր փուլերը, ծանոթ լինեն այս փուլերից յուրաքանչյուրում իրենց իրավունքներին ու պարտականություններին և տեղյակ լինեն իրենց իրավունքների իրացման և իրենց պարտականությունների կատարման միջոցների մասին։

27. **Տեղեկությունների արդյունավետ հասանելիությունը, այդ թվում՝ բացասական որոշումների դեպքում ծանուցում և հիմնավորված որոշում ստանալու իրավունքը** հնարավորություն է տալիս դիմումատուներին գործընթացի ամբողջ ընթացքում կայացնել տեղեկացված որոշումներ և բարձրացնում է իրազեկվածության մակարդակն առ այն, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել յուրաքանչյուր կայացված որոշում։ Բացի այդ, այն կարող է կանխել նաև անհիմն և (կամ) լրացուցիչ դիմումների ներկայացումը՝ այդպիսով նպաստելով համակարգի արդյունավետ գործունեությանը։ Դիմումատուներին տեղեկությունների տրամադրումը հիմնականում ապաստանի տրամադրման հարցերով զբաղվող մարմինների պարտականությունն է, սակայն, քաղաքացիական հասարակությունը կամ իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անձինք կարող են հաջողությամբ աջակցել այդ պարտականության կատարմանը։

28. **ՄԱԿ ՓԳՀ-ի կամ վերջինիս աշխատանքային գործընկերոջ (գործընկերների) հետ կապ հաստատելու և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից դիմումատուի հետ կապ հաստատելու իրավունքը** ևս մեկ երաշխիք է, որը մեծ նշանակություն ունի արդար գործընթացի ապահովման հարցում։ Ինչպես նշվեց վերևը (տե՛ս, պարբերություն 19), **Իսպանիայում** ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն ունի կապ հաստատել ապաստան հայցողի հետ՝ սահմանին տեղակայված տարածքներում, իսկ դիմումատուն կարող է դիմել ՄԱԿ ՓԳՀ-ին և իրավաբանական օգնություն տրամադրող անձանց հետ կապ հաստատելու նպատակով՝ Իսպանիայի ապաստանի մասին օրենքով սահմանված կարգով։[78]

---

74 ՄԱԿ ՓԳՀ, *ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակներում փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգային ստանդարտները*, 2020 թվականի օգոստոսի 26, https://bit.ly/3g5bL5M։

75 ՄԱԿ ՓԳՀ, *Փախստականների միջազգային պաշտպանության և ապաստանի տրամադրման պետական համակարգերի կառուցման ուղեցույց*, 2017թ., Պառլամենտականների համար թիվ 27 ձեռնարկ, www.refworld.org/docid/5a9d57554.html։

76 Հատուկ կարիքներ ունեցող անձանց շարքին են դասվում (սակայն այդ շարքը սպառիչ չէ) որոշ կատեգորիայի դիմումատու երեխաները, այդ թվում՝ առանց ուղեկցության և ընտանիքից առանձնացված երեխաները, խոշտանգումներ վերապրածները, հոգեբանական տրավմաների ենթարկված անձինք, հոգեկան խնդիրներ կամ մտավոր կամ հաշմանդամություն ունեցող դիմումատուները և պաշտպանության միջամտության ակնհայտ կարիք ունեցող անձինք։

77 ՄԱԿ ՓԳՀ, *ՓԿՈ-ի ընթացակարգային ստանդարտներ, Բաժին 4. Փախստականի կարգավիճակ ստանալու հայցերի վերաբերյալ որոշման կայացում*, 2020 թվականի օգոստոսի 26, https://bit.ly/3H9WEUB։ ՓԿՈ-ի համար անցկացվող հարցազրույցին դիմումումատուի հեռավար մասնակցության համատեքստում պետք է նաև հաշվի առնել երաշխիքները և ընթացակարգային ստանդարտները՝ արդար լսումներ և լսված լինելու իրավունք ապահովելու համար։

78 «Ապաստանի մասին» Իսպանիայի օրենք, հոդվածներ 35(2) և 21։

### Երկրի գործելակերպերի օրինակներ՝ Դանիա և Շվեյցարիա

**Դանիայում**, Դանիայի փախստականների հարցերով խորհրդի (ԴՓԽ) Ապաստանի դեպարտամենտը փախստականներին երկիր ժամանելիս տեղեկություններ է տրամադրում և խորհրդատվություն առաջարկում՝ ապաստանի տրամադրման ընթացակարգի ու ապաստանի տրամադրման պահանջների վերաբերյալ: Տեղեկությունների՝ ժամանակին հասանելիությունն ապահովելու նպատակով ԴՓԽ-ն ստեղծել է համացանցային կայք, որտեղ հնարավոր է օգտակար տեղեկություններ գտնել ապաստան հայցելու գործընթացի, ինչպես նաև կոնկրետ գործերում իրավաբանական ներկայացուցչության վերաբերյալ: Այն նաև ստեղծել է հավելված, որտեղ Դանիայի ապաստանի տրամադրման ընթացակարգը ներկայացված է նկարներով և հեշտ հասկանալի լեզվով:[79]

Ինչպես նշվել է **Շվեյցարիայի**՝ երկրի գործելակերպի օրինակում («մեկ տանիքի ներքո» սկզբունքի շրջանակներում, տե՛ս վերևը, պարբերություն 14), հասարակական կազմակերպության փաստաբանի կողմից տեղեկությունների ժամանակին տրամադրումը, խորհրդատվության և իրավաբանական ներկայացուցչության ապահովումը բարձրացրել է դիմումատուների՝ համակարգի նկատմամբ վստահության մակարդակը, ինչպես նաև հանգեցրել է գործընթացի և իրենցից ակնկալվող գործողությունների վերաբերյալ նրանց պատկերացման բարձրացմանը:

29. Պետության կողմից ֆինանսավորվող՝ մատչելի, հուսալի ու բարձրորակ **իրավաբանական օգնության և իրավաբանական ներկայացուցչության** տրամադրումը կարևոր գործիք է ապաստանի տրամադրման արդար ու թափանցիկ ընթացակարգեր սահմանելու համար: Իրավաբանական օգնության և իրավաբանական ներկայացուցչության տրամադրումը կարող է կարևոր ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացի որակի բարձրացման վրա և նպաստել ՓԿՈ-ի գործընթացի արդյունավետությանը, քանի որ դա կարող է մեծացնել դիմումատուի պատկերացումը գործընթացի վերաբերյալ, նվազեցնել բողոքարկումների և լրացուցիչ դիմումների (գործերի վերաբացման) թիվը, ինչպես նաև կրճատել որոշումների կայացման ժամկետները:[80]

### Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեյցարիա

**Շվեյցարիայում** ապաստանի տրամադրման համակարգում 2019 թվականի մարտին իրականացված բարեփոխումների շրջանակներում ներդրվեցին արագացված ընթացակարգեր՝ ընթացակարգի տևողությունն էապես նվազեցնելու համար, որպեսզի ապաստան հայցողներն օպերատիվ կերպով տեղեկություններ ստանան այն մասին, թե արդյոք նրանց կտրամադրվի պաշտպանություն, թե ստիպված կլինեն լքել երկիրը: Որպես երաշխիք և ընթացակարգերի արդարությունը պահպանելու ու պատշաճ իրավական ընթացակարգի ստանդարտները կատարելու համար՝ ապաստան հայցողները, որոնց դիմումները քննվում են արագացված ընթացակարգի (այդ թվում՝ Դուբլինի ընթացակարգերի) շրջանակներում, իրավունք ունեն ընթացակարգի հենց սկզբից որակավորված փաստաբանի կողմից ստանալու անվճար խորհրդատվություն և անվճար իրավաբանական ներկայացուցչություն, թեև սա դեռ չի վերաբերում այն անձանց, որոնք ապաստանի դիմումներ են ներկայացրել կալանքի տակ կամ բանտում գտնվելու ընթացքում: Իրավաբանական օգնության և իրավաբանական ներկայացուցչության արդյունավետությունն ու որակն ապահովելու համար ստեղծվել է իրավական ներկայացուցչության ստանդարտների և պարտավորությունների մանրամասն շտեմարան:[81] [82] 2021 թվականին իրականացված արտաքին գնահատման շրջանակներում կատարվել է եզրահանգում առ այն, որ ապաստանի տրամադրման դաշնային կենտրոններում իրավաբանական օգնության տրամադրումն ընդհանուր առմամբ լավ է իրականացվում, իրավական կարծիքների որակը հուսալի է և դրական ազդեցություն ունի ապաստանի տրամադրման գործընթացի որակի վրա:[83]

Արտաքին գնահատման շրջանակներում նշվել է նաև, որ «մեկ տանիքի ներքո» մոտեցմամբ ՄՊՔ-ի և իրավաբանական օգնություն տրամադրող անձանց միջև աշխատանքների ընդհանուր համակարգումն ու համագործակցությունը բարելավվել է՝ հանգեցնելով արդյունավետության բարձրացմանը: Ընդ որում, ինչպես նշվել է գնահատման զեկույցում, կարելի է ներմուծել որոշ հավելյալ միջոցներ՝ համակարգման գործընթացն էլ ավելի բարելավելու համար, օրինակ՝ իրավաբանական օգնություն տրամադրող անձանց միջև գործունեության տարբերությունները պետք է վերացվեն՝ միջտարածաշրջանային համակարգման գործողությունները բարելավելու և ՄՊՔ գործելակերպերը ներդաշնակեցնելու միջոցով:[84]




30. Ապաստանի դիմում ներկայացրած անձի **իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի** իրավունքի կամ վարչական տրիբունալում կա՛մ ընդհանուր իրավասության դատարանում **որոշումը բողոքարկելու հնարավորությունն** ամրագրված է բազմաթիվ ազգային օրենսդրություններում և տարածաշրջանային կարգավորման շրջանակներում: Այն հանդիսանում է պատշաճ իրավական գործընթացի առանցքային ստանդարտ, որը խթանում է ապաստանի տրամադրման համակարգի արդարությունն ու անաչառությունը և առանցքային նշանակություն ունի ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունքը հետապնդումից և *չվերադարձելիության* սկզբունքից պաշտպանելու համար:[85]

Բողոքարկման հնարավորությունը չպետք է սահմանափակվի ընթացակարգային խախտումների կամ հայցի ենթադրյալ էության պատճառով: Որպես կանոն՝ նշվում է, որ առաջին անգամ ներկայացված ապաստանի դիմումները, այդ թվում՝ այն հայցերը, որոնք կարող են ակնհայտորեն անհիմն լինել, պետք է օրենքով սահմանված կարգով **կասեցնող ազդեցություն** ունենան:[86] Որպես այդպիսին, այն դիմումատուները, որոնց հայցերը տեսակավորվել և առաջին ատյանում մերժվել են որպես ակնհայտորեն անհիմն հայցեր, նույնպես պետք է իրավունք ունենան բողոքարկելու առաջին ատյանի բացասական որոշումը, թեև բողոքարկման դիմումները կարող են ներկայացվել արագացված ընթացակարգի շրջանակներում կամ առաջնահերթ կարգով քննության:[87]

79 ԴՓԽ, *Ապաստան և հայրենադարձում* (մուտքը՝ 2022 թվականի փետրվարի 25-ին հետևյալ հղմամբ), https://drc.ngo/da/vores-arbejde/ydelser-og-losninger/asyl-og- repatriering/det-danske-asylsystem/informationsmateriale/:

80 ՄԱԿ ՓԳՀ, *ՓԿՈ-ի ընթացակարգային ստանդարտներ, Բաժին 2.7. Իրավաբանական ներկայացուցչություն ՄԱԿ ՓԳՀ-ի ՓԿՈ-ի ընթացակարգերում,* 2020 թվականի օգոստոսի 26, https://bit.ly/34fyARw:

81 Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ՄՔՄՄԿ), *Ապաստանի տրամադրման որոշումը բողոքարկելու ընթացակարգը՝ Եվրոպայում ապաստանի տրամադրման համակարգերի և քաղաքականության նպատակների համաձայն*, 2020 թվականի հունվար, էջ 40, https://bit.ly/3o6JoIF:

82 Ստանդարտների շտեմարանը տարբեր է ընդլայնված և արագացված ընթացակարգերի համար: Ընդլայնված ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս https://bit.ly/3h9X4yO, Ընդլայնված ընթացակարգի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս Dienstleistungen - 264852-2018 - TED Tenders Electronic Daily (europa.eu):

83 «Évaluation PERU», Protection juridique et qualité des décisions (skmr.ch), Rapport final (version courte), p. 13, https://bit.ly/3ABupvy:

84 «Évaluation PERU», Protection juridique et qualité des décisions (skmr.ch), p. 14, Rapport final (version courte), https://bit.ly/3ABupvy:

85 ՄԱԿ ՓԳՀ, *ՓԿՈ-ի ընթացակարգային ստանդարտներ, Բաժին* 7. ՓԿՈ առնչությամբ բացասական որոշումների բողոքարկումը, 2020 թվականի օգոստոսի 26 https://bit.ly/3KQPqaf:

86 Երբ դիմումատուն ցուցաբերում է ակնհայտորեն վիրավորական վարքագիծ, կամ երբ հայցն ակնհայտորեն «անհիմն է», կասեցնող ազդեցության ավտոմատ կիրառումը կարող է հանվել: Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Անդամ պետություններում փախստականի կարգավիճակ շնորհելու և այն չեղյալ հայտարարելու ընթացակարգերի նվազագույն ստանդարտների մասին» Խորհրդի հրահանգի առաջարկի վերաբերյալ նախնական մեկնաբանություններ՝ (Խորհրդի 14203/04 հրահանգ, Asile 64, 2004 թվականի նոյեմբերի 9), 2005 թվականի փետրվարի 10, էջ 51, www.unhcr.org/refworld/docid/42492b302.html:

87 ՄԱԿ ՓԳՀ, Ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգերի առնչությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի մասին հայտարարություն՝ հրապարակված Լյուքսեմբուրգի վարչական տրիբունալի կողմից՝ 39-րդ հոդածի մեկնաբանման մասով Եվրոպական միության արդարադատության դատարանին ուղղված նախնական որոշման շրջանակներում, Ապաստանի տրամադրման ընթացակարգերի մասին հրահանգ (ԱՏԸՀ), ՄԻԵԿ-ի հոդվածներ 6 և 13, պարբերություն 7, www.refworld.org/pdfid/4bf67fa12.pdf:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեյցարիա

Շվեյցարիայում, բացահայտված և արագացված ընթացակարգի շրջանակներում քննության ուղղորդված դիմումները ենթակա են ապաստանի հարցերով դաշնային կենտրոնում արագացված բողոքարկման ընթացակարգի շրջանակներում քննարկման՝ անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքների կիրառմամբ: Ապաստան հայցողների այն գործերը, որոնք հայցի բարդության պատճառով տեսակավորվել են ընդլայնված ընթացակարգի շրջանակներում քննության համար, ուղղվում են կանտոն, որտեղ ՄՊՔ-ն հետագայում քննում է նրանց գործերը (գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս վերևում, պարբերություն 19):

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Դանիա

**Դանիայում** ԴՓԽ-ն չափազանց կարևոր դերակատարություն ունի ի սկզբանե ակնհայտորեն անհիմն ճանաչված ապաստանի դիմումների հարցում: Եթե Դանիայի ներգաղթի ծառայությունը գտնում է, որ ապաստանի դիմումն ակնհայտորեն անհիմն է, ապա գործը կարող է քննվել հատուկ հրատապ ընթացակարգի շրջանակներում՝ համաձայն «Օտարերկրացիների մասին» օրենքի: Նմանատիպ գործերի դեպքերում Դանիայի ներգաղթի ծառայությունը ԴՓԽ-ի Ապաստանի հարցերով դեպարտամենտ է ուղարկում ակնհայտորեն անհիմն համարվող և, հետևաբար, հատուկ ընթացակարգի շրջանակներում քննության չափանիշներին համապատասխանող գործի վերաբերյալ իր առաջարկությունը: Նման դեպքերում ԴՓԽ-ն հարցազրույց է անցկացնում դիմումատուի հետ՝ պարզելու համար ապաստան հայցելու պատճառը (պատճառները): Առաջնորդվելով գործի վերաբերյալ առկա տեղեկություններով՝ ԴՓԽ-ն ունի ակնհայտորեն անհիմն համարված գործի վերաբերյալ որոշման վրա վետո դնելու իրավունք, մասնավորապես՝ (i) ապաստանի այն գործերը, որոնք ԴՓԽ-ն ակնհայտորեն անհիմն չի համարում, փոխանցվում են սովորական ընթացակարգի շրջանակներում քննության, որի դեպքում բացասական որոշումն ինքնաբերաբար բողոքարկվում է Փախստականների գործերով բողոքարկման խորհուրդ (ՓԳԲԽ), (ii) ապաստանի այն գործերի դեպքում, որոնց ակնհայտորեն անհիմն լինելու հետ ԴՓԽ-ն համաձայն է, Դանիայի Ներգաղթի ծառայության կողմից մերժումը համարվում է վերջնական, և ապաստանի դիմում ներկայացրած անձը չի կարող բողոքարկել ՓԳԲԽ:[88]

31. Ի լրումն վերը քննարկված առանցքային սկզբունքների և ստանդարտների՝ միջազգային պաշտպանության համար ներկայացված **լրացուցիչ դիմումների** հետ կապված հարցերի լուծումը խնդիր է դարձել ապաստանի տրամադրման բազմաթիվ ազգային համակարգերի համար ինչպես արդարության, այնպես էլ արդյունավետության առումով: ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է, որ ապաստանի տրամադրման համակարգերն ընդունեն հուսալի ընթացակարգեր՝ **լրացուցիչ դիմումների** քննության կամ վերջնական ատյանում մերժված գործերի վերաբացման համար, որպեսզի հնարավոր լինի ապահովել համակարգերի արդարությունն ու անաչառությունը: Լրացուցիչ դիմում ներկայացնելու դեպքում կարող է արագացված գործընթացի շրջանակներում կատարվել նախնական գնահատում՝ պարզելու համար, թե արդյոք ի հայտ են եկել այնպիսի նոր փաստեր կամ հանգամանքներ, որոնք պահանջում են հայցի էության ուսումնասիրություն, թե առաջացել է գործի վերաբացման անհրաժեշտություն: Լրացուցիչ դիմումը, սկզբունքորեն, պետք է ունենա **կասեցնող ազդեցություն**, թեև կարող են լինել բացառություններ, օրինակ՝ երբ դիմումատուն ակնհայտորեն վիրավորական վարքագիծ է դրսևորել, կամ երբ հայցի անհիմն լինելն ակնհայտ է: Այնուամենայնիվ, նույնիսկ նմանատիպ դեպքերում, գործի քննությունը դատարանի կամ մեկ այլ անկախ մարմնի կողմից պետք է նախատեսված լինի, և այդ դատարանը պետք է իրավասու լինի ապաստանի դիմում ներկայացրած անձի դիմումով կամ ի պաշտոնե բողոքարկմանը տալ կասեցնող ազդեցություն:

[88] Տե՛ս ԴՓԽ, *Ակնհայտորեն անհիմն ընթացակարգի առնչությամբ կիրառվող գործողությունները, հասանելի է հետևյալ հղմամբ՝* https://bit.ly/3r9ZBz2:

# IV. Արդյունավետ քննությանը վերաբերող համակարգային խնդիրները

| Համապատասխան շահագրգիռ կողմերի միջև համագործակցություն և դրանց ներգրավվածություն | Պատշաճ պլանավորում և ռեսուրսների ճիշտ հատկացում | Վերահսկողության, վերանայման, բողոքարկման հուսալի մեխանիզմներ և ռիսկերի նվազեցում | Գործերի կառավարման արդյունավետ, փոխգործելի համակարգեր | Մասնագիտացված վերապատրաստման ծրագրեր և նպատակաուղղված ուղեցույցներ | Տեխնոլոգիաների և նորարարության կիրառում՝ գործերի քննության գործընթացը բարելավելու համար |
|---|---|---|---|---|---|

32. Որպես կանոն, ապաստանի դիմումների կուտակում առաջանում է, երբ դրանց թիվը գերազանցում է ՓԿՈ համակարգի՝ դիմումների քննության կարողությունը, կամ երբ առաջանում են համակարգային խնդիրներ, որոնք հանգեցնում են տևական ժամանակ անարդյունավետության կամ արտադրողականության նվազման:[89]

33. Համակարգային խնդիրները, որոնք կարող են հանգեցնել կամ նպաստել կուտակված բազում չքննված դիմումների թվի աճին և ապաստանի տրամադրման համակարգերի անարդյունավետությանը, կարող են պայմանավորված լինել մի շարք տարբեր գործոններով: Վերջիններիս ոչ սպառիչ ցանկը ներառում է ռազմավարական և կառավարչական խնդիրները, ինչպիսիք են (i) համագործակցության և համակարգման բացակայությունը, (ii) սխալ պլանավորումը և բյուջեի հատկացումը, (iii) կադրերով համալրելու ուղղությամբ բավարար չափով աշխատանքներ չկիրականացնելը, (iv) վերահսկողության, որակի ապահովման և խարդախության կանխման պակասը և (v) տեխնոլոգիաների և նորարարական գործիքների սահմանափակ կիրառումը:[90]

34. Ցանկալի է, որ ապաստանի տրամադրման ազգային համակարգերը **որդեգրեն համապարփակ մոտեցում և համակարգային խնդիրները դիտարկեն ապաստանի կառավարման ռազմավարության շրջանակներում**՝ որպես արդյունավետ և ծախսարդյունավետ հարմարվողական համակարգերի խթանման միջոց: Ապաստանի տրամադրման հարմարվողական համակարգերը հնարավորություն ունեն կառավարելու միջազգային պաշտպանություն փնտրող բնակչության զգալի ներհոսքերը, արտահոսքերն ու տեղաշարժերը և հարմարվելու այլ օպերատիվ խնդիրների:

35. Ապաստանի գործերի կառավարման արդյունավետ համակարգի նախագծումը և ստեղծումը, այդ թվում՝ այլ պետական համակարգերի հետ փոխգործելի համակարգերի ստեղծումը պահանջում են պետական մարմինների, այն է՝ սահմանային հսկողության, ներգաղթի ծառայության, իրավապահ մարմինների և ապաստանի տրամադրման հարցերով մարմինների միջև **սերտ համակարգում և համագործակցություն**: Այլ համապատասխան շահագրգիռ կողմեր, ինչպիսիք են միջազգային և միջկառավարական կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաև ապաստան հայցողներն ու փախստականները նույնպես պետք է ներգրավվեն համակարգի նախագծման, ընթացակարգերի մշակման և ցանկացած փորձնական նախագծի գնահատման գործընթացում:

36. Ավելին, **պատշաճ պլանավորումը և ռեսուրսների ճիշտ հատկացումը** գործընթացի բոլոր փուլերում և տարբեր պետական համակարգերում, այդ թվում՝ անձնակազմի, կարողությունների զարգացման, ժամանակացույցի, նպատակների սահմանման, ծրագրային համակարգերի և ենթակառուցվածքների առումով, կարևոր են՝ նախատեսված ազդեցությանը հասնելու համար:[91]

[89] ՄԱԿ ՓԳՀ, *Փախստականի կարգավիճակի որոշման՝ կուտակված բազում չքննված գործերի թվի կանխումը և նվազեցումը*, 2018 թվականի հունվար, PPLA/2018/03, https://bit.ly/3IQeQ6d:

[90] Նույն տեղում:

[91] ՄԱԿ ՓԳՀ, *Արդար և արագ, ՄԱԿ ՓԳՀ-ի քննարկման փաստաթուղթ Եվրոպական միությունում արագացված և պարզեցված ընթացակարգերի վերաբերյալ*, 2018 թվականի հուլիսի 25, www.refworld.org/docid/5b589eef4.html:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Կանադա

**Կանադայի**՝ հիմնականում ԿՆՓՔԾ-ից, ԿՄԾԳ-ից և ՆՓԽ-ից բաղկացած ապաստանի տրամադրման համակարգում ներգրավված տարբեր գերատեսչությունների միջև աշխատանքների համակարգումը բարելավելու նպատակով 2020 թվականին ստեղծվեց Ապաստանի տրամադրման համակարգի կառավարման խորհուրդը (ԱՏՀԿԽ): ԱՏՀԿԽ-ն ապաստանի տրամադրման համակարգի բարձր մակարդակի համակարգման մարմին է, որը ստեղծվել է համակարգում միասնական առաջնահերթությունների սահմանում, միտումների վերլուծություն, կատարողականի կառավարում և միջգերատեսչական նպատակների մոնիթորինգ իրականացնելու և ապաստանի տրամադրման համակարգի աշխատանքի մեջ ներգրավված գործընկերների միջև հորիզոնական համակարգումը բարելավելու նպատակով: ԱՏՀԿԽ-ն գործում է *Ներգաղթի և փախստականների պաշտպանության ակտի* դրույթների շրջանակներում և բոլոր կիրառելի օրենքներին համապատասխան՝ նպատակ ունենալով բարձրացնել ապաստանի տրամադրման համակարգի արդյունավետությունն ու ծախսարդյունավետությունը, այդ թվում՝[92]

- իրավիճակի վերաբերյալ համատեղ տեղեկացվածության մակարդակը. Համակարգում գործող բոլոր կազմակերպությունները տեղեկացված են ապաստանի տրամադրման համակարգի հետ կապված միևնույն կարևոր զարգացումների մասին.
- ռազմավարական գործողությունների համատեղ ուղղվածությունը. ԱՏՀԿԽ-ն իրականացնում է համատեղ պլանավորում և առաջնահերթությունների սահմանում՝ ռեսուրսների համաձայնեցումն առավելագույնի հասցնելու համար, և հաշվետվություն է ներկայացնում իր գործունեության, այդ թվում՝ ձևավորվող միտումների մասին.
- ժամանակին և թափանցիկ որոշումների կայացման գործընթացը. Մի կազմակերպության որոշումները հասանելի են դարձվում համակարգում գործող մյուս կազմակերպությունների համար՝ մինչև այդ որոշումների իրականացումը.
- նորարարությունը. Գործընթացի մշտական կատարելագործումն ապահովվում է նորարարության միջոցով:

Իր լիազորություններն իրականացնելու համար ԱՏՀԿԽ-ն շեշտը դնում է գործունեության հետևյալ կարևոր տեսակների վրա՝

- իրականացնել առաջնահերթ խնդիրների սահմանումը նախարարների մակարդակով.
- սահմանել կատարողականի թիրախներ, ինչպես նաև ապահովել աշխատանքում համաձայնեցումը և կազմել արտադրողականության վերաբերյալ զեկույց՝ համակարգի յուրաքանչյուր մասի՝ փոփոխվող ծավալներին և ներհոսքերին արձագանքման կարողության բարձրացման համար.
- հանդես գալ որպես տեղեկատվական կենտրոն, այդ թվում՝ բացահայտելու և լուծելու համակարգի ներդրման հետ կապված օպերատիվ բնույթի խնդիրները (օրինակ՝ գործերի առաջնահերթությունների սահմանում, արտաքսումներ).
- մշտադիտարկել ապաստանի տրամադրման եռամսյակային թարմացված կանխատեսումները, և
- պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել իր գործունեության վերաբերյալ:[93]

[92] ԱՏՀԿԽ-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/3IK5Fnz:

[93] Նույն տեղում:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեդիա

**Շվեդիայում** ՇՄԳ-ն գրասենյակներ ունի տարբեր աշխարհագրական շրջաններում, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում ամբողջ գործընթացի համար, և որպես կանոն այդ գրասենյակներում գործում են Դիմումների հարցերով բաժին և ապաստանի հարցերով բաժին: Սա հնարավորություն է տալիս օպերատիվ հարցերով ռեգիոնալ ղեկավարներին կառավարել ռեսուրսները և հարկ եղած դեպքում դրանք վերաբաշխել ստորաբաժանումների միջև: Օպերատիվ հարցերով ռեգիոնալ ղեկավարները համագործակցում են ՇՄԳ-ի կառավարման խորհրդի շրջանակներում:

Օպերատիվ հարցերով ռեգիոնալ ղեկավարներից բացի, կենտրոնական մակարդակում գործում է Օպերատիվ հարցերով ազգային դեպարտամենտը, որը կարող է օգնել, օրինակ՝ ԾԵՏ կամ միգրացիոն տեղաշարժերի վերլուծության հարցում: Կենտրոնական մակարդակում գործում է նաև Թվայնացման և զարգացման հարցերով դեպարտամենտը, որը պատասխանատու է գործընթացում իրականացվող աշխատանքների և գործողությունների համար, և որը կարող է օժանդակել համակարգչային/SS համակարգերի հետ կապված և նմանատիպ հարցերի լուծման գործում: Կենտրոնական մակարդակում գործող Իրավաբանական դեպարտամենտը պատասխանատու է ազգային և միջազգային օրենքների և կարգավորումների մեկնաբանման, ինչպես նաև օպերատիվ հարցերի և գլխամասային դեպարտամենտներին աջակցելու համար: Այս նպատակով դեպարտամենտների միջև համագործակցությունը տեղի է ունենում տարբեր մակարդակներում (տարածաշրջանային կամ կենտրոնական)՝ կախված կոնկրետ առկա խնդրից, և թե արդյոք այն վերաբերում է կոնկրետ տարածաշրջանի, թե ոչ, և թե արդյոք հարցն ընդհանուր առմամբ կարևոր է ՇՄԳ-ի համար:

Որպես Ապաստան 360 նախագծի, այդ թվում՝ ժամանակով սահմանափակված գործընթացի իրականացման մաս՝ ՇՄԳ-ն նպաստել է ղեկավար կազմում աշխատանքային մշակույթի փոփոխությունների կատարմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով արդյունքների պահպանման վրա: Աշխատանքային մշակույթի փոփոխությունը խրախուսվել է նաև աշխատակիցների շրջանում՝ շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ բոլոր նրանք, ովքեր ներգրավված են ապաստանի գործընթացում, պետք է հասկանան իրենց դերակատարությունն այդ գործընթացում և աշխատեն, որ յուրաքանչյուր գործողություն իրականացվի հնարավորինս արագ (կրճատվի կատարման ժամանակը): Այդ պատճառով չափազանց կարևոր է համարվել ներգրավված տարբեր ստորաբաժանումների և անձնակազմի միջև հստակ հաղորդակցությունն ու տեղեկությունների փոխանակումը, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Որպես Ապաստան 360 նախագծի պլանավորման և մեկնարկի մաս՝ ՇՄԳ-ի տարածաշրջանային և կենտրոնական գրասենյակներն ինտենսիվորեն աշխատել եմ միմյանց հետ հայեցակարգի մշակման և զարգացման փուլում՝ ապահովելու համար նպատակի և հետագա գործողությունների շուրջ փոխըմբռնումը: Այդ նպատակով բարելավման և փոփոխությունների վերաբերյալ առաջարկները ամրագրվել են, և տեղեկությունները փոխանցվել են համապատասխան ավագ գործընկերներին, որոնք կարող են որոշումներ կայացնել և փոփոխություններ կատարել՝ ժամանակին և օպերատիվ կերպով:

Նախագծի մեկնարկից ի վեր՝ որպես առաջնահերթություն ընդգծվեց նաև գործընկերների համար վերապատրաստման դասընթացները հարմարեցնելու և ուսումնական նյութեր մշակելու անհրաժեշտությունը, որպեսզի նրանք առավել լավ հասկանան ՇՄԳ-ի մոտեցման փոփոխությունը՝ ապահովելու համար, որ անձնակազմը հասկանա իր դերակատարությունն ու պարտականությունները, գործընթացների հոսքերի փոխազդեցությունը, և թե ինչպես է նրանց աշխատանքը տեղավորվում ավելի մեծ պատկերի մեջ: Այս առումով էական փոփոխությունները ներառում էին գործընթացի տարբեր փուլեր (օրինակ՝ դիմումների, անձանց ընդունում, կացարանով ապահովում, գործնական խնդիրներ և վերադարձ) իրականացնող տարբեր ստորաբաժանումների թիմի ղեկավարների միջև ամենշաբաթյա համակարգման հանդիպումները, ինչպես նաև ամբողջ անձնակազմի և բոլոր ստորաբաժանումների միջև վերապատրաստումների կազմակերպումն աշխատանքային մեթոդի (Ապաստան 360 և հետազծերի համակարգ) փոփոխությունների վերաբերյալ: Բացի այդ, գործընթացի տարբեր փուլերի վերաբերյալ հատուկ հանդիպումներ կազմակերպվեցին որոշումներ կայացնողների համար՝ ներկայացնելու հետազծերի/ծագման երկրի վերաբերյալ նոր տեղեկությունների և դատական դիրքորոշումների և այլնի հետ կապված ընթացիկ և հրատապ հարցեր: Եվ վերջապես, ստորաբաժանումների և ռազմավարական/պլանավորման հարցերով ստորաբաժանումների ղեկավարների միջև կանոնավոր կերպով կազմակերպվեցին հանդիպումներ:

Առավելապես հոսքային ուղղվածությամբ աշխատելու և շեշտը պրոակտիվ կառավարման վրա դնելով՝ ՇՄԳ-ն փորձել է նաև բարելավել ներքին պլանավորման փուլը և ամրապնդել ապաստանի գործերով զբաղվող աշխատողների ու որոշում կայացնողների միջև երկխոսությունը՝ անհատական գործերը ժամանակով սահմանափակված գործընթացի շրջանակներում առաջ տանելու համար (տե՛ս վերևում, պարբերություն 19): Այս նպատակով նշվել է, որ թվայնացման և տեխնիկական աջակցման գործիքները բարելավել են աշխատանքային պրոցեսի պայմանները, ինչպես նաև աշխատանքի առաջընթացը չափելու հնարավորությունը, որն իր հերթին պայմաններ է ապահովում առավել լավ հսկողության իրականացման և տարածաշրջանային մակարդակում ՇՄԳ-ի օպերատիվ հարցերով ղեկավարների ու կենտրոնական մակարդակում աջակցման թիմերի կողմից արդի տեղեկությունների և խորհրդատվության տրամադրման համար:

## Երկրի գործելակերպի օրինակը՝ Կանադա

**Կանադայում** Հայցերի վերլուծության միավորված կենտրոնը (ՀՎՄԿ)[94], որն առաջին անգամ սկսել է գործել Մոնրեալում, 2019 թվականին մեկնարկած եռակողմ համատեղ նախաձեռնություն է, որը նախատեսված է ՆՓԽ-ում ռացիոնալացնել առաջին ատյանում ՓԿՈ գործընթացի հետ կապված գործելակերպերը՝ նպատակ ունենալով բարելավել ապաստանի տրամադրման համակարգում գործող գործընթացների արդյունավետությունը, ինչպես նաև խթանել ծառայություններ մատուցող գործընկերների, հատկապես՝ ԿՆՓՔԾ-ի, ԿՍԾԳ-ի և ՆՓԽ-ի միջև համագործակցությունը: ՀՎՄԿ-ն փորձում է ինտեգրել հետևյալ գործառույթները. (i) ՆՓԽ-ի որոշում կայացնողներին գործերի քննության պատրաստի պլանի տրամադրում՝ որոշումների կայացման գործընթացն արագացնելու համար, (ii) ծրագրի անաչառության ապահովում ՆՓԽ-ի որոշումների ճշգրտությունը պարբերաբար ստուգելու միջոցով (iii) ապաստան հայցողների ուղեկցում համակարգի շղթայի մի փուլից մյուսը տեղաշարժվելիս և (iv) գործընկերներին իրական ժամանակում տեղեկությունների տրամադրում:

ՀՎՄԿ-ի նպատակն է վերլուծել Կանադա ակնկալվող ներհոսքի 55 տոկոսը, փորձարկել հայցերի առաջնահերթությունները սահմանելու և դրանք ըստ հետագծերի դասակարգելու նոր մոտեցումները, բարձրացնել հայցերի քննության արդյունավետությունը և ապահովել դրանց քննության անաչառությունը: ՀՎՄԿ-ն աշխատանքներն ամբողջ ծավալով սկսել է 2020 թվականի նոյեմբերին՝ նախագծի վերջին փուլի մեկնարկից հետո՝ շեշտը դնելով հայցերի հետագծման և առաջնահերթությունների սահմանման չխզվող [end-to-end] գործառույթների ներդրման վրա:

---




37. **Մարդկային ռեսուրսների ու կադրային կարիքների** գնահատման նպատակով ապաստանի տրամադրման բազմաթիվ ազգային համակարգեր սահմանել են հենանիշեր ու նպատակներ՝ արտադրողականությունը գնահատելու համար: Թեև սա կարող է արդյունավետությունը գնահատելու օգտակար միջոց լինել, այնուամենայնիվ, չափազանց կարևոր է նաև հաշվի առնել աշխատանքային այն գործոններն ու պահանջները, որոնք ազդում են ՓԿՈ հարցերով զբաղվող աշխատակիցների՝ հայցերի քննության կարողության, այդ թվում հետևյալի վրա՝ [95]

- Քննվող գործի (գործերի) շրջանակներում ապաստան հայցողների խմբին դասվող անձանց ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների առկայությունը, այդ թվում՝ նրանց հատուկ կարիքները.
- հայցերի, այդ թվում՝ միջազգային պաշտպանությից հնարավոր բացառման հարցերի հետ կապված բարդության աստիճանը.
- կոնկրետ գործերի ծավալի ու ապաստանի դիմում ներկայացրած կոնկրետ կատեգորիաների անձանց առնչությամբ գործերի տեսակավորման և դրանց քննության մեթոդները.[96]
- դիմումները քննող ու դրանք վերանայող աշխատակիցների ստաժն ու փորձը.
- աջակցման ընթացակարգերի (այսինքն՝ անձանց ընդունումը, հաշվառումը, գործերի կառավարումը և մեկնաբանումը) առկայությունը, որակն ու ծախսարդյունավետությունը.
- լրացուցիչ գործողություններ և պարտականություններ, որոնք անձնակազմը սովորաբար իրականացնում է ի հավելումն գործի քննությանը, ինչպես օրինակ՝ նոր աշխատակիցների ուղղորդումը և վերապատրաստումը, պաշտպանության հետ կապված աշխատանքների, որոշումների ծանուցման կամ գործերի կառավարման մեջ ներգրավվելը.
- միջավայրը, որտեղ տեղի են ունենում ՓԿՈ-ի համար անցկացվող հարցազրույցները և քննությունը (օրինակ՝ գրասենյակային տարածքները՝ օժանդակ կառույցներով՝ ի տարբերություն հեռավոր վայրերի/կալանքի վայրերի/հեռավար գործընթացների).
- վարչական և SS աջակցության առկայությունը:[97]

38. Կարևոր է հասկանալ, որ գործերի քննության գործընթացում ոչ ողջամիտ նպատակների սահմանումը

կարող է հանգեցնել **աշխատակիցների սթրեսի և մասնագիտական այրման**՝ արդյունքում բերելով ժամանակավոր անաշխատունակության, աշխատանքից բացակայությունների և արտահոսքի: Այս գործոնները վնասակար ազդեցություն կունենան անձնակազմի բարեկեցության, ինչպես նաև բացասական ձևով կազդեն որոշումների որակի ու ժամանակի ընթացքում համակարգի արտադրողականության տեսանկյունից ընդհանուր ծախսարդյունավետության վրա:[99]

39. Ինչպես ավելի վաղ նշվեց, անձնակազմի վերապատրաստումը ևս մեկ կարևոր գործոն է գործերի հաջող կառավարման և կուտակված բազում չքննված գործերի կրճատման համար: Անհրաժեշտ է, որպեսզի անձնակազմը վերապատրաստումներ անցնի տվյալների առաջնային բեռնման և գործերի տեսակավորման ընթացակարգերի ներդրման և կիրառման, ինչպես նաև գործերի քննության տարբեր մեթոդների օգտագործման հետ կապված:[100] Այս տեսանկյունից էական նշանակություն ունի հիմնական թեմատիկ ոլորտների առնչությամբ որակավորման բարձրացումը, որը դրական ազդեցություն կունենա անձնակազմի բարեկեցության վրա:

[94] ԿՆՓՔԾ, *ՊՀՄՀ. Տորոնտոյում Հայցերի վերլուծության միավորված կենտրոնի (ՀՎՄԿ)* կարգավիճակը, 2020 թվականի նոյեմբերի 24, (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 21-ին հետևյալ հղմամբ), www.canada.ca/en/immigration-refugees-citizenship/corporate/transparency/committees/pacp-nov-24-2020/pacp-status-icac-nov- 24-2020.html:

[95] ՄԱԿ ՓԳՀ, Փախստականի կարգավիճակի որոշման՝ կուտակված բազում չքննված գործերի թվի կանխումը և նվազեցումը, 2018 թվականի հունվար, PPLA/2018/03: https://bit.ly/3HajTOi:

[96] Սովորաբար, գործերի քննության պարզեցված ընթացակարգի շրջանակներում քննության ուղղորդվող գործերի պլանային ցուցանիշները, կարող են ըստ գործը քննող աշխատակցի ավելի բարձր լինել՝ համեմատած ՓԿՈ սովորական ընթացակարգի շրջանակներում քննության ուղղորդվող գործերի պլանային ցուցանիշների հետ՝ պայմանով, որ առկա են անհրաժեշտ ռեսուրսները, ինչպիսիք են գործիքները (ձևաթղթերը/ձևանմուշները) և, ի թիվս այլնի, վերապատրաստման դասընթացները:

[97] ՄԱԿ ՓԳՀ, *ՓԿՈ-ի ընթացակարգային ստանդարտներ, Բաժին 4. Փախստականի կարգավիճակ ստանալու հայցերի վերաբերյալ որոշման կայացում*, 2020 թվականի օգոստոսի 26, https://bit.ly/3H9WEUB:

[98] Նույն տեղում:

[99] Վերջին տարիներին մեծ թվով գիտաշխատողներ տվյալներ են ներկայացրել բարձր սթրեսային իրավիճակներում կոգնիտիվ գործունեության վրա սթրեսի ազդեցության մասին, այդ թվում՝ բուժանձնակազմի և մարդասիրական օգնություն ցուցաբերող կազմակերպությունների, ինչպես նաև առանձին գործերի, օրինակ՝ ՓԿՈ-ի գործերի քննության մեջ ներգրավված անձնակազմի շրջանում: Տե՛ս հասանելի տեղեկությունները. Յորքի համալսարան, *Վտանգի տակ գտնվող մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանությունը* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 23-ին հետևյալ հղմամբ),www.york.ac.uk/research/impact/protection-of-hrds/: Թեզը ներկայացվել է Լիզա Յակսենի կողմից (Սոցիալական գիտությունների բակալավրի, մագիստրոսի աստիճան) Նոթինգհեմի համալսարան՝ փիլիսոփայության գիտությունների դոկտորի աստիճան հայցելու համար, *Աշխատանքային սթրեսը մարդասիրական օգնության ոլորտի աշխատողների շրջանում, 2018 թվականի փետրվար*,https://bit.ly/3ACxc7y, *«War Trauma Foundation», Պաղեստինում սոցիալական աշխատողների դիմացկունության ձևավորման և մասնագիտական այրման կանխումը. գիտակցման վրա հիմնված՝ անձնակազմի նկատմամբ հոգատարության անձնական փորձը*, https://bit.ly/34i0ZX1, «Ցավի և ախտանիշների կառավարում» ամսագիր. *Հղված պալիատիվ բուժօգնություն ցուցաբերող բժիշկների դիմացկունության ձևավորման մասին. մասնագիտական այրումը կանխելու մոտեցում՝ հիմնված անհատական հմտությունների և աշխատավայրի գործոնի վրա* (Էնթոնի Լ. Բլեք, Կարեն Է. Շտայնհաուզեր, Արիֆ Հ. Քամալ Վիքի Ա. Ջեքսոն), 2016թ., https://bit.ly/3g6mxbS:

[100] ՆՓԽ-ն մշակել է կադրային ռազմավարություններ և գործիքներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել արժանիքների վրա հիմնված կադրերի ներգրավում, ինչպես նաև մեկնարկել է Նոր աշխատողների վերապատրաստման նախագիծ, որի շրջանակներում անցկացվում է մոտավորապես յոթշաբաթյա վերապատրաստում՝ ապահովելու համար, որ բոլոր նոր աշխատողները լսումներ անցկացնելու և որոշումներ կայացնելու առնչությամբ կիրառեն ստանդարտացված մոտեցում: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *«Որոշումների կայացման որակի ապահովման շրջանակը», Մաս 3* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 23-ին հետևյալ հղմամբ), https://irb.gc.ca/en/transparency/qa-aq/Pages/qaf-caq.aspx:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Կանադա

**Կանադայում** ապաստանի տրամադրման համակարգի առաջնահերթությունների հենանիշերը և կատարողականի նպատակային ցուցանիշները սահմանվում են ԱՏՀԿԽ-ի հետ քննարկումների և համաձայնության միջոցով և թարմացվում են ըստ անհրաժեշտության: ԱՏՀԿԽ-ն հանդիպում է (միջինը) եռամսյակը մեկ անգամ, որի ընթացքում քննարկվում է առաջնահերթությունների առնչությամբ արձանագրված առաջընթացը: Առկա է ՆՓԽ-ի ռեեստրում ամենահին գործերը քննելու և վերջնականացնելու հանձնառություն:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Իտալիա

**Իտալիայում** իրականացվել է Միջազգային պաշտպանության ճանաչման հարցերով տարածքային հանձնաժողովների կազմի բարեփոխում՝ համակարգի՝ գործերի քննության կարողություններն ավելացնելու նպատակով: Ուստի, 2018 և 2019 թվականներին ներգրավվել են քաղաքացիական ծառայության մոտ 420 որակավորված աշխատակիցներ, այդ թվում՝ ՓԿՌ-ի ոլորտում արհեստավարժ և մասնագիտացված անձնակազմ: Ապաստանի տրամադրման իրավունքի հարցերով ազգային հանձնաժողովի, ՄԱԿ ՓԳՀ-ի և նախկին՝ Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի (ԱԱԵԳ) համատեղ ջանքերով կազմակերպվել և իրականացվել է շուրջ հինգշաբաթյա վերապատրաստման ծրագիր: 2019 թվականի ընթացքում գործարկվել են ևս հինգ ժամանակավոր տարածքային հանձնաժողովներ, որոնք դադարեցրել են իրենց գործունեությունը նույն տարվա վերջին: Այս միջոցառումների արդյունքում ապաստանի՝ կուտակված բազում չքննված դիմումների թիվը զգալիորեն կրճատվել է՝ 2018 թվականի հունվարին 155,873 գործից 2020 թվականի դեկտեմբերին հասնելով 33,636 գործի (- 78,4 տոկոս):[101]

2021 թվականի մարտին Ազգային հանձնաժողովի կողմից աշխատանքի է ընդունվել մոտ 150 ժամանակավոր աշխատող և մեկ տարով գործուղվել մարզային ոստիկանության գլխավոր վարչություն և տարածքային հանձնաժողովներ՝ աջակցելու դիմումների հաշվառման աշխատանքներում և ՓԿՌ-ի գործերի քննության մեջ ներգրավված տարբեր սուբյեկտների միջև հաղորդակցմանը՝ ընդհանուր առմամբ նպատակ ունենալով նպաստել ապաստանի տրամադրման արդար և արդյունավետ համակարգին: Ազգային հանձնաժողովի, Պետական անվտանգության դեպարտամենտի, ՄԱԿ ՓԳՀ-ի և ԱԱԵԳ-ի կողմից մշակվել և ժամանակավոր աշխատողների համար իրականացվել է համատեղ վերապատրաստման ծրագիր:

## Երկրի գործելակերպի օրինակ՝ Իսպանիա

**Իսպանիայում** և վերջինիս սահմանային անցակետերում իրականացվող արագացված ընթացակարգի շրջանակներում (տե՛ս վերևում, պարբերություն 19) կարողությունների զարգացման, այդ թվում՝ ընթացակարգում ներգրավված համապատասխան դերակատարների (ոստիկանություն, ապաստանի տրամադրման գործերով զբաղվող աշխատողների գրասենյակ, իրավաբաններ, թարգմանիչներ) ընթացակարգային երաշխիքների առնչությամբ վերապատրաստման շարունակական անհրաժեշտությունը մտահոգություններ է առաջացրել բոլոր դերակատարների շրջանում՝ կապված օդանավակայանում և կալանքի կենտրոններում աշխատող ոստիկանության ծառայողների շրջանում գրանցված հոսունության բարձր ցուցանիշի հետ: Այս խնդիրները լուծելու համար Իսպանիայի ոստիկանությունը և ապաստանի տրամադրման հարցերով զբաղվող իշխանությունները պարբերաբար ներգրավվում են ՄԱԿ ՓԳՀ-ի հետ կարողությունների զարգացման նախագծերում, որոնք նաև լուծում են սահմանային անցակետերում իրականացվող արագացված ընթացակարգի այն մյուս դերակատարների վերապատրաստման կարիքները, որոնք աշխատում են օդանավակայանում ու միգրանտների կալանքի կենտրոններում և Մելիլյայի ցամաքային սահմանային կետում: Վերապատրաստման դասընթացներ են անցկացվում մարդու իրավունքների և փախստականների իրավունքի միջազգային սկզբունքների, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների և Իսպանիայի ապաստանի տրամադրման ընթացակարգում նրա դերի մասին թեմաներով: Վերապատրաստման դասընթացներ են անցկացվում նաև հարցազրույցի վարման տեխնիկաների և թարգմանիչների հետ աշխատանքի թեմաներով: ՄԱԿ ՓԳՀ-ի համագործակցությամբ 2020 թվականին մեկնարկեց առցանց վերապատրաստման դասընթաց՝ ապաստանի տրամադրման ընթացակարգերի հետ առնչություն ունեցող ոստիկանության ծառայողների համար: ՄԱԿ ՓԳՀ-ն նույնպես պարբերաբար մասնակցում է ապաստանի գործերով զբաղվող աշխատողների, թարգմանիչների և իրավական օգնություն տրամադրող անձանց կարողությունների զարգացման նախաձեռնություններին:

[101] Commissione Nazionale per il diritto di asilo, Dati Asilo, Anni 2015 – 2020, https://bit.ly/3KTcAwM:

### Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեդիա

**Շվեդիայում** ՇՄԳ-ն շարունակում է աշխատել թվերի և ընդունված որոշումների ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումների վրա, որոնք ներկայացվում են Շվեդիայի կառավարությանը: ՇՄԳ-ում կիրառվում են աշխատանքի մի քանի ելակետեր և նպատակներ, որոնք դիտարկվում և գնահատվում են զուգահեռաբար, այդ թվում՝ ժամանակով սահմանափակված գործընթացի չափումը (տե՛ս վերևում, պարբերություն 19): Սակայն ՇՄԳ-ն նշել է, որ որպես կորպորատիվ մոտեցում, պետք է ավելի քիչ ուշադրություն դարձվի արտադրական նպատակների վրա, և շեշտը դրվի համակարգի կառուցման այլ ոլորտների վրա, ինչպիսիք են անձնակազմի կարողությունների զարգացումը՝ որպես արդյունավետության բարձրացման միջոց:

40. Գործերի կառավարման համակարգերի և փորձնական նախագծերի/նորարարությունների փոփոխությունների **վերահսկումը և որակի ապահովումն** էական նշանակություն ունեն ապաստանի տրամադրման համակարգի արդարությունը, արդյունավետությունը, հարմարվողականությունը և անաչառությունը խթանելու համար: Կանադայի գործելակերպի օրինակը (ներկայացված է ստորև) ցույց է տալիս որակի ստուգման և հարմարվողական հաստատությունների կարևորությունը:[102]

41. Ավելին, կարևոր է ապահովել **խարդախության ռիսկերը կառավարելու և նվազեցնելու** մեխանիզմների առկայությունը: Այդ նպատակով կարևոր է ներդնել բողոքարկման կուռ մեխանիզմներ, կազմակերպել վերապատրաստման դասընթացներ գործընթացում ներգրավված անձնակազմի համար, ապահովել ապաստան հայցող անձանց հետ արդյունավետ խորհրդատվություն և հաղորդակցություն, ինչպես նաև գործընթացի գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ բովանդակալից հաղորդակցություն: Որպես լավագույն գործելակերպ՝ առաջընթացը գնահատելու և ապաստանի տրամադրման գործընթացի տարբեր փուլերում բացերը վերհանելու համար անհրաժեշտ է իրականացնել գնահատումներ և կատարողականի չափման նախաձեռնություններ՝ համակարգում կատարված փոփոխություններն ուղղորդելու և որոշելու համար, թե ինչ ֆինանսավորում է անհրաժեշտ պատշաճ կայունության համար:

### Երկրի գործելակերպի օրինակ՝ Կանադա

Որոշումների կայացման որակի ապահովման շրջանակի միջոցով ՆՓԽ-ն ձգտում է վերահսկել և ապահովել բարձրորակ և արդար որոշումների կայացում՝ «Պլանավորի՛ր, կատարի՛ր, ստուգի՛ր, չափի՛ր և շտկի՛ր» սկզբունքի վրա խարսխված շարունակական բարելավման ցիկլի հիման վրա: Այս մոտեցման գործընթացը ներկայացված է ՆՓԽ-ի *Որոշումների կայացման որակի ապահովման շրջանակի զեկույցի 7-րդ էջում:*[103]

---

102 ԵՄ-ում ապաստանի տրամադրման գործընթացի որակի ապահովման նախաձեռնությունների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի Ապաստանի տրամադրման գործընթացի որակի հետագա բարելավումը ԵՄ-ում (ՌՀԲ). Նախագծի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը, 2011 թվականի սեպտեմբեր, www.refworld.org/docid/4e85b41f2.html, ՄԱԿ ՓԳՀ, *Ապաստանի տրամադրման համակարգի որակի ապահովման և գնահատման մեխանիզմ (ԱՏՀՈԱԳՄ). Ամփոփ հաշվետվություն, 2010 թվականի փետրվար*, www.refworld.org/docid/56a08dd49.html; ՄԱԿ ՓԳՀ, Ապաստանի տրամադրման ընթացակարգերի կատարելագործում. համեմատական վերլուծություն և առաջարկներ օրենքի ու պրակտիկայի համար. *Ապաստանի տրամադրման ընթացակարգերի մասին հրահանգի հիմնական դրույթների վերաբերյալ մանրամասն հետազոտություն*, 2010 թվականի մարտ, www.refworld.org/docid/4c63e52d2.html:

103 ՆՓԽ, *Որոշումների կայացման որակի ապահովման շրջանակ* (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 23-ին հետևյալ հղմամբ), https://bit.ly/34hbxWl:

| • Պլանավորի՛ր | • Կատարի՛ր | • Ստուգի՛ր և չափի՛ր | | • Շտկի՛ր |
|---|---|---|---|---|
| • Վերապատրաստման և ուսուցողական կարիքների վերհանում և առաջնահերթությունների սահմանում<br>• Որակի գնահատման և աուդիտի անցկացման պլանի որոշում և դրանում առաջնահերթությունների սահմանում<br>• Որոշումների կայացման ռազմավարությունների սահմանում | • Արժանիքների վրա հիմնված աշխատանքի ընդունում<br>• Վերապատրաստման դասընթացներ նոր աշխատակիցների համար<br>• Մասնագիտական զարգացում<br>• Ուսուցում<br>• Իրավաբանական ծառայության կողմից պատճառների գնահատում<br>• Որոշումների կայացման և աջակցման գործիքներ<br>• Որոշումների կայացման գործընթացում հետևողականության հարցերով խմբեր<br>• Մասնագիտացված թիմեր/վերապատրաստում*<br>• - Գենդերով պայմանավորված հետապնդումների հետ կապված հայցեր | • Կատարողականի կառավարում<br>• Ներքին և արտաքին հաշվետվություններ<br>• Բողոքարկում և (կամ) դատական վերանայում<br>• Բարձրագույն դատական որոշումների վերանայում<br>• Որակի ապահովման կենտրոններ* | • Անկախ աուդիտ<br>• Ներքին գնահատումներ<br>• Արտաքին աուդիտ<br>• Անդամների կողմից բողոքակման արդյունքներ | • Կառավարման գործողությունների պլանի մշակում և կիրառում (Աուդիտ, անկախ աուդիտ)<br>• Վերապատրաստման ծրագրերի մշակում<br>• Որոշումների կայացման ռազմավարությունների մշակում և իրականացում<br>• Թերությունների շտկմանն ուղղված առանձին ծրագրերի իրականացում |
| Շահագրգիռ անձանց ներգրավվումը | | | | |

Որակի ապահովման նախաձեռնությունը խթանելու համար համապատասխանաբար ՓՊԲ-ում և ՓԲԲ-ում ստեղծվել են որակի ապահովման երկու կենտրոն: Վերջիններս լիազորված են դիտանցելու միտումները, վերհանելու և լուծելու ուշադրություն պահանջող ոլորտներում առկա խնդիրները, այդ թվում՝ (i) վերանայելու և թարմացնելու նախազահի աշխատանքի ուղեցույցները, (ii) ապահովելու լրացուցիչ պարտադիր վերապատրաստում փախստականների գործերով որոշում կայացնող բոլոր անձանց համար, այդ թվում՝ գենդերային բռնության թեմայով, (iii) մասնագիտական վերապատրաստում անցած հատուկ թիմի ստեղծում՝ փախստականներին ապաստանի տրամադրման հայցերը լսելու և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու համար և (iv) ՆՓԽ-ի հանրային բողոքների գործընթացի գնահատում երրորդ կողմի կողմից: Որակի ապահովման կենտրոնների աշխատանքը, ի թիվս այլ ոլորտների, հիմնված է որակը բարձրացնող այնպիսի նախաձեռնությունների, գործիքների և մեխանիզմների վրա, ինչպիսիք են վերապատրաստման գործընթացի բարելավումը, ուսուցումը, կատարողականի կառավարումը և որոշումների կայացման ռազմավարությունները:

ՆՓԽ-ն էլ ավելի շատ ջանքեր է գործադրել, որպեսզի ՓԲԲ-ում որոշումների կայացման ռազմավարությունների իրականացման միջոցով խթանի որոշումների կայացման հետևողական և արդյունավետ գործընթացը՝ փախստականների մասին իրավունքի հայեցակետերը պարզաբանելու համար՝ թարմացնելով, կառավարության կողմից դիտարկման համար, Ներգաղթի հարցերով բողոքարկման բաժնի գործելակերպի կանոնները և շարունակելով Ներգաղթի հարցերով բաժնում միջոցների բարելավումը՝ ի պատասխան երրորդ կողմի կողմից՝ երկարաժամկետ կալանքի վերանայման արդյունքների ստուգման:[104] Որպես որակի պահպանման և հսկողություն միջոց՝ անցկացվում են թե՛ ներքին գնահատումներ, թե՛ անկախ գնահատումներ և թե՛ արտաքին աուդիտներ:

ՆՓԽ-ի Որոշումների կայացման որակի ապահովման շրջանակը վերաբերում է վերապատրաստմանը, ուսուցմանը և մասնագիտական զարգացմանը՝ որպես իր հիմնական բաղադրիչներ: ՆՓԽ-ն մշակել է նաև կադրային ռազմավարություններ և գործիքներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել արժանիքների վրա հիմնված աշխատանքի ընդունում, ինչպես նաև մեկնարկել է Նոր աշխատողների վերապատրաստման նախագիծ, որի շրջանակներում անցկացվում է մոտավորապես յոթշաբաթյա վերապատրաստում՝ ապահովելու համար, որ բոլոր նոր աշխատողները լսումներ անցկացնելու և որոշումներ կայացնելու առնչությամբ կիրառեն ստանդարտացված մոտեցում:

Ազնվության և հաշվետվողականության ամրապնդման նպատակով ՆՓԽ-ն նախաձեռնել է նաև իր բողոքարկման գործընթացի ամբողջական վերանայում՝ դիտարկելու համար, թե ինչն է լավ աշխատում և

ինչը կարող է բարելավվել: Գնահատման արդյունքների հիման վրա միջոցներ են ձեռնարկվել բողոքարկման գործընթացն էլ ավելի մատչելի դարձնելու համար, այդ թվում՝ ՆՓԽ-ի կայքում տեղադրված տեղեկությունների և լրացուցիչ առցանց բողոքարկման միջոցով, որը հեշտ է օգտագործման համար: Միջոցներ են ձեռնարկվել նաև կողմերի հետ հաղորդակցության բարելավման, կիրառվող չափանիշների հստակեցման և տարեկան հաշվետվությունների խթանման տեսանկյունից գործընթացի թափանցիկությունը բարելավելու համար: Վերջապես, արդյունավետությունը խթանելու նպատակով սահմանվել են ծառայությունների ժամանակին մատուցման ստանդարտներ:

42. **Տեխնոլոգիաները** գնալով զարգանում են և ճիշտ կիրառման դեպքում կարող են նպաստել ապաստանի տրամադրման համակարգերում գործերի քննության արդյունավետության ու անաչառության բարձրացմանը: Ապաստանի տրամադրման ազգային համակարգերը, քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները և ՄԱԿ ՓԳՀ-ն արդեն երկար ժամանակ է աշխատում են նորարարական և նոր տեխնոլոգիաների կատարելագործման և կիրառման ուղղությամբ՝ տեղեկությունների հասանելիությունը, թվային տեխնոլոգիաների կիրառումը և տվյալների համակարգի փոխգործելիությունը բարելավելու նպատակով (տե՛ս վերևում, պարբերություն 12): Կորոնավիրուսային համավարակն ամբողջ աշխարհում գործող՝ ապաստանի տրամադրման բազմաթիվ համակարգերի ստիպեց էլ ավելի հարմարեցնել իրենց գործընթացները և օպերատիվ կերպով մշակել նոր ու նորարարական մեխանիզմներ՝ կարանտինի կամ առողջապահության այլ միջոցների պայմաններում ապաստանի տրամադրման գործընթացները շարունակելու նպատակով:

### Երկրի գործելակերպի օրինակ՝ Շվեդիա

ՇՄԳ-ն պաշտպանված կայքի[105] միջոցով մշակել է էլեկտրոնային պորտալ, որը հնարավորություն է տալիս հանրային պաշտպանին (օրինական ներկայացուցչին) առցանց ներկայացնել ապաստանի դիմումներին վերաբերող փաստաթղթեր ու ապացույցներ: Պորտալը հնարավորություն է տալիս փոխանակել տեղեկություններ շահագրգիռ անձանց միջև, սահմանել հանդիպումների անցկացման ժամկետներ, ինչպես նաև ՇՄԳ-ի աշխատակիցների հետ էլեկտրոնային պորտալի միջոցով կազմակերպել հանդիպումներ՝ օգտագործելով համաժողովի մասնակցության կոդը: Էլեկտրոնային պորտալը հնարավորություն է տալիս նաև մանրակրկիտ կերպով հետևել ներկայացված փաստաթղթերի ընթացքին, մշտադիտարկել ապաստանի տրամադրման դիմումի կարգավիճակը և հաշվարկել փոխհատուցման գումարը:

[104] Տե՛ս ՆՓԽ-ի գործունեության ծրագիրը, *2020-21 թվականների գործունեության ծրագիրը. Կանադայի Ներգաղթի և փախստականների հարցերով խորհուրդ (irb.gc.ca)*, (մուտքը՝ 2022 թվականի հունվարի 23-ին հետևյալ հղմամբ՝), https://irb.gc.ca/en/reports-publications/planning-performance/Pages/departmental-plan-report-2021.aspx

[105] Էլեկտրոնային պորտալի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս հետևյալ հղմամբ՝ www.migrationsverket.se/Andra-aktorer/Offentliga-bitraden/E-tjanst-for-bitraden.html:

43. Որպես կորոնավիրուսային համավարակին արձագանք՝ ապաստանի տրամադրման բազմաթիվ ազգային համակարգեր սկսեցին փորձնական ձևով կիրառել և իրականացնել տեսա- և աուդիոձայնագրություններ՝ ապաստանի տրամադրման վիրտուալ հարցազրույցներ/լսումներ անցկացնելու և հեռավար թարգմանություն ապահովելու համար:[106] Մշակվեցին նաև ուղեցույցներ ԵՄ+ ապաստանի տրամադրման համակարգերի շրջանակներում հեռավար հարցազրույցներ անցկացնելու լավագույն փորձի ձևավորման համար:[107] Ընդհանուր առմամբ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է, որ դեմ առ դեմ հարցազրույցները մնան ՓԿՈ-ի համար անցկացվող հարցազրույցների ամենանպատակահարմար միջոցը: Այնուամենայնիվ, հեռավար հարցազրույցները և թարգմանությունը որոշ դեպքերում կարող են նպատակահարմար լինել՝ ելնելով հանրային առողջության և անվտանգության պահանջների նկատառումներից, ինչպես նաև այն դեպքերում, երբ երկար տարածությունները կարող են հանգեցնել հարցազրույցի անցկացման գործընթացի ձգձգմանը, եթե այլ պարագայում պահպանվում են անվտանգության միջոցներն ու ընթացակարգային ստանդարտները:[108]

44. Դիմումների քննության նոր հեռավար համակարգի փորձարկումն ու գնահատումը և դրանից քաղված դասերի կիրառումը կօգնի գնահատել արդյունավետությունը և վերհանել ռիսկերը՝ մինչև ապաստանի տրամադրման համար անցկացվող վիրտուալ հարցազրույցները/լսումները որպես լրելյայն նոր աշխատանքային մեթոդ դիտարկելը: Նման մոտեցումն օգնում է կիրառել մեղմացուցիչ միջոցներ և (կամ) առաջարկել այլընտրանքներ, այդ թվում՝ պատշաճ իրավական ընթացակարգի ստանդարտների պահպանմամբ: Նման նոր մեթոդների հարմարեցման ու ներդրման հարցի դիտարկումը նույնպես պետք է տեղի ունենա համագործակցային ու խորհրդատվական ձևաչափով, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության և ապաստան հայցող անձանց նկատմամբ բավարար չափով թափանցիկության պայմաններում:[109]

---

106 ՄԱԿ ՓԳՀ, *Հեռավար հարցազրույցների անցկացում. Գործնական հանձնարարականներ Եվրոպայի պետությունների համար*, 2020 թվականի հունիսի 9, www.refworld.org/docid/5ee230654.html:

107 ԱԵՄ-ի *Ապաստանի տրամադրման վերաբերյալ զեկույց, 2021թ., Ապաստանի դիմումների քննությունն առաջին ատյանում,* https://bit.ly/3ABxjjW:

108 ՄԱԿ ՓԳՀ, *Հիմնական ընթացակարգային նկատառումները փախստականի կարգավիճակի որոշման հարցում ապաստան հայցողների հեռահար մասնակցության վերաբերյալ*, 2020 թվականի մայիս, www.refworld.org/docid/5ebe73794.html և ՄԱԿ ՓԳՀ, *ՓԿՈ-ի ընթացակարգային ստանդարտներ, Բաժին 4. Փախստականի կարգավիճակ ստանալու հայցերի վերաբերյալ որոշման կայացում*, 2019 թվականի օգոստոս, www.refworld.org/docid/5e87075d0.html:

109 ՆՓԽ-ն պատրաստել է գնահատման զեկույց՝ Փախստականների գործերով լսումներում տեսակոնֆերանսի հնարավորության վերաբերյալ, որը լրացուցիչ տեղեկություններ է տրամադրում առանձին գործերի քննության համատեքստում նոր մեթոդների թեստավորման և փորձարկման արդյունքների վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հետևյալ կայքերը՝ https://bit.ly/32JyeSY և https://irb-cisr.gc.ca/en/transparency/reviews-audit-evaluations/Pages/VideoRespRep.aspx:

## Եզրակացություն

45. Այս աշխատության հիմնական նպատակն է փաստաթղթավորել ապաստանի հարցերով զբաղվող ազգային իշխանության մարմինների կողմից նախաձեռնված համապատասխան տարբերակներն ու միջոցները՝ ապաստանի դիմումների արդյունավետ քննությունն ապահովելու համար: Այդկերպ աշխատությամբ խրախուսվում է գնալով ավելացող լավագույն գործելակերպերի կարևորությունը, որոնցով ապաստանի հարցերով զբաղվող ազգային իշխանության մարմինները կարող են ուղղորդվել՝ միջազգային պաշտպանությունը երաշխավորելու և պատասխանատվությունը կիսելու հրամայականին համապատասխան: ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է լավագույն գործելակերպերի որդեգրումը, որոնք կարող են տեղայնացվել տարածաշրջանային կամ ազգային մակարդակներում՝ որպես բնակչության տեղաշարժերին պետությունների գործնական ու օպերատիվ արձագանքման միջոցների մաս:

46. Ինչպես ցույց են տալիս այս աշխատության մեջ բերված օրինակները, ապաստանի դիմումները կարելի է առավել արդյունավետ քննել համակարգի կառուցվածքի բարելավման, համակարգային բնույթի խնդիրների լուծման, ինչպես նաև նոր ու նորարարական գործիքների ու միջոցների փորձարկման ու կիրառման պատրաստակամության միջոցով: Համապատասխան դերակատարների, ինչպես օրինակ՝ սահմանային հսկողության ծառայության, ոստիկանության ու ապաստանի հարցերի հետ առնչություն ունեցող մարմինների միջև աշխատանքների սերտ համակարգումը, ինչպես նաև ապաստանի տրամադրման գործընթացի սկզբից իրավաբանական օգնություն տրամադրող անձանց և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունն այդ գործընթացին կարող են այն առավել արագ ու արդար դարձնել: Հաշվառման համապատասխան գործընթացների ներդնումը, տվյալների առաջնային բեռնումն ու դրանց կառավարումը, ինչպես նաև գործերի տեսակավորումը կնպաստեն արդարության ու ծախսարդյունավետության հետագա ապահովմանը:

47. ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկմամբ ապաստանի տրամադրման համակարգերը կարող են կայուն և ճկուն լինել՝ միևնույն ժամանակ պահպանելով գործերի քննության գործընթացի արդարությունն ու անաչառությունը: Կուռ մեխանիզմների առկայությունը հնարավորություն է տալիս պետություններին արդյունավետորեն լուծել կուտակված բազում չքննված գործերի հարցը՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով ամբողջ աշխարհում լայնածավալ բռնի տեղահանման համատեքստում նոր ժամանող անձանց առնչությամբ ստեղծված իրավիճակներին:

# Հավելված 1. Գծապատկեր

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվառում | Նույնականացում | Տվյալների առաջնային բեռնում/հաշվառում | | | Սքրինինգ | Ծառայությունների մատուցում սկզբնական փուլում | Թվային համակարգերի միջոցով տվյալների պաշտպանված տրամադրում համապատասխան գերատեսչություններին |
| | | • Ինքնության հաստատում<br>• Ապաստան հայցողի կատեգորիայի որոշում<br>• Ընտանեկան հարաբերություններ<br>• Փախուստի պատճառներ | • Ուղևորության երթուղի<br>• Մեկ այլ երկրում ապաստանի տրամադրման համար ներկայացված դիմում | • Կենսաչափական տվյալներ<br>• Լուսանկարներ<br>• Լրացուցիչ փաստաթղթեր | • Ինքնության հաստատում<br>• Անվտանգության խնդիրներ<br>• Խարդախություն | • Խորհրդատվություն<br>• Իրավաբանական օգնություն/ներկայացուցչություն<br>• Բժշկական/սոցիալական ծառայություններին ուղղորդում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գործերի տեսակավորում և դրանց քննություն | Գործերի ծավալի վերլուծություն | Դասակարգում՝ ըստ խմբերի, օր.՝ | Ուղղորդում արագացված, պարզեցված կամ սովորական ընթացակարգերի շրջանակներում քննության | Առաջնահերթությունների սահմանում՝ ըստ հանգամանքների |
| | • Ծագման երկրի և ապաստան հայցողների կոնկրետ կատեգորիայի անձանց հաշվի առնելը<br>• Որոշված խմբերը պետք է նման լինեն ընդհանուր բնութագրերով և պաշտպանության տրամադրման ցուցանիշներով<br>• Պաշտպանության տրամադրման բարձր/ցածր ցուցանիշներ | • Ակնհայտորեն հիմնավորված/անհիմն<br>• Ազգային պատկանելիության<br>• Բարդության աստիճան | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պատշաճ իրավական գործընթացի ստանդարտները (ոչ սպառիչ ցանկ) | Անձնական հարցազրույցի ժամանակ կամ այլ կերպ լսված լինելու իրավունք | Ապաստանի տրամադրման ընթացակարգի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունք | Դիմումատուի համար հասկանալի լեզվով ընթացակարգի և մասնակցելու իրավունք | ՄԱԿ ՓԳՀ-ի կամ գործընկերոջ (գործընկերների) հետ կապ հաստատելու և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից դիմումատուի հետ կապ հաստատելու իրավունք | Բացասական որոշումների դեպքում ծանուցում և հիմնավորված որոշում ստանալու իրավունք | Իրավաբանական օգնություն և իրավաբանական ներկայացուցչություն ունենալու իրավունք | Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի/բողոքարկման իրավունք | Մինչև վերջնական որոշման կայացումը երկրում մնալու իրավունք |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Համակարգային խնդիրներ | Համապատասխան շահագրգիռ կողմերի միջև համագործակցություն և դրանց ներգրավվածություն | Պատշաճ պլանավորում և ռեսուրսների ճիշտ բաշխում | Վերահսկողության, վերանայման, բողոքարկման հուսալի մեխանիզմներ և ռիսկերի նվազեցում | Գործերի կառավարման արդյունավետ, փոխգործելի համակարգեր | Մասնագիտացված վերապատրաստման ծրագրեր և նպատակաուղղված ուղեցույցներ | Տեխնոլոգիաների և նորարարության կիրառում՝ գործերի քննության գործընթացը բարելավելու համար |

# Հավելված 2. Հապավումներ

| Հապավումների ցանկ | |
|---|---|
| ԱԾԵՏԱՀՓԿ | Ավստրիայի՝ Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների և ապաստանի հարցերով հետազոտությունների ու փաստաթղթերի կենտրոն |
| ԱՀԿԱԽ | Ապաստանի համակարգի կարողությունների աջակցման խումբ մեխանիզմ |
| ԱՀԿ | Ապաստանի հարցերով հետազոտական կենտրոն |
| ՀՔՆ | Հայցերի քննության հարցերով աշխատակից |
| ԱՏՇ | Ապաստանի վերաբերյալ տեղեկությունների շտեմարան |
| ԿՓԻԱ | Կանադայի փախստականների հարցերով զբաղվող իրավաբանների ասոցիացիա |
| ԿՍԾԳ | Կանադայի սահմանապահ ծառայությունների գործակալություն |
| ԾԵՏ | Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություններ |
| ԴՓԽ | Դանիայի փախստականների հարցերով խորհուրդ |
| ԱԱԵԳ | Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակ |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԱԵՄԳ | Ապաստանի հարցերով Եվրոպական միության գործակալություն |
| ՓԱԵԽ | Փախստականների և արտաքսվածների հարցերով եվրոպական խորհուրդ |
| ԴՎԴ | Դաշնային վարչական դատարան |
| Բառարան | ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակներում ՓԿՈ ընթացակարգերի նկատմամբ կիրառելի՝ գործերի քննության մեթոդների, եզրույթների և հասկացությունների հուշաթերթ և բառարան |
| ՓԳՊ | Փախստականների վերաբերյալ գլոբալ պայմանագիր |
| ՀՎՄԿ | Հայցերի վերլուծության միավորված կենտրոն |
| ՄՄԿ | Միգրացիայի միջազգային կազմակերպություն |
| ԿՆՓՔԾ | Կանադայի ներգաղթի, փախստականների և քաղաքացիության հարցերով ծառայություն |
| ՆՓԽ | Կանադայի Ներգաղթի և փախստականների հարցերով խորհուրդ |

| | |
|---|---|
| **NGI** | Գործերի կառավարման համակարգի միջերես. NOVA-GCMS միջերես |
| **ՀԿ** | Հասարակական կազմակերպություններ |
| **ԱԳ** | Ապաստանի հարցերով գրասենյակ |
| **ՓԲԲ** | Փախստականների հարցերով բողոքարկման բաժին |
| **ՓՊԲ** | Փախստականների պաշտպանության հարցերով բաժին |
| **ՓԿՈ** | Փախստականի կարգավիճակի որոշում |
| **ՍԱԸ-ներ** | Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր |
| **ՄԱԿ ՓԳՀ** | Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատար |
| **ՄՊՔ** | Միգրացիայի հարցերով պետական քարտուղարություն |
| **ՇՄԳ** | Շվեդիայի միգրացիոն գործակալություն |

UNHCR
The UN Refugee Agency

UNHCR
The UN Refugee Agency